ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հիմնարար սկզբունքներ Գերմանիայի համար

Հիմնարար սկզբունքների ծրագիր՝
հաստատված
21-րդ կուսակցական համագումարի կողմից
Հաննովեր, 2007 թ., դեկտեմբեր, 3 – 4

ՔԴՄ

© Տարածաշրջանային Ծրագիր Քաղաքական Երկխոսություն Հարավային Կովկաս
Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ

Բովանդակություն

Ներածություն.
Քրիստոնեաժողովրդավարական քաղաքականության նշանակությունը Գերմանիայի համար 21-րդ դարում 5
I. Մենք՝ քրիստոնյա ժողովրդավարներս..... 9
1. Ովքեր ենք մենք: Մարդը և հիմնարար արժեքները՝ ըստ ՔԴՄ-ի 9
2. Հասարակության մեր իդեալը..... 18
Անձի ազատ զարգացումը 19
Մեր հասարակության համերաշխությունը..... 21
II. Մեր ժամանակների մարտահրավերները. դերակատարություն ստանձնելու ՔԴՄ-ի հավակնությունը 25
1. Մեր ժամանակների մարտահրավերները 25
Վտանգված արարչագործություն 26
Գլոբալացված աշխարհ 27
Տեղեկացված հանրության պահանջները..... 28
Վտանգված անվտանգություն/ապահովություն..... 30
Ժողովրդագրական փոփոխություններ 31
2. Գերմանիան որպես հնարավորությունների հասարակություն. ապրել ազատ և ապահով 32
III. Ամուր ընտանիքներ, մարդասեր հասարակություն..... 36
1. Նոր կենսաձևեր. սերունդների նոր համակեցություն 36
2. Ամրացնելով մեր հասարակության հենքը. ընտրության ազատություն՝ ընտանիքներին 40
IV. Գերմանիա՝ կրթության և մշակույթի երկիր: Ի բավարարումն տեղեկացված հանրության պահանջմունքների 49
1. Ավելի շատ կրթություն բոլորի համար. հենց սկզբից և ողջ կյանքի համար..... 49
2. Հետաքրքրասեր Գերմանիա. գիտահետազոտությունը՝ բարեկեցության երաշխավոր 61
3. Մշակույթը որպես ազգային ինքնության և աշխարհի հետ հարաբերվելու պատրաստակամության արտահայտություն..... 65

V. Համաշխարհայնացման գործընթացով պայմանավորված փոփոխություններ սոցիալ-շուկայական տնտեսակարգում..... 70
1. Սոցիալ-շուկայական տնտեսակարգի սկզբունքները հանուն բարեկեցության, բաշխվածության և ապահովության 71
2. Սոցիալ-շուկայական տնտեսակարգը համաշխարհայնացման պայմաններում 75
3. Տնտեսություն և աշխատանք 80
4. Նոր մոտեցում ժողովրդագրական փոփոխություններին. սոցիալական ապահովություն բոլոր սերունդներին 89
5. Վստահելի ֆինանսներ, վստահելի Գերմանիա 99
6. Զարգացում՝ պատմական հաջողությունների հիման վրա: Աջակցություն դաշնության նորանդամ հողերին 104
VI. Արարչագործության և կյանքի պահպանում՝ Հանուն շրջակա միջավայրի 109
1. Ի պաշտպանություն մարդու արժանապատվության. Կյանքի սկզբից մինչև վերջ 109
2. Բնական կենսապայմանների/կենսահիմքերի պաշտպանություն..... 110
3. Հեռանկար՝ գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի համար..... 120
VII. Ակտիվ քաղաքացիներ, հզոր պետություն, աշխարհի հետ հարաբերվելու պատրաստ երկիր 123
1. Քաղաքացիական հասարակության հզորացում. անձնական նախաձեռնությունների խրախուսում..... 123
2. Հանուն հզոր պետության. ազատության և անվտանգության երաշխիքներ քաղաքացիներին 127
3. Գերմանիան՝ ինտեգրացիոն երկիր 138
VIII. Ի կատարումն Գերմանիայի ստանձնած պատասխանատվության և ի պաշտպանություն նրա շահերի 141
1. Եվրոպան Գերմանիայի շանսն է 141
2. Հանուն ազատության և խաղաղության. Գերմանիայի դերն աշխարհում 152
ՔԴՄ-ի հիմնարար ծրագրի հասկացությունների ցանկ 162

Ներածություն

Քրիստոնեաժողովրդավարական քաղաքականության նշանակությունը Գերմանիայի համար 21-րդ դարում

Մենք՝ քրիստոնյա ժողովրդավարներս, գիտակցելով մեր պատասխանատվությունն Աստծո և մարդկանց առջև, սույն հիմնարար ծրագրով մեր հավատարմությունն ենք փաստում մեր արժեքներին ու նպատակներին և պատասխաններ տալիս մեր ժամանակի մարտահրավերներին:

Քրիստոնեադեմոկրատական միությունը (ՔԴՄ) կենտրոնամետ ժողովրդական կուսակցություն է: Նրանում մինչ այժմ էլ կենսունակ են այն քաղաքական հոսանքները, որոնցից 1945 թվականից հետո առաջացավ կուսակցությունը՝ քրիստոնեասոցիալական, ազատական և արժեքային-պահպանողական: Մենք առաջնորդվում ենք մարդու քրիստոնեական իդեալով, նրա անձեռնմխելի արժանապատվությամբ և դրանից բխող ազատության, համերաշխության և արդարության հիմնարար արժեքներով: Մենք ձգտում ենք ճշգրիտ հարաբերակցության հասնել սույն հիմնարար արժեքների միջև:

Փոփոխվող աշխարհում մեր խնդիրը դարձյալ արժեքների և իրականության համընկալումն ու իրավիճակին համապատասխան գործելն է: Մարդու սխալականությունն ընդունելը մեզ զերծ

է պահում քաղաքականությունը գաղափարայնացնելու վտանգից և ցույց է տալիս քաղաքականության սահմանները:

Մեր Միությունն ամենավճռական որոշումներն է կայացրել Գերմանիայի Դաշնային Հանրապետության պատմության մեջ: Այսօր նույն վճռականությամբ մենք հաղթահարում ենք 21-րդ դարի մարտահրավերները:

1949 թվականից սկսած՝ ՔԴՄ-ն սոցիալ-շուկայական տնտեսակարգի հաստատման, արևմտյան կողմնորոշման և եվրոպական միասնության վերաբերյալ իր ռազմավարական հիմնարար որոշումներով դրեց մեր երկրի ազատ, արդար և դինամիկ զարգացման հիմքերը:

Չնայած խոչընդոտներին՝ ՔԴՄ-ն մշտապես հարազատ է մնացել Գերմանիայի վերամիասնության գաղափարին: Եվ երբ հնարավորությունն ի հայտ եկավ, բաժանման դառը տասնամյակներից հետո մեր հայրենիքի միասնությունն իրականություն դարձավ ՔԴՄ-ի ղեկավարությամբ՝ խաղաղ և ազատ ճանապարհով: Գերմանիան կարող է հպարտանալ այս հարցում դրսևորած իր ջանքերով: ՔԴՄ-ն իր վճռորոշ ավանդն ունի այս հաջողության մեջ:

Գերմանիան պատմության մեջ առաջին անգամ շրջապատված է միմիայն գործընկեր ու բարեկամ երկրներով: Դրանում իրենց զգալի ավանդն են ունեցել Ամերիկայում և Եվրոպայում մեր ընկերները: Երբևէ Եվրոպայի հիմնադիր հոր երազանքն այսքան մոտ չի եղել իրականությանը. խաղաղության և ազատության մեջ միավորված Եվրոպա՝ տնտեսապես հզոր, սոցիալական մեծ պատասխանատվությամբ և պատրաստ՝ էլ ավելի մեծ պատասխանատվություն ստանձնելու համաշխարհային քաղաքականության մեջ: Փոխադարձ վստահությունն ու վստահելի գործընկերությունը մեզ ուղեկցում են մեր մայրցամաքի հետագա միավորման և զարգացման ջանքերում:

Պատասխանատվության վրա խարսխված տնտեսական և հասարարական այս ազատական կարգը միջազգային ասպարեզում կարգապահական քաղաքականության մեր մոդելն է: Գլոբալիզացիան պահանջում է սոցիալ-շուկայական տնտեսակարգի նոր ձևաչափեր և հնարավորություն է տալիս համաշխարհային կտրվածքով սոցիալական և բնապահպանական նոր չափանիշներ սահմանել:

Հաշվի առնելով 21-րդ դարի մարտահրավերները՝ անհրաժեշտ է անվտանգության նորովի ընկալում. այն հավասարապես ընդգրկում է ներքին և արտաքին անվտագությանը նոր սպառնալիքներով աշխարհում:

Գլոբալիզացված տնտեսության պայմաններում այն ընդգրկում է նաև սոցիալական անվտանգությունը, և դեմոգրաֆիկ փոփոխությունները ինչպես մեր հասարակության միասնականության ու անվտանգության, այնպես էլ արժանավայել միջավայրում ապրելու կարողությունը, որը յուրաքանչյուր հաջորդ սերունդ պահպանում է մյուսի համար:

Այն ներառում է նաև համաշխարհայնացվող տնտեսությամբ և ժողովրդագրական փոփոխություններով պայմանավորված սոցիալական անվտանգությունը, ինչպես նաև մեր հասարակության համախմբվածությունը և բնապահպանական անվտանգությունը, որի ապահովումը յուրաքանչյուր սերնդի պարտքն է հաջորդ սերունդների հանդեպ:

Մենք ցանկանում ենք զարգացնել Գերմանիան՝ ամրապնդելով քաղաքացիական արժեքների ու առաքինության դերը, որոնք և հաջողակ են դարձրել մեր երկիրը:

Գերմանիայի համար մեր իդեալը հնարավորությունների հասարակությունն է, որտեղ քաղաքացիներն ապրում են ազատ և ապահով: Այն պաշտպանում է աշխատանքն ու հաջողությունը: Եվ մենք ձգտում ենք հասարակության մեջ սոցիալական ապահովություն խարսխել նաև բոլոր նրանց համար, ովքեր մինչ

այժմ զուրկ են եղել դրանից։ Աշխատաշուկայում ավելի լավ հնարավորությունների հասնելու բանալիները գտնվում են հատկապես հավասար կրթական հնարավորությունների և կյանքի ողջ ընթացքում ուսման շարունակականության մեջ։

Մեր բարոյագիտական համոզմունքներն ու չափազանց հարուստ փորձը մեզ ուժ և քաղաքական գիտակցություն են տալիս՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը կերտելու ազատության, արդարության, անվտանգության ոգով՝ որպես հնարավորությունների երկիր բոլոր մարդկանց համար։ Այս հիմքի վրա էլ մենք մեր երկրի քաղաքացիների հետ միասին գործում ենք հանուն լավ ապագայի։

I. ՄԵՆՔ՝ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐՍ

1. Ովքեր ենք մենք: Մարդը և հիմնարար արժեքները՝ ըստ ՔԴՄ-ի

Ժողովրդական կենտրոնամետ կուսակցություն

1. Գերմանիայի Քրիստոնեադեմոկրատական միությունը ժողովրդական կենտրոնամետ կուսակցություն է։ Այն հանդես է գալիս մեր երկրում առկա բոլոր շերտերի և խմբերի մարդկանց շահերի պաշտպանության դիրքերից։ Մեր քաղաքականությունը հիմնված է մարդու քրիստոնեական աշխարհընկալման և Աստծո հանդեպ վերջինիս պատասխանատվության վրա։

2. Մարդու քրիստոնեական աշխարհընկալումը պատասխանատվությամբ առաջնորդվելու մեր վարած քաղաքականության բարոյագիտական հենքն է։ Այդուհանդերձ, մենք գիտենք, որ քրիստոնեական հավատքից որոշակի քաղաքական ծրագիր բխել չի կարող։ ՔԴՄ-ն բաց է ամենքի համար, ովքեր ճանաչում են բոլոր մարդկանց արժանապատվությունը, ազատությունն ու հավասարությունը և հավանություն են տալիս մեր քաղաքականության՝ վերոհիշյալ արժեքներից բխող հիմնարար համոզմունքներին։

3. ՔԴՄ-ն ստեղծվել է այն քաղաքացիների կողմից,ովքեր վայմարյան հանրապետության փլուզումից, ազգային-սոցիալիստական ոճրագործությունից հետո ու կոմունիստական վարչակարգի վտանգի պայմաններում 1945թ հետո ցանկանում էին Գերմանիայի ապագան ստեղծել քրիստոնեկան արժեքներով: Նրանում համախմբվեցին կաթոլիկ և ավետարանական քրիստոնյաներ, երկրի տարբեր շրջաններից և սոցիալական տարբեր շերտերի պատկանող մարդիկ: ՔԴՄ-ն ունի պահպանողական, ազատական և քրիստոնեասոցիալական արմատներ: Միասնական արժեքային համոզմունքների հիման վրա ՔԴՄ-ի անդամները Պառլամենտական խորհրդում ակտիվորեն մասնակցել են երկրի սահմանադրության մշակմանը և տասնամյակներ շարունակ քաղաքական կարևորագույն հիմնարար որոշումներ կայացրել Գերմանիայի ազատ տարածքում՝ Արևմտյան Գերմանիայում, ինչպես, օրինակ, սոցիալ-շուկայական տնտեսակարգի հաստատման, բոլոր խոշոր սոցիալական օրենքների, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը արևմտյան արժեքային ու պաշտպանական համակարգին ինտեգրելու և Գերմանիայի ու Եվրոպայի միավորման հարցերի շուրջ: Մյուս՝ խորհրդային զորքերի կողմից գրավված Գերմանիայի տարածքում, ՔԴՄ-ն անկարող էր այսօրինակ քայլեր կատարել:

4. ՔԴՄ-ի հոգևոր և քաղաքական հիմքերը գտնվում են քրիստոնեական եկեղեցիների հաստատած սոցիալական էթիկայի, Լուսավորչության դարաշրջանի ազատական ավանդույթների, արժեքների և կապերի հանդեպ պահպանողական նվիրվածության և այն գիտակցության մեջ, ըստ որի պետությունը չպետք է ամենազոր լինի, ինչպես նաև՝ նացիոնալսոցիալիզմի դեմ քրիստոնեական և հայրենասիրական ոգով ծավալված Դիմադրության /Վիդերշտանդ շարժման մեջ:

ՔԴՄ-ի ինքնությանն են պատկանում նաև 1989 թվականի խաղաղ հեղափոխությունը, որը թոթափեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության կոմունիստական բռնապետական լուծը, և մեր հայրենիքի վերամիավորումը: Նորանդամ հողերի քաղաքացուհիների և քաղաքացիների հաջողություններն ու փորձը հարստացնում են մեր համակեցությունն ու ՔԴՄ-ն: Գերմանիայի Քրիստոնեադեմոկրատական Միությունը Գերմանիայի միասնության կուսակցությունն է:

Մարդու քրիստոնեական կերպարը

5. Ըստ մեր պատկերացումների՝ Աստված մարդուն ստեղծել է իր կերպարով: Մարդու քրիստոնեական կերպարից բխում է, որ մենք պետք է ընդունենք վերջինիս արժանապատվության անձեռնմխելիությունը: Բոլոր մարդիկ հավասար են իրենց արժանապատվությամբ՝ անկախ սեռից, մաշկի գույնից, ազգությունից, տարիքից, կրոնական և քաղաքական համոզմունքից, հաշմանդամությունից, առողջությունից և աշխատունակությունից, հաջողությունից կամ անհաջողությունից և այլոց կայացրած վճռից: Մենք հարգում ենք մարդուն՝ որպես անկրկնելի և ինքնիշխան անհատի, նրա կյանքի բոլոր փուլերում: Չծնված և մահացած մարդու արժանապատվությունը նույնպես անձեռմխելի է:

6. Մարդու արժանապատվությունից է բխում որպես անհատ ազատ զարգանալու նրա իրավունքը, միաժամանակ՝ դիմացինի հանդեպ նրա պատասխանատվությունը: Մարդն ունի բարոյական որոշումներ կայացնելու ազատություն: Քրիստոնեական ընկալման համաձայն՝ նա պատասխանատու է Աստծո և իր խղճի առաջ և ստեղծված է ապրելու այլ մարդկանց հետ համակեցությամբ:

7. Յուրաքանչյուր ոք կարող է մոլորվել և սխալվել: Այդ պատճառով էլ հարկ է սահմաններ դնել քաղաքականության ծրագրավորման և կերտման գործառույթների վրա: Այս մոտեցումը մեզ պաշտպանում է գաղափարական բուժական ուսմունքներից և տոտալիտար քաղաքական համոզմունքներից:

Այն ստեղծում է պատրասակամություն ու հաշտեցում: Այն հաշտեցման պատրաստակամություն է ծնում:

8. Մենք մարդուն ընդունում ենք որպես արարչության բաղադրիչ: Նա բնության հետ կամայականորեն վարվելու վերապահում չունի: Բնությունը մեզ վստահված է այն պահպանելու և խնամելու համար: Մենք բնությունը հետագա սերունդներին փոխանցելու պատասխանատվություն ենք կրում:

9. Մարդու այս՝ քրիստոնեական կերպարի վրա են խարսխված իրավական և սահմանադրական ժողովրդավարական պետության սկզբունքները: Նաև այն մարդկանց հավաքական կերպարի, որոնց հարգանքը մարդու արժանապատվության, հավասարության և ազատության արժեքների հանդեպ պարտադիր չէ, որ բխի քրիստոնեական հավատքից:

Մեր հիմնարար արժեքները՝ ազատություն, համերաշխություն և արդարություն

10. Մեր հասարակությունը ապրում է հոգեվոր արժեքներով, որոնք ո՛չ ինքնըստինքյան հասկանալի են, ո՛չ էլ ապահովված են բոլոր ժամանակների համար: ՔԴՄ-ի ստանձնած առանձնահատուկ պարտավորությունն է պահպանել և հզորացնել մեր ազատական ժողովրդավարության քրիստոնեական արժեքային հիմքերը: Նրանք մեր քաղաքական գործունեության չափանիշներն ու կողմնորոշիչներն են: Նրանցից են բխում մեր հիմարար արժեքները՝ ազատությունը, համերաշխությունը և արդարությունը: Նրանք պահանջում,սահամանափակում ու լրացնում են միմյանց և համարժեք են: Մեր խնդիրն ու քաղաքական պարզաբանումների միջուկը նրանց հարաբերությունների իմաստալի դասավորումն է: Հիմնարար արժեքները՝ որպես մարդու անքակտելի իրավունքներ, համամարդկային են և տարածվում են մեր ազգային սահմաններից դուրս:

Ազատություն

11. Մարդը ստեղծված է ազատ ապրելու: Որպես բարոյական էակ՝ նա պետք է որոշումները բանականությամբ ու պատասխանատվությամբ ընդունի: Անգամ բռնապետական համակարգը ի զորու չէ մարդուց խլել նրա ներքին ազատությունը: Դիմացինի ազատությունն է պայմանավորում և սահմանափակում սեփական ազատությունը: Այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի ազատությունը, ավարտվում է սեփականը: Ազատություն պահանջողը կողակիցների ազատությունը պետք է ճանաչի: Այն միշտ պատասխանատվություն է ազատության մեջ:

Մարդկանց համար անհրաժեշտ ազատության սահմանների ապահովումը ու հասարակությանը պարտավորեցնելը քաղաքականության խնդիրն է: Այն միանշանակ ազատություն է՝ պատասխանատվության զգացումով: Քաղաքականության խնդիրն է մարդկանց ապահովել ազատության անհրաժեշտ չափաքանակ՝ պարտավորեցնելով նրանց համընդհանուր շահի շուրջ:

12. Մարդը զարգանում է հասարակության մեջ: Ով իրեն ազատում է հասարակական պարտականություններից, դրանով իր կյանքն ազատ չի դարձնում, այլ աղքատ և մեկուսի: Այնպես, ինչպես մարդուն նվաստացնող հանգամանքներ գոյություն ունեն, այնպես էլ կան պայմաններ, որոնց պարագայում միայն կարող է դրսևորվել ազատությունը:

13. Իրավունքը ապահովում է ազատությունը՝ մարդու անհատական արժանապատվությունը պաշտպանելով: Այն կարգավորում է մարդկանց կանոնավոր և խաղաղ համակեցությունը: Ազատության իրականացումը սոցիալական արդարության պահանջմունքն է: Ազատության իրականացումը ենթադրում է սոցիալական արդարություն: Այն պայմանները, որոնցում մարդն ապրում է, չպետք է խոչընդոտեն վերջինիս ազատությանը: Յուրաքանչյուրը պետք է ինքնուրույն կյանք վարելու իրավունք

ունենա:

Աշխատանքն ու ունեցվածքը պետք է հարգված և պաշտպանված լինեն: Ազատության նյութական հիմունքները պետք է ապահովված լինեն:

14. Ազատությունը իրականացման ու սեփական պատասխանատվությամբ կյանքը կերտելու կարիք ունի: Այդ է պատճառը, որ հասարակական կյանքը պետք է օժանդակության սկզբունքի հիման վրա կառուցի. Պետությունը և համայնքները պետք է խնդիրները իրենց վրա վերցնեն միայն այն ժամանակ,երբ այն չի կարող իրագործվել առանձին քաղաքացիների կամ փոքր համայնքների կողմից: Օժանդակության սկզբունքը գործում է ինչպես փոքր ու մեծ համայնքների միջև, այնպես էլ հասարակական կազմակերպությունների ու պետության միջև: Օժանդակությունը պահանջում է, որպեսզի մեծ համայնքները և պետական ապարատը գործեն, երբ հասարակական-քաղաքական պահանջմունքները գերազանցում են առանձին կամ փոքր համայնքների աշխատուժը:

15. Գործնականում ազատությունը կյանքի է կոչվում անձնական և միասնական պատասխանատվությամբ: Քաղաքացին պետք է ազատության փորձ ձեռք բերի ու ազատությունը ապրի ընտանիքում, հարևանության մեջ, աշխատանքային միջավայրում, ինչպես նաև համայնքում ու պետությունում: Նա պետք է մասնակից և համապատասխանատու լինի, պետք է կարողանա ընտրել և որոշումներ կայացնել: Նա չպետք է ո'չ որպես ստիպվող խնամարկալ հանդես գա, ո'չ էլ պետական ծառայությունների բացարձակ ընդունողի դերում: Ինքնուրույն դատողությունը և պատասխանատու համագործակցությունը նրան պետք է պաշտպանեն գաղափարախոսությունների գայթակղություններից: Մենք ցանկանում ենք մեծացնել պատասխանատվության և հանրային բարեկեցության, պարտավորությունների և քաղաքացիական առաքինությունների նշանակությունը:

16. Անհատական աշխատանքն ու արարումն անձի ազատ

զարգացման անբաժանելի մասն են: Մարդն իր արժանապատվության ու իրավունքների տերն է՝ անկախ իր կատարած աշխատանքից, սակայն սեփական աշխատունակության գիտակցումն իր իսկ կենսական ուժերի կարևորագույն աղբյուրն է: Աշխատանքն անխուսափելի մղում է: Այդ պատճառով էլ հարկավոր է խրախուսել անհատի աշխատելու և արարելու կամքը և նախաձեռնությունը՝ լինի դա շահույթ հետապնդող, թե ոչ: Առանց անհատի աշխատանքի չի կարող զարգանալ ոչ մի հանրություն, այն չի կարող հասնել բարեկեցության և պահպանել այդ բարեկեցությունը:

17. Ազատությունը նաև պատրաստակամություն է՝ հանդես գալու հանուն այլոց, պաշտպանելու նրանց արտաքին և ներքին վտանգներից: Մենք ճանաչում ենք պաշտպանունակ ժողովրդավարությունը և իրավական պետությունը: Ով ազատ է, պարտավոր է հանդես գալ ի շահ այն մարդկանց ազատության, ում ընձեռված չէ այն: Ազատությունը չպետք է սահմանափակվի և մենաշնորհ դառնա փոքրաթիվ ժողովուրդների և հասարակական խմբավորումների համար: Մենք ազատություն ենք ցանկանում բոլոր մարդկանց համար և պայքարում հանուն դրա:

Համերաշխություն

18. Համերաշխությունն *զմիմիանս* սիրելու պատվիրան է և համապատասխանում է մարդու սոցիալական էությանը: Բոլորի համար մարդկային արժանավայել կյանք ապահովելու նպատակը պարտավորեցնում է գործելու համերաշխությամբ: Համերաշխությունն հատկապես պետք է այն մարդկանց, ովքեր դեռ, կամ այլևս, կամ երկար ժամանակ է, ինչ ի վիճակի չեն ինքնուրույնաբար ստեղծելու ազատ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ:

19. Յուրաքանչյուր ոք համերաշխության իրավունք ու պարտավորություն ունի և իր աշխատանքով ու ծառայությամբ նպաստում է առանձին անհատի շահերից հանդես գալուն: Մենք

մեզ ճանաչում ենք փոխադարձ պատասխանատվության կողմնակիցներ: Համերաշխության տարրական դրսևորումներ են օգնությունն ու աջակցությունը մարդկային ամենաանմիջական շփումներում՝ ընտանիքում, ընկերության, հարևանության և բարեկամության մեջ: Սակայն այնտեղ, որտեղ չեն բավականացնում անհատի կարողությունները, պետք է օգնության հասնեն հանրությունը և պետությունը:

20. Սոցիալական ապահովությունը հիմնվում է համերաշխության սկզբունքի վրա: Հանրային ջանքերը կարող են կանխել այնպիսի ռիսկեր, որպիսիք անհատն ի վիճակի չէ կանխել: Խնդիրը ոչ թե և ոչ այնքան նպաստի կամ անվճար կեցության ապահովումն է, որքան սոցիալական ապահովությամբ երաշխավորված կյանքի հնարավորություն ընձեռելը: Ով դրսևորում է համերաշխություն, նա պատրաստ է ինչ-որ բաներից հրաժարվելու: Ով ակնկալում է պետական համերաշխություն, նաև պարտավորություններ պետք է ունենա պետության հանդեպ: Սոցիալական ապահովությունը խաղաղություն և ազատություն սերմանող ազդեցություն ունի: Համերաշխությունն արգելում է սոցիալական ապահովության չարաշահումը:

21. Համերաշխությունը ենթադրում է օժանդակություն: Օժանդակությունն իր հերթին պահանջում է անհատական պատասխանատվության վրա հիմնված գործելակերպ: Պետությունը պարտավոր է քաղաքացու համար այն հնարավոր դարձնել ու հեշտացնել:

22. Համերաշխությունը մեզ պարտավորեցնում է նաև մեր ապագա սերունդների առջև: Առանց սերունդների միջև համերաշխության մենք չենք կարող հասնել սերունդների միջև արդարության: Բոլոր քաղաքական որոշումները պետք է հիմնված լինեն այս պատասխանատվության վրա: Մենք չպետք է ապրենք մեր երեխաների և մեր երեխաների երեխաների հաշվին: Մենք չպետք է ապրենք նաև աշխարհի մյուս ծագերում ապրող մարդկանց հաշվին: Մենք հանդես ենք գալիս ժողովուրդների մեծ հանրության համաշխարհային համերաշխության օգտին: Առանց դրա հնարավոր չէ հաղթահարել հարուստների և աղքատների միջև անջրպետը, ինչպես նաև ապահովել արարչագործության պահպանումը:

Արդարություն

23. Արդարության հիմքն Աստծո կողմից բոլոր մարդկանց տրված արժանապատվության և ազատության հավասարությունն է: Արդարությունը պահպանում է այդ արժանապատվությունն ու ազատությունը: Արդարությունը պահանջում է հավասարին հավասար և անհավասարին անհավասար մոտեցում: Իրավական պետության մեջ արդարությունը նշանակում է հավասար իրավունքներ բոլորի համար: Իրավունքը պաշտպանում է կամայականությունից և իշխանության չարաշահումից: Այն ազատություն է ապահովում նաև թույլերին:

24. Արդար հնարավորություններ ստեղծելը հավասար իրավունքի անհրաժեշտ լրացումն է: Յուրաքանչյուր ոք պետք է ունենա նույն հնարավորությունը՝ ազատության մեջ իր կարողություններին համապատասխան կերտելու իր անձը: Մենք ջանում ենք, որ յուրաքանչյուր ոք ազատորեն և պատասխանատվությամբ օգտագործի իր կենսական հնարավորությունները: Դրա համար հնարավորությունների հասարակությունը պայմաններ ու հնարավորություններ է առաջարկում: Այդ հասարակությունն աճում է հնարավորինս արդար բաշխված կենսական հնարավորությունների հողի վրա: Դա ենթադրում է հավասար մեկնարկային հնարավորություններ կրթություն ստանալու և աշխատանք փնտրելու ճանապարհին: Դա սակայն չի նշանակում առանձին մարդկանց անհատական կարողությունների միջև գոյություն ունեցող տարբերությունների անտեսում: Մենք ցանկանում ենք հավասար հնարավորություններ ընձեռել, բայց չենք խոստանում հավասար արդյունքներ:

25. Արդարություն նշանակում է ծանրաբեռնվածության պատ-

շաճ բաշխում: Այդ պատճառով արդարացի է, որ ուժեղները մեր հասարակության մեջ ավելի մեծ ներդրում ունենան, քան թույլերը:

Նույնիսկ եթե մենք չափազանց մեծ ջանքեր ներդնենք մեր հասարակությունում ավելի ու ավելի շատ արդարության հասնելու համար, միևնույն է, բացարձակ արդարության հասնել չենք կարող: Մենք մեզ առանձնակի պարտավորված ենք զգում թույլերի և սոցիալապես անապահովների հանդեպ: Ոչ ոք չպետք է կորստյան մատնվի, ոչ ոք չպետք է անտեսվի:

26. Այնտեղ, որտեղ արհամարհվում է մարդու արժանապատիվ ապրելու իրավունքը, որտեղ ճնշվում է անհատի, առանձին խմբերի կամ ամբողջ ժողովրդի ազատությունը, այնտեղ տիրում են բռնությունն ու երկպառակտությունը: Մենք հանդես ենք գալիս հանուն մարդու և քաղաքացու իրավունքների հարգման և սոցիալական ու տնտեսական կարիքների հաղթահարման: Դրանով մենք նպաստում ենք ժողովուրդների բարեկամությանը և առավել արդար աշխարհի կերտմանը:

2. Հասարակության մեր իդեալը

27. Քրիստոնեադեմոկրատական մեր միության հոգևոր հիմքերը մեզ հնարավորություն են տալիս հաղթահարել ներկայի և ապագայի մարտահրավերները: Քաղաքականությունը հենց շրջադարձային ժամանակներում կարող է այնպիսի սահմանափակ պայմաններ ստեղծել, որոնք հասարակության և պետության ներսում ապահովեն հրատապ հարցերի լուծման համար անհրաժեշտ ազատ ուժերի առկայություն: Մեր՝ գերմանական քաղաքականությունը, հենվում է այնպիսի հասարակության վրա, որը յուրաքանչյուրին երաշխավորում է ազատություն և բոլորին միավորում համերաշխ համակեցության գիտակցությամբ:

Անձի ազատ զարգացումը

28. Կյանքի իմաստի և երջանկության փնտրտուքի ճանապարհին բոլորը պետք է ունենան հնարավորություն զարգանալու այնպես, ինչպես թելադրում են իրենց հակումներն ու ունակությունները: Քրիստոնեական ընկալման համաձայն՝ անձի ազատ զարգացումը տեղի է ունենում բացառապես հանրության մեջ: Անհատի և հասարակության հարաբերությունները փոխադարձաբար հարստացնում են մեկը մյուսին: Անհատն իր լիարժեք ինքնությունը կարող է զարգացնել մյուսների հետ իր հարաբերություններում: Հասարակությունն իր հերթին իր զարգացման և ապագայի կենսունակության համար կարիք ունի ազատ, ինքնավստահ անհատականությունների: Սա է ամբողջացնում հնարավորությունների հասարակության պատկերը: Այնտեղ ամեն ոք կարող է զարգացնել իր ստեղծագործելու և նորարարությունների ներուժը: Հնարավորությունների հասարակության մեջ այս ազատ զարգացումը միաժամանակ ներքին կապվածություն է ստեղծում անհատների միջև:

29. ՔԴՄ-ն վստահում և հավատում է սեփական խնդիրներն իրենց ձեռքը վերցնելու քաղաքացիների կարողություններին և պատրաստակամությանը: Քաղաքականության խնդիրն է խրախուսել և խթանել քաղաքացու ստանձնած պատասխանատվությունը և որտեղ անհրաժեշտ է, առաջարկել օգնություն՝ ինքն իրեն օգնել պատրաստվող քաղաքացուն: Պատասխանատվություն ստանձնելու համար անհրաժեշտ է, որ մարդը կարողանա իր ուժերն ու կարողություններն ազատ զարգացնել:

Մարդն ընտանիքում է ծանոթանում ազատության և պատասխանատվության՝ միմյանց փոխլրացնող և միմյանց փոխարինող խաղաշղթային: Միաժամանակ ընտանիքից է բխում անհատականությունների բազմազանությունը՝ իրենց կարողություններով հանդերձ, որը չափազանց անհրաժեշտ է հասարակությանը:

ՔԴՄ-ն ցանկանում է հզորացնել ամուսնության և ընտանիքի ինստիտուտը՝ որպես հասարակության հիմք, և մեծ ջանադրությամբ հանդես է գալիս հօգուտ ընտանեսեր և մանկասեր հասարակության, հօգուտ սերունդների միջև համերաշխ կեցության:

Դաստիարակությունը և կրթությունը կարևորագույն նախապայմաններ են ստեղծում անձի ազատ զարգացման, ազատության իրավունքի և քաղաքացիական պարտավորությունների գիտակցման ունակություն ձեռք բերելու համար: ՔԴՄ-ն ցանկանում է կատարելագործել կրթական հնարավորությունների բազմազանությունն այնպես, որ յուրաքանչյուր ոք կարողանա լավագույնս օգտվել իր կարողությունների զարգացման համար ընձեռված հնարավորությունից:

Մարդը զարգանում է նաև աշխատանքում: Այդ պատճառով էլ ՔԴՄ-ի նպատակն է մարդու լիարժեք զբաղվածությունը: Սոցիալ-շուկայական տնտեսակարգը քաղաքացուն հնարավորություն է տալիս մրցակցային մասնակցության միջոցով ճանաչելու իր կարողություններն ու ունակությունները: Մրցակցությունը ՔԴՄ-ի համար կարևորագույն գործոն է ոչ միայն տնտեսական բնագավառում: Մենք համոզված ենք, որ արդար մրցակցությունը խթանում է, որ մարդիկ լավագույն օգուտը քաղեն իրենց կարողություններից:

Ժողովրդավարական իրավական պետությունն իր քաղաքացիներին երաշխավորում է ազատ զարգանալու հնարավորություններ և պաշտպանում նրանց խտրականություններից: ՔԴՄ-ն հանդես է գալիս ազատության և կարգապահության միջև հավասարակշռության դիրքերից:

30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը հիմնարար իրավունք է: Մեր քաղաքականության նպատակն է հավասար հնարավորություններ ստեղծել կանանց և տղամարդկանց համար և վերջ տալ անհավասար վերաբերմունքին բոլոր ոլորտներում: Մենք վարում ենք իրավահավասարության քաղաքականություն, որը կանանց և տղամարդկանց դիտարկում

է նույն հարթության մեջ: Դա ենթադրում է մասնագիտական հավասար հնարավորություններ, առաջընթացի հավասար հնարավորություններ և աշխատանքի հավասար վարձատրություն, ներընտանեկան աշխատանքի վերագնահատում և ընտանիքի ու աշխատանքային գործունեության հնարավորին համատեղելիություն: Կանանց ներհատուկ մտածելակերպը և նրանց փորձառությունները մեծ կարևորություն ունեն մեր հասարակության համար: Մենք խրախուսում և ողջունում ենք կանանց ներգրավվածությունը բոլոր ոլորտներում:

Մեր հասարակության համերաշխությունը

31. Այնտեղ, որտեղ մարդը կարող է ազատ զարգանալ, ծնվում է հանրային գիտակցությունը: Օժանդակության սկզբունքը հանրային գիտակցության և քաղաքացիական համատեղ ջանքերի հնարավորություն է ստեղծում: ՔԴՄ-ն ջանում է ստեղծել այնպիսի հասարակություն, որում ազատ և ինքնուրույն քաղաքացիները հանդես կգան միասնաբար և միմյանց համար. երիտասարդները տարեցների՝ տարեցները՝ երիտասարդների, ուժեղները՝ թույլերի և թույլերը՝ ուժեղների համար: Հասարակությունը պարտավոր է միասնական պատասխանատվություն կրել հանուն այն բանի, որ յուրաքանչյուրը կարողանա այնտեղ գտնել իր տեղը:

32. Մեր հասարակության համերաշխության հիմքը մեր ազգային պատկանելությունն է: Մեր միասնական լեզուն, մեր պատմությունը, ինչպես նաև մեր կյանքն ու գործունեությունը վերամիավորված ազգային պետության մեջ հայրենասիրական՝ հայրենիքով և հայրենիքի համար միավորվածության զգացում են արթնացնում: Մենք մեր սև-կարմիր-դեղին դրոշը և մեր ազգային օրհներգն ընկալում ենք որպես մեր ժողովրդավարության խորհրդանիշներ: Ազգը պատասխանատվություն կրող հանրություն է և՛ իր անցյալի, և՛ ներկայի, և՛ ապագան կերտելու համար: Յուրաքանչյուր ոք, ով գալիս է և ցանկանում է շարունակել

ապրել մեզ մոտ, պարտավոր է ծանոթանալ այս երկրին և նրա պատմությանը՝ այսպիսով իր տեղը գտնելով մեր երկրում:

33. Առանց մեր ազատատենչ հանրության արժեքային միասնական ընկալման, առանց հայրենասիրության, առանց հայրենիքում ազգովի պարտավորությունների կատարման պատրաստակամության, պատասխանատվության ստանձնման և համերաշխության ցուցաբերման՝ պետությունը չի կարող զարգանալ: Մեր պատմությունը լի է փորձառություններով և մշակութային, տնտեսական ու քաղաքական մեծ ձեռքբերումներով: Մենք ունենք իրավական պետության, սահմանադրության և հաջողված վարչարարության պատկառելի ավանդույթներ, հղացել և ստեղծել ենք սոցիալական պետությունը, սոցիալ-շուկայական տնտեսակարգը, տասնամյակներ շարունակ արդեն խաղաղ և կայուն ժողովրդավարության պայմաններում գոյակցում ենք ազգերի եվրոպական ընտանիքում՝ որպես նրա լիիրավ անդամ, և, վերջապես, մեզ հաջողվել է խաղաղ ճանապարհով իրականություն դարձնել մեր պետության վերամիավորումը: Մեր ինքնության մասն է նաև այն, որ մենք գիտակցում ենք նացիոնալ-սոցիալիզմի մարդատյաց և ամոթալի տարիները որպես մշտագո ահազանգ՝ չկոծկելով դրանք և չփորձելով արդարացնել: Հայրենասիրությունը ըստ մեզ՝ մեր երկրի անցյալի գիտակցությամբ մեր երկրի ապագան պատասխանատվությամբ կերտելն է:

34. Միայն սեփական ինքնագիտակցությամբ՝ որպես ուրույն պատմությամբ և մշակույթով ձևավորված ազատ քաղաքացիների հանրություն, մենք կարող ենք համոզիչ կերպով խրախուսել ինտեգրացիոն և համամասնակցային գործընթացները: Քանի որ մաս կազմել այս հասարակությանը նշանակում է մասնակիցն ու տերը լինել նրա պատմության, նրա ավանդույթների և փորձառությունների, համակեցության նրա ձևերի և նորմերի, միով բանիվ՝ նրա ողջ մշակույթի: Սա վերաբերում է թե՛ գերմանացիներին, թե՛ Գերմանիա ներգաղթածներին և նրանց երեխաներին:

Մեր համակեցության նախապայմաններն են առաջին հերթին՝

գերմաներենի իմացությունը, հարգանքը համաքաղաքացու հանդեպ և աշխատելու ու պատասխանատվություն ստանձնելու պատրաստակամությունը: Բացի այդ՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ճանաչել բոլորիս համար նույն օրենքի ուժն ունեցող հասարակական և քաղաքական կարգի հիմքը հանդիսացող մշակութային հիմնարար սկզբունքները: Դրանք այն արժեքներն են, որոնք բխում են մեր՝ որպես եվրոպական ազգի պատմությունից և ընդգրկվել են մեր սահմանադրության մեջ. յուրաքանչյուր մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը, նրա՝ որպես անձի ազատ զարգացման իրավունքը, մարդկանց հավասարարժեքությունը և դրանից բխող՝ քաղաքացիների իրավահավասարությունը, այլոց կենսական ծրագրերի և հոգևոր կողմնորոշումների ճանաչումն ու ընդունումը և դրանով իսկ հարգանքը դավանանքի ընտրության ազատության նկատմամբ:

35. ՔԴՄ-ն հասարակական ինտեգրացիայի խնդիրն ընկալում է լայն իմաստով: Յուրաքանչյուր ոք պետք է ազատ զարգանա և կարողանա մասնակցել սոցիալական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին: Այդ պատճառով ՔԴՄ-ի համար ներգաղթյալների և նրանց երեխաների ներգրավվածությունը մեր հասարակությունում կարևորագույն խնդիր է: Ներգրավվածությունը նրանց կտա իրավահավասար մասնակցելու, փոխվստահության և միաժամանակ մեր երկրի հետ ինքնության համադրման հնարավորություն:

36. Մեր քաղաքական մշակույթը կրում է եվրոպական ընդհանրությունների և գերմանական պատմության առանձնահատկությունների կնիքը: Վերջինիս տակ հասկանում ենք առաջին հերթին դաշնային (ֆեդերալ) կառավարման և դավանանքային ավանդույթները, պետության և եկեղեցու միջև առանձնահատուկ հարաբերությունները և ապագայի հանդեպ այն պատասխանատվությունը, որ գերմանացիների մեջ հասունացել է երկու բռնապետական ռեժիմները հաղթահարելու փորձառությունից:

37. Մշակութային այս արժեքները և պատմական փորձառությունը մեր հասարակությանը միավորող հիմքերն են, և նրանց է վերագրվում Գերմանիայում առաջնորդող և թելադրող մշակութային դերակատարումը: Մենք ցանկանում ենք իրականություն դարձնել, կյանքով լցնել այդ արժեքները:

Մեր մշակույթն իր անցյալով, ներկայով և ապագայով եվրոպական կերտվածքի և կողմնորոշման արդյունք է: Եվրոպական այս առանձնահատկությունը Եվրոպայի շարունակական միավորման գործընթացում ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում:

II. ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ: ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՔԴՄ-Ի ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆ

1. Մեր ժամանակների մարտահրավերները

38. Մենք ապրում ենք դարակազմիկ փոփոխությունների ժամանակաշրջանում: Մեզ շրջապատող աշխարհի վտանգվածությունը, համաշխարհայնացման հետևանքները, տեղեկացված հասարակության պահանջմունքները, մեր ազատությանն ուղղված սպառնալիքները և ժողովրդագրական փոփոխություններն այսպիսի մարտահրավերների կարևորագույն օրինակներն են: Մենք պարտավոր ենք ընդունել այդ մարտահրավերները, հաղթահարել դրանք և օգտագործել այն հնարավորությունները, որոնք կապված են այդ մարտահրավերների հետ՝ 21-րդ դարում պատասխանատվությամբ լի և կենսունակ քաղաքականություն վարելու համար: Դրա համար, սակայն, պետք է պատրաստ լինենք փոփոխությունների: Այսպես՝ մեր երկրից պահանջվել է ուղղել սոցիալական պետության սխալ զարգացումներն ու կառուցվածքային թերությունները: ՔԴՄ-ն՝ լինելով հասարակությունում կենտրոնամետ ամենամեծ ժողովրդական կուսակցությունը, կամենում է պահպանել այն, ինչի շնորհիվ զարգանում է մեր երկիրը և փոխել այն, ինչը խանգարում է:

Վտանգված արարչագործություն

39. Համաձայն քրիստոնեական ընկալման, արարչագործությունը մեզ վստահվել է, որպեսզի այն խնամենք ու պահպանենք: Այսօր այն վտանգված է:

40. Նոր տեխնոլոգիական զարգացումները մարդուն մղում են դեպի բարոյական սահմանները: Զորօրինակ՝ կենսաբժշկական և գենետիկական ուսումնասիրություններն էականորեն նպաստում են շատ հիվանդությունների բուժմանը կամ մարդու կրած ցավի մեղմացմանը: Սակայն միաժամանակ դրանք պարունակում են ռիսկեր. երբ կապվում են ճանաչողության անսահման մղումը և անգիտակից շուկայացումը, վտանգվում են արարչությունն ու մարդու արժանապատվությունը: Նույնիսկ հետազոտությունների ազատությունը պետք է հաշվի առնի մարդկային արժանապատվության անձեռնմխելիությունը ու արարչությունը:

41. Համաշխարհային կլիմայական փոփոխությունները վտանգում են մեր կարևորագույն կենսահիմքերը և հաջորդ սերունդների զարգացման հնարավորությունները: Էներգիայի պահանջարկը և վառելիքային էներգակիրների օգտագործումը աճում են ողջ աշխարհում: Թունավոր գազի արտանետման ծավալները և դրա հետևանքով առաջացած կլիմայի տաքացումը մարդու և բնության համար հեռահար բացասական հետևանքներ են թողնում. սառույցների հալվելը, ջրի մակարդակի բարձրացումը, ծովերի ախտոտումը, ջրհեղեղները, սակավաջրությունը, տեսակների ոչնչացումը, նոր անապատների առաջացումը և երաշտները աղետներ են, որոնց հետևանքով մարդիկ աղքատության մեջ են հայտնվում և ստիպված են լինում լքել հայրենիքը:

Գլոբալիզացված աշխարհը

42. Համաշխարհայնացումը քաղաքական, տնտեսական և հաղորդակցային սահմանների բացումն է ողջ աշխարհում: Այն բնորոշվում է մարդու՝ տեղից տեղափոխվելու լայն հնարավորություններով, գաղափարների և տեղեկատվության, ապրանքների, ծառայությունների և կապիտալի լայն փոխանակմամբ, շուկաների ցանցավորմամբ: Համաշխարհայնացումը ազատության արտահայտություն է և խթանում է մրցակցությունը:

43. Համաշխարհայնացումն անկասելի է, այն թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական զարգացման արգասաբեր գործընթաց է, որը կարող է ողջ աշխարհով մեկ գնալով ավելի ու ավելի շատ մարդկանց առջև բացել հասարակական, քաղաքական և տնտեսական հնարավորությունների դռներ: Մենք ցանկանում ենք այնպիսի ընթացք տալ համաշխարհայնացմանը, որ ողջ աշխարհում խորանա ժողովրդավարությունն ու հաստատվեն մարդու իրավունքները և խրախուսվեն սոցիալական ու բնապահպանական նախաձեռնությունները: Մեկ միասնական աշխարհում ապրելու գիտակցությունն աճում է: Համաշխարհայնացումը սակայն կարող է հանգեցնել նաև աղքատության և հարստության այլ տեսակ վերաբաշխման թե՛ երկրների միջև, թե՛ առանձին որևէ երկրում: Միգրացիան նույնպես համաշխարհայնացման դրսևորում է:

44. Ապրանքների և ծառայությունների շուկաների միջազգային ցանցավորումը խթանում է կարևորագույն տնտեսական և արտադրական կենտրոնների միջև մրցակցությունը: Գլոբալ ֆինանսական շուկաները հնարավորություն են տալիս կապիտալ ապահովել և ներդնել աշխարհի յուրաքանչյուր վայրում: Կապիտալը հոսում է մեծ ներուժ և մեծ շահույթների հեռանկարներ ունեցող տարածաշրջաններ. ավելի պակաս հրապուրիչ տարածաշրջանները կա՛մ չունեն, կա՛մ կորցնում են այն: Նույնը կատարվում է տաղանդների և գիտելիքի շուկայում: Սա

տնտեսական կենտրոնների և տնտեսական համակարգերի միջև մրցակցության հետևանքով ձևավորված նոր երևույթ կամ փորձառություն է: Այս զարգացումը սահմանափակում է ազգային կառավարման հնարավորությունները՝ միաժամանակ առավել մեծացնելով միջազգային կառավարման՝ օրենքով ամրագրված կարգի անհրաժեշտությունը:

45. Գերմանիայում շատերն են նկատում համաշխարհայնացման ազդեցությունը և նրանից բխող հրամայականները՝ իրենց աշխատատեղը կորցնելու վտանգն զգալով, մասնագիտական ապագայի և մինչ այժմ ինքնըստինքյան հասկանալի սոցիալական ապահովությունը վտանգված տեսնելով: Այս ամենին հարկավոր է լուրջ մոտեցում: Գերմանիան, այնուամենայնիվ, ավելի շատ շահել է սահմանների բացումից և միջազգային շուկաների միաձուլումից. շահել են թե՛ ձեռնարկատերերն ավելի ընդլայնված շուկայական հնարավորությունների, թե՛ աշխատանք փնտրողները՝ բարձրակարգ աշխատատեղերի, թե՛ սպառողները՝ ավելի ու ավելի կատարելագործվող արտադրանքների և թե՛ ներդրողները՝ ներդրումային բազմաբնույթ հնարավորությունների երևան գալով: Հաստատվելով համաշխարհային մրցակցության մեջ՝ մենք մեր երկրի համար ապագայում ևս կապահովենք սոցիալական արդարության և կայունության տնտեսական հիմքեր և կստեղծենք զարգացման նորանոր հնարավորություններ: Բոլորը պետք է կարողանան մասնակից և տեր դառնալ այս զարգացմանը, իմացությանն ու կապիտալին: Ով պայմաններ է ստեղծում սրա համար, գործում է սոցիալական բարձր գիտակցությամբ:

Տեղեկացված հասարակության պահանջմունքները

46. Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաները մղում են տեղեկացված հասարակության զարգացմանը: Արժեքների ստեղծման գործընթացում իմացությունն ավելի ու ավելի որոշիչ է դառնում: Դրանով իսկ բացարձակ նոր իմացական ոլորտներ և աշխատանքային հնարավորություններ են բացվում:

47. Ապագայի իմացական դաշտը փոխկապակցված է և միջդիսցիպլինար: Դրա շնորհիվ փոխվում են նաև գիտելիքի ձեռք բերման հնարավորությունները: Գիտելիքի ձեռքբերումը, կազմակերպումն ու օգտագործումը այսօր արդեն կենտրոնական նշանակություն ունեն յուրաքանչյուր անհատի ու հասարակության ամբողջականության բարեկեցության հասնելու ու կյանքի պայմաններ ստեղծելու համար: Գիտելիքը դառնում է կարևորագույն աղբյուր: Դրանում ընկած է մեծ հնարավորություն Գերմանիայի նման երկրի համար,որը մշտապես աղքատ է եղել հումքերով ու հետադարձ հայացք է նետել կրթական ու հետազոտական մեծ ավանդույթներին: Դրանում ընկած է նաև աշխարհի շուկաներում նոր դինամիկ մրցակցողի մարտահրավերը Գերմանիային՝ հաշվի առնելու համաշխարհային շուկայում նորանոր դինամիկ զարգացող հավակնոտ երկրներին՝ որպես իր լուրջ մրցակիցների:

48. Կրթության նշանակությունը աճում է այն չափանիշներով, որոնցով այսօր աճում է մարկանց գիտակցությունն ու գիտատեխնիկական առաջընթացի անհայտ եզրափակումը**:** Այդ է պատճառը, որ անհատը հազիվ է կարողանում անընդհատ մեծացող տրամադրված տեղեկությունները նոր գիտության մեջ վերամշակել: Գիտելիքը անհամաչափ է բաշխված ու ավելի արագ է հնանում: Էլ ավելի դժվար է դրանում ավելի մեծ թվով մարդկանց ներգրավել: Ավելի մեծ թվով մարդկանց ներգրավումը պարտադիր նախապայման է Գերմանիայի հնարավորությունների հասարակությունը իրականություն դարձնելու համար: Բայց հնարավորինս շատ մարդկանց մասնակից դարձնելը գիտելիք ձեռք բերելուն այն բացարձակ նախապայմանն է, առանց որի հնարավոր չէ Գերմանիայի՝ որպես հնարավորությունների հասարակության գոյությունը:

Վտանգված անվտանգություն/ապահովություն

49. Իր պատմության մեջ առաջին անգամ մեր երկիրը շրջապատված է բացառապես բարեկամներով և գործընկերներով: Միաժամանակ, սակայն, աշխարհի տարբեր կողմերից Գերմանիային և Եվրոպային ուղղված սպառնալիքներ կարող են ծնվել: Աղետներն ու դրանց հետևանքները, այլ պետությունների ձախողումները, քաղաքացիական պատերազմները, աղքատությունը, սովը, վարակներն ու շրջակա միջավայրի անխնա ոչնչացումը կամ անդրազգային հանցագործությունն իրենց ազդեցությունն են թողնում նաև մեզ վրա: Երկրի սահմաններից դուրս գործող ահաբեկիչներն ու զանգվածային ոնչնչացման զենքերի տարածումը մեծ վտանգ են ներկայացնում: Բնական պաշարներին տիրանալու համար վեճերը,որոնցից և կախված է Գերմանիայի բարեկեցությունը, աշխարհի խաղաղության համար ռիսկեր է պարունակում:

50. Առնվազն 2001 թվականի սեպտեմբերի 11-ից սկսած՝ մենք գիտենք, թե որքան խոցելի են ազատ և բաց հասարակությունները, և թե ինչպիսի մարտահրավերների առջև են կանգնած մեր երկիրն ու միջազգային հանրությունը: Գլոբալիզացված աշխարհում մենք ուղղակիորեն դեմ ենք առնում անհամաչափ սպառնալիքների ազդեցությանը: Այս զարգացումները սպառնում են ոչ միայն մեր պետությանը, այլև հասարակությանն ու մշակույթին:

Անվտանգությանն ուղղված նոր սպառնալիքները կարող են լինել նաև ներսից: Մեր ազատական-ժողովրդավարական սահմանադրական պետության արժեքներին ու նորմերին են սպառնում ձախակողմյան ու աջակողմյան ծայրահեղականությունները, արմատականության բռնի գործողությունները, ահաբեկչությունն ու կազմակերպված հանցագործությունները:

Ժողովրդագրական փոփոխություններ

51. Աշխարհի բնակչության թիվը կտրուկ աճում է, մինչդեռ մենք՝ գերմանացիներս, աստիճանաբար նվազում ենք: Մեր ծնելիության տոկոսն աշխարհում ամենացածրերից է և վաղուց չի բավարարում բնակչության պարզ վերարտադրությունը: Միաժամանակ ուրախալի է այն փաստը,որ մարդիկ Գերմանիայում այժմ ավելի երկար են ապրում: Ժողովրդագրական հայտնի բուրգը գլխիվայր շուռ է գալիս:

52. Տարեց մարդկանց ավելացումը նվազող բնակչության մեջ կփոխի մեր հասարակության պատկերը: Ապագայում ավելի ու ավելի շատ տարեցներ երեխաներ և թոռներ չեն ունենա. ընտանեկան կապերը նվաղում են: Երեխաների պակաս ունեցող, ծերացող հասարակությունը արագ փոփոխվող աշխարհում կանգնած է ինքնահաստատման մեծ խնդրի առջև :

53. Ավելի ու ավելի քիչ թվով աշխատունակ մարդիկ ստիպված են հոգ տանել ավելի ու ավելի մեծ թվով անաշխատունակ՝ թոշակառու մարդկանց համար: Թոշակառուների և նպաստառուների առումով պետական ծախսերն աստիճանաբար մեծանում են: Մեր՝ ցայսօր իրենց արդարացրած սոցիալական ապահովության համակարգերն այս զարգացումների հանդեպ խոցելի են. նրանք պետք է համապատասխանեցվեն փոփոխված իրադրությանը: Սերունդների միջև պետք է ամեն ինչ արդար լինի: Միաժամանակ ժողովրդագրական զարգացումները Գերմանիայի տարբեր շրջաններում տարբեր հետևանքներ են ունենում: Մենք ձգտում ենք համարժեք կենսապայմաններ ստեղծել Գերմանիայի ողջ տարածքում:

Ընդհանուր առմամբ ժողովրդագրական մարտահրավերներին դիմակայելը կարևորագույն քաղաքական խնդիր է, քանի որ այն իր հետևանքներն է թողնում կյանքի գրեթե բոլոր բնագավառների վրա:

54. Այն մարտահրավերները, որոնց առջև կանգնած ենք, անհանգստացնում և շփոթության են մատնում շատերին: ՔԴՄ-ն այս ծրագրով տալիս է պատասխաններ, որոնք բխում են այն համոզմունքից, որ ժամանակի մեջ իրեն արդարացրած, հաստատված ամեն ինչ հարկավոր է պահպանել՝ անհրաժեշտ փոփոխությունների միջոցով օգտվելով նաև ապագան կերտելու այլ հնարավորություններից:

2. Գերմանիան որպես հնարավորությունների հասարակություն. ապրել ազատ և ապահով

55. Մարդու մասին քրիստոնեական մեր պատկերացումները մեզ առաջնորդելու են նաև ապագայում: Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ազատ զարգացնելու իր անձը: Յուրաքանչյուր ոք միաժամանակ պատասխանատվություն է կրում մյուսների համար: Հնարավորությունների հասարակության մեր իդեալը ունի զարգացման ու պատասխանատվության, ազատության ու ապահովության հավասարակշռության խնդիր: Այս իդեալը համապատասխանում է մարդու մասին քրիստոնեական պատկերացումներից բխող մեր հիմնարար ընկալմանը:

Հնարավորությունների հասարակությունը մարդկային հասարակության առանցքն է: Այն մարդուն հնարավորություն է տալիս զարգանալու, նրա համար հնարավորություններ է բացում: Մենք կողմ ենք կատարված աշխատանքի և հաջողության հանդեպ հարգանքին, անհաջողության դեպքում նոր հնարավորությունից օգտվելու իրավունքին և թույլերի նկատմամբ համերաշխության դրսևորմանը:

Մենք հասարակության մեջ ցանկանում ենք սոցիալական ապահովություն հաստատել նաև բոլոր նրանց համար, ովքեր մինչ այդ դուրս են մնացել դրանից: Անձի սոցիալական ծագումը չպետք է որոշիչ լինի նրա ապագայի համար: Արդար հնարավորությունների ստեղծումն ու դրա միջոցով մարդուն սեփական պատասխանատվությամբ իր կյանքը կերտելու ընդունակ դարձնելը ՔԴՄ-ի նպատակն է, և ոչ երբեք՝ արդյունքների հավասարությունը: Յուրաքանչյուր մարդ անփոխարինելի անհատականություն է, դա պետք է պահպանել և պաշտպանել: Մեր քաղաքական մտահոգությունների կենտրոնում այս ազատ և պատասխանատու մարդն է, և ոչ պետությունը:

20-րդ դարի սոցիալ-շուկայական տնտեսակարգը հնարավոր դարձրեց հետևյալ կարգախոսը. «Բարեկեցություն բոլորի համար»: Մենք հավատարիմ ենք մնում այդ կարգախոսին՝ լրացնելով այն «Հնարավորություններ բոլորի համար» նշանաբանով՝ այդպիսով ստեղծելով նախադրյալներ, որպեսզի սոցիալ-շուկայական տնտեսակարգի դրական ձեռքբերումները լիարժեքորեն ծավալվեն նաև 21-րդ դարում: Դրա համար պայմաններ ենք ստեղծում, որոնք կխթանեն մարդկանց աշխատելու պատրաստակամությունը և ջանասիրությունը, հավատը սեփական ուժերի նկատմամբ, սոցիալական պատասխանատվությունը և հանրային գիտակցությունը:

Ապրել ազատ

56. Այնպիսի ժամանակներում, երբ շատ արժեքներ ենթարկվում են փոփոխությունների, մենք բոլորս պետք է քաջություն ունենանք՝ հանդես գալու հանուն ազատության: Առանց ազատության ոչ մի հնարավորություն չի կարող օգտագործվել: Մենք պետք է վստահենք ազատության ուժին, դրանով իսկ՝ ինքներս մեզ՝ ապագայի տերը լինելու համար: Արագ փոփոխվող աշխարհում մեծ մարտահրավերներն ընդունելը և դրանց դիմակայելը ոչ միայն ջանք ու կամք, համբերություն և կարգապահություն, այլև առաջին հերթին հետաքրքրասիրություն և ստեղծագործ վերաբերմունք են պահանջում: Միայն նոր և համարձակ գիտական, մշակութային, սոցիալական, տնտեսական, քաղաքական գաղափարներով կարող ենք շարունակել գոյություն ունենալ որպես երկիր, որտեղ այնքան լավ և հաճույքով ապրում ենք:

Պետությունը պետք է ապահովի ազատությունը: Դրա համար նա երբեմն պետք է հետ քաշվի, երբեմն էլ, սակայն, առավել ուժեղ դերակատարություն ստանձնի՝ խրախուսելու համար, ասենք, մեր երիտասարդության հնարավորությունները:

Ապրել ապահով

57. Այնպիսի ժամանակներում, երբ շատ արժեքներ ենթարկվում են փոփոխությունների, մարդկանց անհրաժեշտ է վստահություն ունենալ ապահով կյանքի հանդեպ: Քաղաքականության խնդիրը մարդկանց համար այնպիսի կարևորագույն նախապայմանների ստեղծումն է, որոնց առկայությամբ վերջիններս կկարողանան ապահով կյանք վարել:

Անվտանգությունն այսօր տարբեր կերպ կարելի է ընկալել: Ընտանիքի հզորացումը և սերունդների միջև հաշտ գոյակցությունը, դաստիարակության և կրթության բարելավումը, ինչպես նաև սոցիալ-շուկայական տնտեսակարգի բարենորոգումը սոցիալական անվտանգության նախապայմաններ են: Սոցիալապես ապահով ապրում է այն մարդը, ով կարող է համերաշխությանը վստահել, ում առաջ միշտ նորից բացվում են հնարավորություններ, նաև համաշխարհային գիտական հասարակությանը մասնակից լինելու նոր հնարավորություններ:

Մշակութային ինքնությունը մեր երկրում անվտանգություն է ապահովում այն մարդկանց համար, ովքեր իրենց ապագան կերտելու համար ուժ են քաղում այդ ինքնությունից: Եթե մենք մեզ ապահովենք այն ամենով, ինչ մեզ առաջնորդում է, ապա ձեռք կբերենք ներքին կայունություն՝ ազատությունը պատասխանատվությամբ ընկալելու և կերտելու համար: Գերմանիայում գերմանական առաջնորդող մշակույթի հենքի վրա իրականացվող ներգաղթյալների հասարակական ինտեգրացիան մշակութային անվտանգության ապահովմանն ուղղված կարևորագույն քայլ է:

Ներքին անվտանգությանն ուղղված մեր քաղաքականության նպատակը վտանգների կասեցման և հանցագործության դեմ պայքարի պետական հնարավորությունների իրատեսական բարելավումն է: Ապրելու մեր կերպի դեմ ուղղված համաշխարհային սպառնալիքների պարագայում հնարավոր չէ անվտանգության մեր քաղաքականությունը դիտարկել արտաքին անվտանգության քաղաքականությունից առանձին: Այդ պատճառով ներքին և արտաքին անվտանգությունը պետք է ընկալել միասին :

Մեր բնական կենսապայմանների ապահովումը,այդ թվում՝ շրջակա միջավայրի ու կլիմայի նկատմամբ խնայողական վերաբերմունքը հաջորդող սերունդների առջև բացում է ապահով ապրելու նախադրյալներ:

58. ՔԴՄ-ն հանդես է գալիս հանուն այնպիսի հասարակության, որտեղ ազատությունը, համերաշխությունը և արդարությունը կենսունակ լինեն: Եթե հիմնարար արժեքները միմյանց հետ ճիշտ փոխհարաբերության մեջ լինեն, երաշխավորված կլինի մարդու նաև ապահով ապրելու պահանջմունքը: Ազատ և ապահով կյանքը իրագործվում է հնարավորությունների հասարակության մեջ:

III. ԱՄՈՒՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ, ՄԱՐԴԱՍԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նոր կենսաձևեր. սերունդների նոր համակեցություն

59. Փոխոխություններ են կատարվել ոչ միայն արտաքին շփումներում, այլև կենսափուլերի էության և սերունդների դերակատարման մեջ: Զգայուն և ապագայով մտահոգ քաղաքականությունը պետք է պատասխաններ գտնի, որոնք համապատասխանեն մարդկանց նոր կենսաձևերին. պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այսօր մարդիկ ավելի երկար և առողջ են ապրում:

60. Այսօր առավել պակաս, քան երբևէ, երիտասարդները հնարավորություն ունեն հասարակական համակեցության կանոններին ծանոթանալու հենց ընտանիքից: Հաջողված կյանքի շատ օրինակներ կամ օրինակելի ընտանեկան դրսևորումներ, որ անցյալում այլ կենսաձևերի և մասնագիտական կողմնորոշումների պայմաններում միանգամայն հասկանալի էին և բնորոշ մեծ ընտանիքներին և որոնցով թերևս մեր երեխաները կամ երիտասարդներն այսօր կկարողանային կողմնորոշվել, ցավոք, աստիճանաբար մարում են: Երիտասարդ սերունդը հաջողված կյանքի համար կարիք ունի ոչ միայն շատ գիտելիքի, այլև սոցիալական իրազեկության, որպեսզի կարողանա ղեկավարել:

Երիտասարդների համար էլ գործում է նույն կանոնը. յուրաքանչյուր մարդ պետք է ջանա այնքան, որքան կարող է: Սոցիալական է այն քաղաքականությունը, որը մարդկանց ոգևորում և մղում է սեփական պատասխանատվության և համերաշխության:

61. Դպրոցական, միջին մասնագիտական և բուհական կրթության տևականության պատճառով կեցության և ընտանիքի հիմնման խնդիրները ժամանակային առումով իրար են սեղմվում: Միաժամանակ ավագ սերնդի ուսերին է դրված սերունդների համակեցության անխափան ընթացքի ապահովման բացառիկ պատասխանատվությունը. ավագ սերունդը դաստիարակում է երեխաներին, հոգ է տանում ընտանիքի ավելի տարեց անդամների մասին, կենսաթոշակային վճարումներ է կատարում և ստիպված է առավել, քան նախկինում, անձամբ հոգալ իր ծերության համար: Ընտանիքի և մասնագիտության համատեղելիությունը քրիստոնեաժողովրդավարական քաղաքականության կենտրոնական բաղադրիչներից է: Մենք ցանկանում ենք, որ մեր երկրում այն մարդիկ, ովքեր ունենալով ընտանիք, ստանձնում են աշխատանք և պատասխանատվություն, ամեն կողմից հասարակական աջակցություն վայելեն և սոցիալական ապահովագրության և հարկային համակարգի արտոնություններ ստանան:

62. Մոտ ապագայում հասարակության մեկ երրորդը իր կյանքի մեկ երրորդը կապրի վաստակից հրաժարված: Սխալ է խոսել թոշակային հանգստի կարգավիճակի մասին: Ընդհակառակը՝ տարեցներն իրենցից մեծ հնարավորություն և իրենց կենսափորձով հզոր կապիտալ են ներկայացնում մեր հասարակության համար: Նրանք պատրաստ են իրենց նպաստը բերել մեր հասարակության զարգացմանը: Մենք ցանկանում ենք ավելի շատ և ավելի լավ առաջարկներով մեր ավելի տարեց համաքաղաքացիներին հրավիրել երեխաների ու երիտասարդների, ծնողների և աշխատողների հետ միասին մասնակցելու ավելի աշխույժ համակեցություն ստեղծելու գործին: Յուրաքանչյուր ոք խնդիր ունի իր առջև: Ամեն ոք փնտրված, ցանկալի անձ է:

63. Երկարակյացների հասարակության հանդեպ նոր վերաբերմունքը մեզ անհրաժեշտ է մեր առողջապահական քաղաքականությունը վերածրագրելու համար: Առողջապահական քաղաքականությունը ծերացող հասարակությունում չի նշանակում, որ կյանքը կարող է բարձրակարգ դեղամիջոցներով երկարացվել, այլ՝ կյանքի որակի բարձրացում: Այդ պատճառով էլ մենք ցանկանում ենք բաձրացնել քաղաքացու անձնական պատասխանատվությունը և կանխարգելումը դարձնել առողջապահական ինքնուրույն և կարևորագույն մի սյուն: Կյանքի որակի ապահովումն առաջացած տարիքում նաև այն է, որ մարդիկ հնարավորինս երկար կարողանան ինքնուրույն և ինքնավար կյանք վարել իրենց հարազատ միջավայրում: Այս հարցում անհրաժեշտ է մշակել համապատասխան առաջարկներ:

Մեր համակեցության սոցիալական բնույթը որոշվում է նաև նրանով, թե ինչպես ենք մենք վերաբերվում խնամքի կարիք ունեցող և հաշմանդամ մարդկանց: Նաև խնամքի կարիք ունեցող մարդն է ցանկանում ծերանալ հնարավորինս հարազատ միջավայրում՝ առանց մեկուսանալու: Եթե նույնիսկ ընտանիքները չեն կարողանում իրենք հոգ տանել այդպիսի մարդկանց համար, նրանք ուզում են իմանալ և հոգալ, որ իրենց ծնողների և տատիկ-պապիկների համար ամեն ինչ ապահովված լինի: Խնամքի կարիք ունեցող մարդիկ և խնամակալները կամավոր ջանքերի և աջակցության կարիք ունեն: Մենք ցանկանում ենք, որ ավելի սերտ փոխգործակցություն հաստատվի ընտանիքների, հաստատությունների, հիմնական և անմիջական հարևանությամբ ապրող և կամավոր սկզբունքով աշխատող խնամակալների միջև:

64. Տարիքի և աշխատունակության ավարտի հանդեպ ձևավորվող նոր վերաբերմունքն է հիշյալ հարցի շուրջ տարվող մեր քաղաքականության հիմքում: Բազմաթիվ մարդիկ կարող են և ցանկանում են երկար աշխատել: Ոչ միայն հասարակությունը և հասարակական հիմունքներով գործող կազմակերպությունները, այլ նաև տնտեսությունը և ձեռնարկությունները մեծապես զգում են տարեց մարդկանց իմացության, ջանքերի և գործունակության

անհրաժեշտությունը: Շատ տարեցներ իրենց կամքին հակառակ աշխատանքից դուրս գալը կամ իրենց հասարակական գործունեության դադարեցումը դիտում են որպես տարիքային խտրականություն: Այս ոլորտներում մենք ավելի մեծ ճկունության ենք ցանկանում հասնել:

65. Գնալով աճում է հոգածության պակասից և միայնությունից տառապող մարդկանց թիվը: Հարուստ հասարակություններում գոյություն ունի «հոգեկան աղքատություն» երևույթը: Իրենց լավ զգալու համար մարդիկ մարդկանց կարիք ունեն:

66. Արդի սոցիալական հարցերն այլ որակի են և պահանջում են քաղաքական այլ մոտեցումներ: Միայն ավանդական մեթոդներով, ինչպես, օրինակ, ավելի շատ ֆինանսներով, ավելի մեծ աշխատակազմով և ավելի շատ կանոնակարգերով, նոր մարտահրավերներին հնարավոր չէ բավարար չափով դիմագրավել, եթե հարևանությունը կամ ամբողջ թաղամասերն ամայացումից փրկելու, հաշմանդամ մարդկանց չմեկուսացնելու, կամ ներգաղթյալների ինտեգրումը հաջողության հասցնելու խնդիր է դրված, ապա միայն պետական ջանքերը բավարար չեն: Մեր ժամանակների դժվարին խնդիրները հաջողությամբ լուծելու համար մեզ անհրաժեշտ են նոր տիպի համերաշխություն և անհատական նախաձեռնություններ:

67. ՔԴՄ-ն այն կուսակցությունը չէ, որ պետությունից ինքնաբերաբար լուծում ակնկալի բոլոր հասարակական խնդիրների համար: Այդ պատճառով նա մյուսներից առավել ի վիճակի է պատասխաններ գտնել սոցիալական մարտահրավերներին: Օժանդակության սկզբունքն այսօր առավել քան արդիական է: ՔԴՄ-ն կամենում է հզորացած տեսնել այն փոքր միավորները, որոնցից միաժամանակ բխում է երկու բան՝ անհատի զարգացում և համակեցություն, սեփական պատասխանատվություն և համերաշխություն: Առաջին և ամենակարևոր հանրությունն ընտանիքն է:

2. Ամրացնելով մեր հասարակության հենքը. Ընտրության ազատություն՝ ընտանիքներին

68. Ընտանիքները մեր հասարակության հիմքն են: Ընտանիքն այն է, երբ ծնողները երեխաների, իսկ երեխաները ծնողների համար երկարաժամկետ պատասխանատվություն են ստանձնում: Ընտանիքն այն տեղն է, որտեղ տիրում է գործակցություն և համերաշխություն, և եկող սերնդին է փոխանցվում արդարության իմաստն ու ոգին: Ընտանիքում է մարդը կազմավորվում որպես անհատականություն՝ ի սկզբանե որդեգրելով ազատությունը՝ շաղախված պատասխանատվության գիտակցությամբ: Այստեղ հարգվում են արժեքներ, որ բխում են մարդկանց քրիստոնեական ընկալումներից. դրանք են՝ մարդու անօտարելի արժանապատվությունը և նրա հասարակական էությունը:

69. Ընտանիք ասելով չենք հասկանում միայն փոքր երեխաներով կամ դեռահասներով երիտասարդ ընտանիք: Այն ներառում է բոլոր սերունդներին: Տարբեր սերունդների՝ երեխաների, ծնողների, տատիկ-պապիկների, փոխհարաբերություններն այսօր առավել քան երբևէ կարևոր են և պետք է ավելի սերտանան: Մենք բարձր ենք գնահատում հանուն երկարատև համերաշխության ուղղված ընտանիքների ջանքերը և աջակցում ենք ընտանիքներին նաև նրանց գոյության հետագա փուլերում:

70. Ամուսնությունը մեզ համար տղամարդու և կնոջ համատեղ կյանքի լավագույն, օրինակելի տարբերակն է: Այն հաջող ընտանիք կազմելու լավագույն և ամենավստահելի հիմքն է: Ամուսնության մեջ հայրերի և մայրերի համատեղ պատասխանատվությունն իրենց երեխաների հանդեպ արտահայտվում և կարգավորվում է օրենքի ուժով: Նաև այն ամուսնություններում, երբ երեխաներ չեն լինում, տղամարդիկ և կանայք միմյանց հանդեպ մշտական պատասխանատվություն են ստանձնում: Այդ պատճառով էլ ամուսնությունը մեր սահմանադրությամբ առանձնակի պաշտպանության տակ է առնված:

71. Ամուսնությունը և ընտանիքը ամենավստահելի սոցիալական կառույցներն են մարդկանց կարիքն ունեցող մարդկանց համար: Ընտանեկան հարաբերություններն ամբողջ կյանքում ուղեկցում են մարդուն: Դեռ երբեք ծնողներն ու զավակներն այսքան երկար համատեղ կյանք չեն վարել, որքան այսօր: Եվ չնայած դրան՝ ընտանիքները աստիճանաբար քչանում են: Ներկայումս յուրաքանչյուր հաջորդ սերունդ մեկ երրորդով փոքրաթիվ է, քան նախորդը: Սա մեր ժամանակի հակասականությունն է. հարուստ հասարակությունը աղքատ է երեխաներով: Բազմաթիվ անհատական որոշումներ գումարվում են և գծագրում մի զարգացում, որը հեռուն գնացող բացասական հետևանքներ կարող է ունենալ ինչպես մարդկանց կյանքի որակի, այնպես էլ հասարակության բարեկեցության և բարօրության վրա:

72. Երջանիկ կյանքի համար կանանց և տղամարդկանց մեծամասնությունն անհրաժեշտ է համարում ընտանիք և երեխաներ ունենալը: Երեխաները մեզ կապում են կյանքի հետ և ուրախություն պարգևում: Ով որոշում է երեխաներ ունենալ, հավատում է ապագային և ապացուցում, որ առկա է լավատեսություն և ապագայի հանդեպ վստահություն: Երեխաները հարստացնում են մեր կյանքը: Այդ պատճառով ընտանիքի նշանակության կորստի մասին խոսք լինել չի կարող, ընդհակառակը:

73. Ամուսնության, երեխաներ և ընտանիք ունենալու որոշումը անհատական է, որը մենք խրախուսում ենք. պետությունը և հասարակությունը, սակայն, մարդկանց չպետք է թելադրեն, թե ինչպես պետք է ապրել:

74. Մենք ցանկանում ենք նախապայմաններ ստեղծել, որպեսզի շատ ընտանիքներ կազմավորվեն, և երեխաներ ունենալու ցանկություններն ի կատար ածվեն: Երեխաներ և ընտանիք ունենալու հարցում վարանելը կամ դրանից հրաժարվելը որոշ դեպքերում հասարակական դրդապատճառներ ունեն, որոնք մենք ցանկանում ենք և պարտավոր ենք փոխել, քանի որ ջանադրաբար ցանկանում ենք պահպանել ընտանեկան արժեքները: Մենք

ցանկանում ենք խրախուսել ընտանիքներին և ստեղծել ընտանիքների համար նպաստավոր համակարգեր: Դրա մեջ մտնում է նաև օժանդակությունն այն ընտանիքներին, որոնց երեխա ունենալու ցանկությունը կարող է իրականություն դառնալ միայն բժշկական միջամտությամբ:

Մեր ընտանեկան քաղաքականության նպատակն է, որ ընտանիքներն արդարություն ճաշակեն. մեր նպատակն է դյուրինացնել երեխաներ ունեցող ընտանիքների կյանքը և օգնել իրականություն դարձնելու մարդկանց՝ ընտանիք կազմելու և երեխաներ ունենալու ցանկությունը: Մենք ցանկանում ենք ունենալ ամուր ընտանիքներ, որտեղ երեխաները կմեծանան որպես վառ անհատականություններ՝ ունակ ինքնապատասխանատվության և համերաշխության:

75. Ընտանիքներին հասցեագրված մեր քաղաքականությունը կողմնորոշվում է ավանդական արժեքներով և նոր իրողություններով: Ընտանիքները ոչ միայն գոյություն ունեն իրենք իրենցով. նրանք մշակութային և սոցիալական որոշակի տարածքում են՝ շրջապատված այնպիսի կառուցվածքներով, որոնք նրանց օգնում են, երբեմն էլ՝ խանգարում լինելու ընտանիք՝ որպես այդպիսին: Մեր խնդիրն է ստեղծել կառուցվածքներ, որոնք չխոչընդոտեն ընտանիքների գոյությանը:

Հանուն ընտանեսեր հասարակության

76. Ընտանիքում մարդիկ ձեռք են բերում սոցիալական առաքինություններ, սովորում են փոխադարձ պարտավորություններ, վստահություն և պատասխանատվություն կրել: Այստեղ մարդիկ հասկանում են՝ ինչ է սերունդների համակեցությունը: Այստեղ մարդիկ ընդունվում են անկախ իրենց ունակություններից և անհաջողություններից: Ընտանիքներին հարկավոր է այնպիսի մթնոլորտ, որտեղ նրանք կարողանան կազմավորվել: Ընտանեկան արժեքները, հիմնարար են ոչ միայն անհատի զարգացման, այլև սոցիալական համակեցության համար: Ընտանեկան արժեքներն այս իմաստով և այս պատճառով պահպանելը մեր պարտականությունն է:

77. Բարենպաստ մթնոլորտ ասելով հասկանում ենք նաև սեռերի հավասար իրավունքների ճանաչումը մարդու անհատական զարգացման, ինչպես նաև երիտասարդ տղամարդկանց և կանանց ցանկության ճանաչումը՝ ընտանիք կազմելու կամ մասնագիտություն ձեռք բերելու ճանապարհին: Ընտանեկան արժեքները հավասարաչափ պարտավորեցնում են և՛ կանանց, և՛ տղամարդկանց:

78. Մեր ընտանեկան քաղաքականության նպատակն է նախապայմաններ ստեղծել, որպեսզի հնարավորինս շատ մարդիկ որոշեն երեխաներ ունենալ: Այդ պատճառով հարկ է ստեղծել ընտրության իրական ազատություն, որպեսզի ծնողները կարողանան որոշել, արդյոք և ինչպես են նրանք համատեղելու ընտանիքն ու աշխատանքը: 21-րդ դարի քաղաքացիական ընտանիքում հաճախ երկու ծնողներն էլ հոգում են ինչպես ընտանիքի տնտեսական հիմքի,այնպես էլ զգացմունքային որակի համար: Եվ քանի որ ընտանիքում սերն ու հոգատարությունը, փոխադարձ պատասխանատվությունը և պարտավորվածությունը պետք է ապագա ունենան, մենք պարտավոր ենք նորովի մոտենալ ընտանիքի խնդրին և նորովի կերտել այն: Ընտանեկան արժեքներ են նվիրվածությունն ու վստահելիությունը, բայց նաև՝ հարգանքն անհատականության հանդեպ, կողակցի և երեխաների անհատական զարգացման ցանկությունները:

79. Բոլոր նրանք, ովքեր կյանք են տալիս երեխաներին՝ ապրելով ընտանեկան այլ հարաբերության մեջ, հարգանքի և ճանաչման են արժանի այն պատասխանատվության համար, որ նրանք ստանձնել են: Միայնակ մայրերն ու հայրերն այս բացառիկ պատասխանատվությունը կրում են շատ հաճախ առանձնակի դժվարությունների պայմաններում և կարիք ունեն աջակցության:

80. Մենք հարգում ենք նաև այն մարդկանց, ովքեր որոշում են իրենց կյանքը կազմել անձնական հարաբերությունների այլ ձևա-

չափերով: Ընդունում ենք, որ նաև այսպիսի հարաբերություններում են պահպանվում այն արժեքները, որոնք հիմնարար են մեր հասարակության համար: Սա չի վերաբերում միայն տղամարդու և կնոջ ոչ ամուսնական հարաբերություններին: Սա վերաբերում է նաև միասեռ հարաբերություններին: Մենք հանդես ենք գալիս հանուն հանդուրժողականության և դեմ ենք խտրականության ամեն տեսակ դրսևորման: Բայց մենք մերժում ենք տղամարդու և կնոջ այլ հարաբերությունները՝ ընտանիքի բուն էությունը վեր հանող պաշտոնապես կնքված ամուսնության հետ նույն հարթության վրա դնելը, ինչպես և մերժում ենք միասեռ զույգերի՝ երեխա որդեգրելու իրավունքը:

Ավելի շատ ժամանակ՝ ընտանիքներին

81. Ընտանիքներին ժամանակ է պետք. ծնողներին ժամանակ է պետք երեխաների համար, երեխաներին՝ ծնողների համար. ժամանակ հոգատարության և խնամքի, համատեղ նախաձեռնությունների և անհատական հետաքրքրասիրությունների համար: Մենք չենք ցանկանում ունենալ այնպիսի հասարակություն, որտեղ միայն տնտեսական շահերն են հաշվի առնվում: Դրա համար էլ մենք ներդրեցինք ծնողական նպաստի համակարգը: Դրա շնորհիվ էլ ավելի շատ ծնողներ հնարավորություն են ստանում առանց ֆինանսական հոգսերի ավելի շատ և միասնաբար նվիրվել իրենց երեխային վերջինիս կյանքի առաջին տարում՝ իրենց տեսադաշտից չկորցնելով մասնագիտական հեռանկարները: Հաջորդ փուլում խնդիր է դրվելու ապահովել ընտանիքի և աշխատանքի համատեղելիությունը՝ ծնողների կամ տատիկ-պապիկների խնամակալությունն ապահովելու նպատակով: Երեխայի խնամքն ու դաստիարակությունը հարկ է հավասարապես ճանաչել որպես ներընտանեկան աշխատանք/գործունեություն:

82. Ընտանիքների առօրյայի համար պետական որոշ աջակցություններից առավել կարևոր է տնտեսության, ձեռնարկության կամ վարչական համակարգում ժամանակակից և ընտանեկան

շահերից բխող աշխատաժամերի ստեղծումը: Շատ ձեռնարկություններ վաղուց արդեն ապացուցել են, որ ընտանիքի և երեխաների շահերի նկատմամբ հատուկ մոտեցումից կարող են շահել երկու կողմերն էլ: Ընտանիքի նկատմամբ հատուկ մոտեցում որդեգրած ձեռնարկությունները, գործարանները և հասարակական կառույցները գրավիչ են դառնում խելացի աշխատուժի համար և խթանում վերջիններիս կապվածությունն ու հավատարմությունն իրենց: Մենք հարգում ենք այս ոլորտում աշխատանքային հարաբերության կողմերի ձեռք բերած հաջողությունները, և պահանջում նրանցից աշխատանքային պայմանագրերում ամրագրել սկզբունքներ և ռազմավարություն՝ աշխատանքի և անձնական կյանքի էլ ավելի մեծ հավասարակշռության հասնելու համար: Մեզ հարկավոր են ընտանեկան հանգամանքները հաշվի առնող աշխատատեղեր և ոչ՝ աշխատանքային հանգամանքները հաշվի առնող ընտանիքներ:

83. Ընտանիքն ու աշխատանքը համատեղելը մայրերի և հայրերի խնդիրն է: Դաստիարակության հարցում դերերի խելացի բաշխումը բավարարում է երեխայի պահանջմունքը մոր և հոր հանդեպ և կարող է բանալի հանդիսանալ ընտանիքի և աշխատանքի համատեղելիության խնդրի լուծման համար: Այն հայրերը, ովքեր ստանձնում են իրենց երեխաների դաստիարակությունը, պետք է վայելեն հասարակական նույն հարգանքը, ինչ մայրերը:

Ավելի շատ ընտանեկան արդարություն

84. Ընտանիքները նաև ֆինանսական աջակցության կարիք ունեն: Ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը, մեր պատկերացմամբ, սոցիալական բարեգործություն չէ, այլ ընտանիքների ցուցաբերած ահռելի ջանքերի արդարացի փոխհատուցում և ներդրում՝ հանուն հասարակության ապագայի: Այն ընտրության հնարավորություն է ընձեռում, որտեղ տիրում են նյութական պարտադրանքները: Սա արվում է հանուն երեխաների բարօրու-

թյան և միաժամանակ կրում է ընտանեկան պատասխանատվության ամրապնդում: Այստեղ այն նախապայմանն է,որ ֆինանսական աջակցությունը ընտանիքների համար ավելի արդյունավետ ու պարզորոշ դառնա: Մենք ցանկանում ենք բոլոր տեսակի աջակցությունները միավորել մեկ ընտանեկան «դրամարկղի» մեջ:

85. Ամուսնության միասնական պատասխանատվության դերն ու ընտանեկան կորիզը պետք է այսուհետ շահագրգռվի շոշափելի հարկային արտոնություններով: Մենք կողմնակից ենք ամուսնությանը հատկացվող հարկային արտոնությունը լիովին պահպանելուն և այն ընտանեկան հարկային արտոնության վերածելուն, որպեսզի երեխաներ ունեցող ընտանիքների առանձնակի ծանրաբեռնվածությունն ավելի լավ փոխհատուցվի: Երեխաներ ունեցող ընտանիքները պետք է հարկային առումով ավելի արտոնյալ լինեն, քան երեխաներ չունեցող ընտանիքները: Գումարած դրան՝ բոլոր երեխաներ ունեցող ընտանիքներին պետք է տրվի հարկային արտոնության առավելություն: Բացի այդ՝ պետք է նպատակային ջանքեր գործադրել հրապուրիչ պայմաններ ստեղծելու, որպեսզի ծնողները որոշեն ավելի շատ երեխաներ ունենալ: Մեր հասարակությունը ոչ միայն ավելի շատ ընտանիքների կարիք ունի, այլև նրանցում ավելի շատ երեխաների: Հատկապես այն ծնողները, ովքեր ունեն երեք և ավելի երեխաներ, առանձնահատուկ աջակցության կարիք ունեն:

86. Հանուն երեխաների ծնողները սովորում են հրաժարվել որոշ բաներից և սա՝ հօգուտ ողջ հասարակության: Այդ պատճառով ծնողները կենսաթոշակային ավելի նպաստավոր պայմաններում պիտի հայտնվեն, քան երեխաներ չունեցող ապահովագրվածները: Այդ պատճառով մենք ցանկանում ենք ավելի մեծ կարևորություն տալ երեխաների դաստիարակության հարցում ծնողի հատկացրած ժամանակին:

Երեխաները մեր ապագան են

87. Երեխաները միմյանց կարիքն ունեն իրենց զարգացման, նաև սոցիալական առաքինություն սովորելու առումով: Նաև այս պատճառով մենք ցանկանում ենք ավելացնել բոլոր տարիքային խմբերի երեխաներին հասցեագրված հաստատությունների քանակը, ինչի պահանջարկն առկա է, և որոնցում երեխաներն ըստ իրենց ծնողների ցանկության կարող են ստանալ ճկուն ժամանակացույցով գործող և՛ վստահելի խնամք, և՛դաստիարակություն: Երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման գործում բազմազանության հասնելու համար մենք ողջունում ենք հատկապես անհատական նախաձեռնությունները և մասնավոր հիմունքներով գործող մանկապարտեզների հիմնումը: Մենք ցանկանում ենք մանկապարտեզ հաճախելը միջժամկետային կտրվածքով դարձնել անվճար, իսկ վերջին տարին՝ վճարովի հիմունքներով. նախապայմանը հաստատուն ու հետևողական ֆինանսավորումն է: Միջնաժամկետ կտրվածքով պետք է ամրագրվի քաղաքացու՝ երեխային մսուրում կամ մանկապարտեզում տեղավորելու իրավունքը: Ընտանիքներին հարկավոր է ազատել ծանրաբեռնվածությունից, հարկավոր է հիմնել սոցիալական աջակցության ենթակառուցվածքներ: Որպեսզի լավագույնս ապահովվի ընտանիքների և երեխաների զարգացումը, պետք է ծնողները, մանկապարտեզները, դպրոցները, երեխաների և պատանիների հարցերով իրավասու մարմինները գործեն միասնաբար:

Մենք ցանկանում ենք միջժամկետային կտրվածքով ծնողներին տրամադրել խնամակալության և դաստիարակության նպաստ, որը նրանց թույլ կտա իրենց երեխաներին առաջին երեք տարիների ընթացքում խնամել և դաստիարակել տանը՝ առանց մանկական հաստատություններից օգտվելու:

88. Երեխաների դաստիարակության իրավունքն ու պարտավորությունն առաջին հերթին ծնողի մենաշնորհն է: Պետությունը

չի կարող և չպետք է փոխարինի ծնողին այս հարցում։ Սակայն պետությունը դաստիարակչական խորհրդատվության և օգնության մատչելի հնարավորություններ պետք է ունենա և անհրաժեշտության դեպքում խորհրդատվական աջակցություն ցուցաբերի պատանիներին և ծնողներին։ Պետությունը նաև պետք է կատարի երեխաների պաշտպանության իր պարտականությունը։ Պետք է վճռականորեն կանխվեն երեխայի հանդեպ բռնության և նրանց բարձիթողի վիճակի մատնելու բոլոր դրսևորումները։ Մեր երկրում երեխաների բարօրությունը մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի։

89. Երեխաները մեր ապագան են։ Գերմանիան նորից պետք է դառնա մի երկիր, որտեղ երեխաների հետ կյանքը դյուրին և ինքնըստինքյան հասկանալի կլինի։ Սա մեր բոլորի խնդիրն է։

IV. ԳԵՐՄԱՆԻԱ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԿԻՐ Ի ԲԱՎԱՐԱՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ

1. Ավելի շատ կրթություն բոլորի համար. Հենց սկզբից և ողջ կյանքի համար

90. Կրթությունը անհատի կենսական հնարավորությունների բանալին է և առաջնակարգ նշանակություն ունի այն արժեքների համար, որոնք պահպանում ենք, և այն արժեքների համար, որոնք փորձում ենք զարգացնել։ Երկարաժամկետ բարօրության կարելի է հասնել միայն ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց կրթություն ապահովելու միջոցով։ Կրթությունը հնարավորություն կտա դիմագրավել ապագայի մարտահրավերներին և որսալ փոփոխությունների բերած հնարավորությունները։

91. Մարդու ազատությունն ու արժանապատվությունը, մարդկային հնարավորությունների հարստությունն ու ծավալը զարգանում են միայն այն դեպքում, երբ երիտասարդների տաղանդն ու հմտությունները խրախուսվում, պահանջարկ են վայելում և զարգանում հենց սկզբից։ Հնարավորությունների և ունակությունների դրսևորման պատրաստակամությունը լավագույնս ի հայտ է գալիս նաև արտադասարանական հետաքրքրասիրությունների և պրպտումների մթնոլորտում։

92. Մարդու սոցիալական ծագումը չպետք է որոշիչ լինի վերջինիս ապագայի համար: Առաջընթաց՝ կրթության միջոցով. սա է մեր՝ հասարակությանն ուղղված քաղաքականության նպատակը: Բոլորը պետք է ներգրավված լինեն, ոչ ոք չպետք է անտեսվի: Աղքատությունը շատ հաճախ սկսվում է կրթական աղքատությունից:

Բոլորի՝ կրթությանն ու դաստիարակությանը մասնակցելու հնարավորությունը հնարավորությունների հավասարության պարտադիր պայման է:

93. Սոցիալական ապահովությունը և հասարակական համակեցությունը պահանջում են, որ երեխաներին դաստիարակենք որպես վառ անհատականություններ, ովքեր վստահություն կունենան իրենց կարողությունների հանդեպ, կսովորեն հարգանք տածել այլոց և համընդհանուր շահերի հանդեպ, և ի վիճակի կլինեն ինքնուրույն պատասխանատվություն ստանձնել և համերաշխություն դրսևորել:

94. Ազատ, արդարացի և արդյունավետ կրթական համակարգի միջոցով մենք կարող ենք հաջորդ սերունդներին փոխանցել և պահպանել այն արժեքները, որոնց միջոցով հասել ենք բարեկեցության և ապահովության: Մեր բարոյական և նյութական արժեքների փոխանցման և պահպանման համար կրթությունը կարևոր ռազմավարական նշանակություն ունի:

95. Տեղեկացված հասարակությանը անհրաժեշտ է հայտնաբերել հնարավորինս ամեն մի օժտվածություն և վաղ շրջանից խրախուսել այն: Չեն կարող լինել արդեն բավականաչափ լավ մասնագիտացած մարդիկ: Քանի որ մարդիկ ավելի երկար են ապրում և աշխատում, տնտեսական և սոցիալական անհրաժեշտություն և պարտավորություն է ծագում, որ յուրաքանչյուր ոք կյանքի բոլոր փուլերում նորանոր գիտելիքներ և փորձառություններ ձերք բերի: Ողջ կյանքի ընթացքում կատարելագործվելը կյանքի անկանխատեսելի փոփոխությունների պարագայում լավագույն ապահովագրությունն է: Եթե գիտելիքներն առաջվանից ավելի արագ

նորանան ու ապագայի մասնագիտությունները ավելի պահանջարկ ունենան, ապա օպտիմալ կրթության ու մասնագիտացման հարցը 21-րդ դարի սոցիալական խնդիրն է համարվում:

96. Այդ հարցին պատասխանելու համար կողմնորոշվում ենք մի քանի սկզբունքներով: Կրթության ոլորտում ցանկանում ենք հասնել ավելի մեծ տարբերակման /դիֆերենցիա/, ավելի մեծ ճկունության և թափանցիկության: Մենք ցանկանում ենք բոլոր ոլորտներում հասնել որակի և ներուժի բարելավման: Մենք ցանկանում ենք սովորելու գործընթացը արժևորել գործնական աշխատանքով և գործնական աշխատանքում և կրթության նշանակությունն ընդլայնել այնպես, որ այն համապատասխանի պահպանման արժանի մեր իդեալներին, ինչպես նաև՝ նորանոր ծագող անհրաժեշտություններին: Մենք ցանկանում ենք կրթություն ապահովել ամենավաղ շրջանից և ողջ կյանքի ընթացքում՝ մարդասիրական, սոցիալական և տնտեսական հանգամանքներից ելնելով: Ինչպես երեխաների, այնպես էլ մեծերի համար շատ ավելի ընդունելի, արդարացի և տնտեսապես ձեռնտու է ներդրում կատարել կրթության և վերապատրաստման մեջ, քան փորձել փոխանցվող վճարումներով կամ սոցիալական ձեռնարկներով շտկել սխալ զարգացումները: Շատ հաճախ վերջինս հնարավոր չէ անել նույնիսկ շատ փողի առկայության պարագայում: Այդ պատճառով առաջնորդվում ենք հետևյալ դրույթով. «Ավելի լավ է կանխարգելել, քան հետո շտկել»:

Կրթություն՝ հենց սկզբից

97. Երեխաներն ու երիտասարդները ստեղծագործող են և անկեղծ, երբ նրանց համար ստեղծված է համապատասխան միջավայր: Մենք այդ պատճառով ցանկանում ենք մեծացնել ընտանիքների դերը, ինչպես նաև նոր և ոգևորիչ կրթական հաստատություններ հիմնել երեխաների համար: Չափազանց կարևոր է նախադպրոցական և դպրոցական կրթական համակարգերի սերտ փոխկապակցվածությունը: Խնամքի ու

դաստիարակության և կրթության միջև բաժանարար գիծը համարում ենք արհեստական և այլևս ժամանակավրեպ: Երեխաները վաղ հասակից ազդակներ հաղորդող միջավայրի կարիք ունեն, որտեղ նրանք կարող են խաղի միջոցով բացահայտել և հետազոտել աշխարհը: Խնամքի և դաստիարակության նախադպրոցական հաստատությունները նույնպես կրթական հաստատություններ են: Դրա համար էլ ցանկանում ենք նախապայմաններ ստեղծել, որպեսզի երեքից մինչև տասը տարեկաններն իրենց ունակություններին և կարողություններին համապատասխան անհատական ուղղորդում ստանան: Մենք հանդես ենք գալիս հանուն մասնագետների կրթության կազմակերպման զարգացման. Մասնագիտական առաջընթացը պետք է խոչընդոտներ չճանաչի:

98. Բազմաշերտ կառուցվածքով դպրոցական կրթական համակարգն արդարացրել է իրեն և հաջողությամբ զարգացել: Միասնական, միաձույլ դպրոցի հայեցակարգը մենք մերժում ենք: Ավելին՝ մեր նշանաբանն է. «ամեն ավարտին՝ նոր սկիզբ»: Պետք է ստեղծվեն այն անհրաժեշտ նախապայմանները, որոնց պարագայում դպրոցները կբարելավվեն և կհարմարեցվեն երեխաների պահանջմունքներին: Ամեն աշակերտ օժտված է ինչ-որ բանով, և արժանի է այն դպրոցին, որը նրան կտա հնարավորություն՝ լավագույնս դրսևորելու իր օժտվածությունը: Մենք ակնկալում ենք, որ որևէ դպրոց միևնույն պայմաններում ավելի վատ ցուցանիշներ չունենա, քան համեմատության մեջ դրվող մյուս դպրոցները:

99. Մենք դպրոցների միջև լավագույն կրթություն ապահովելու համար անհրաժեշտ մրցակցության նոր ճանապարհներ ենք տեսնում: Մենք ցանկանում ենք ունենալ պարտադիր ազգային չափորոշիչներ և ազդեցիկ, հանրային թափանցիկություն ենթադրող ատեստավորում, միաժամանակ նաև ավելի մեծ ազատություն և ինքնապատասխանատվություն, որոնք դպրոցներին թույլ կտան դասավանդման որակի բարձրացման սեփական ուղիներ գտնել: Մենք պետք է նոր շեշտադրում կատարենք հիմնավոր

էմպիրիկ կրթական հետազոտության և կրթության շարունակական ապահովման վրա: Սահմանված կրթական չափորոշիչները պետք է հետևողականորեն ներդրվեն Գերմանիայի բոլոր տասնվեց շրջաններում: Շրջանների միջև համագործակցությունը պետք է հատկապես ապահովի ավարտական քննությունների համեմատելիությունը և համադրությունը՝ տեղափոխման հնարավորություններ ընձեռելով աշակերտին: Մենք կարևորում ենք հանրային պատասխանատվությունը դպրոցական և կրթական համակարգի նկատմամբ. մասնավոր հիմունքներով գործող կրթական հաստատությունները նույնպես կրթական վերը նշված համակարգի անփոխարինելի մասն են:

100. Ավելի մեծ ինքնապատասխանատվությունը լավագույն միջոցն է այս խնդրի լուծման ճանապարհին և դպրոցներին հնարավորություն է տալիս լավագույնս իրականացնել իրենց առջև դրված խնդիրը: Ուսուցիչները բացառիկ կարևոր դերակատարում ունեն մեր հասարակությունում: Նրանց ստացած կրթությունն ու որակավորումը դպրոցի դաստիարակչական ուժի բանալին է: Տարբերակված և հիմնարար մասնագիտական կրթության կողքին իր կարևոր դերն է խաղում նաև մանկավարժական պրակտիկան: Վերապատրաստական դասընթացները կանոնավորապես պետք է լրացնեն և թարմացնեն ուսուցիչների ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Դպրոցի ընդհանուր մակարդակը մեծապես կախված է որակյալ ուսուցիչների քանակից: Սա նույնպես դպրոցի համար պետք է առաջնային նպատակ լինի:

101. Դպրոցի և ուսուցիչների խնդիրը չի սահմանափակվում գիտելիքի փոխանցմամբ: Երիտասարդներին անհրաժեշտ են արժեքներ և սոցիալական արժանիքներ՝ իրենց կյանքը հաջողությամբ կերտելու համար: Պետք է մշտապես նրանց ուսուցանվի հարգանք տածել ժողովրդավարության և իրավական պետության հանդեպ: Քաղաքական կրթությունն անփոխարինելի է, բացի այդ՝ հարկավոր է Եվրոպայում խթանել աշակերտների և երիտասարդների փոխանակման ծրագրերը: Անձի լիարժեք

զարգացման համար անհրաժեշտ է ապահովել երաժշտական և կրոնական դասընթացներ: ՔԴՄ-ն հանդես է գալիս հօգուտ այն բանի, որ կրոնադավանաբանական դասընթացը բոլոր հողերում դառնա պարտադիր ուսուցման առարկա: Ավետարանական և կաթոլիկ կրոնական դասընթացների կողքին անհրաժեշտության դեպքում պետք է մատուցվեն նաև այլ կրոնների վերաբերյալ դասընթացներ, սակայն գերմաներենով և Գերմանիայում համապատասխան կրթություն ստացած ուսուցիչների կողմից և պետական հսկողության ներքո:

102. Կրթությունը չի սկսվում և չի ավարտվում դպրոցում: Զուտ դպրոցական, բուհական և մասնագիտական կրթությունների փուլը երիտասարդի համար պետք է ավելի կարճ դարձնել, այն սկսել ավելի վաղ և ավելի վաղ էլ ավարտել, բայց դրա փոխարեն շարունակ նոր կրթափուլերով լրացնել նախնական կրթությունը կյանքի ողջ ընթացքում: Կյանքի ողջ ընթացքում սովորելու ունակությունը պետք է արմատավորել երեխայի կյանքի առաջին իսկ տարիներին, խթանել այն դպրոցում և բուհում, բարձրակարգ ու նպատակային վերապատրաստմամբ լրացնել այն կյանքի բոլոր փուլերում: Այստեղ կարևորվում է նաև ձեռնարկությունների պատասխանատվությունը, որ նրանք կարող են ցուցաբերել երիտասարդներին մասնագիտություն ձեռք բերելու հնարավորություն տալու և իրենց աշխատակիցների վերապատրաստումն ապահովելու հարցում:

Բազմազանություն, տարբերակված մոտեցում և ճկունություն

103. Մեր կրթական համակարգի ուժեղ կողմերից մեկը գիտելիք ձեռք բերելու հայեցակարգերի և ուղիների բազմազանությունն է: Մենք որդեգրել ենք ունակությունները բացահայտող և տարբերակված մոտեցմամբ դպրոցական մի համակարգ, որն ինչպես գործնական, այնպես էլ տեսական շեշտադրման կրթական հնարավորություններ է տալիս: Այս տարբեր ուղիները պետք

է հնարավորինս անխոչընդոտ և ճկուն մնան: Բացառիկ առաջադիմությունները մեր երկրի ապագայի համար մեծ նշանակություն ունեն: Տաղանդավորները պետք է համապատասխանաբար խրախուսվեն:

104. ՔԴՄ-ն հավանություն է տալիս, պահանջարկի դեպքում, երկարօրյա դպրոցների ավելացմանը, որտեղ ներգրավված կլինեն նաև հասարակական միություններ և հասարակական հիմունքներով աշխատողներ: Սրանով ակնկալում ենք, որ երկարօրյա դպրոցներն ապահովեն մանկավարժական կառուցվածքով կրթական մի գործընթաց, որն իր մեջ կներառի ինչպես պարտադիր առարկաները, այնպես էլ առողջապահական և ֆիզիկական կուլտուրայի դասաժամեր, երաժշտական-գեղագիտական գործունեություն և սոցիալական գիտելիքների և փորձառությունների փոխանցում:

105. Մտավոր թույլերը և հաշմանդամները կարիք ունեն իրենց անհատական պահանջմունքներին համապատասխան աջակցության և օգնության: Հաշմանդամ և ոչ հաշմանդամ մարդկանց ինքնըստինքյան հասկանալի համակեցությունը, նրանց ուժեղ և թույլ կողմերը պետք է երեխաներին ներկայացնել հնարավորինս շուտ, որպեսզի նրանց մտքերում և վարվելաձևում կանխվի խոչընդոտների ի հայտ գալը:

Որակ և առաջադիմություն

106. Մենք ցանկանում ենք, որ որակն ու առաջադիմությունը կարևորագույն չափանիշներ դառնան ողջ կրթական համակարգի համար: «Պահանջել և խրախուսել» սկզբունքում մենք տեսնում ենք մանկավարժական և կրթության քաղաքականության վարվելակերպի համընդհանուր նշանակության մի **մաքսիմ**: Մեր բոլոր ջանքերի իմաստն ու նպատակը պետք է լինի բոլոր երիտասարդների ուժեղ կողմերի զարգացմանը նպաստելը, սեփական անձի նկատմամբ նրանց հավատի և ունակությունների խրախուսումը, ամենաօգտակար փորձը ձեռք բերելու, ինչ-որ բանի հաս-

նելու հնարավորություն տալը:

Այս սկզբունքները և **մաքսիմները** մեր պատկերացմամբ վերաբերում են բոլորին, որքան էլ տարբեր ու բազմազան լինեն մարդկանց տաղանդները, ծագումը կամ ունակությունները: Սոցիալական վարվելակերպ է դրսևորում նա, ով պահանջում է մյուսներից կամ վստահում նրանց ինչ-որ գործ, որը վերջիններս կարող են անել:

107. Այդ պատճառով էլ մենք ցանկանում ենք ավելի շատ եվ ավելի լավ կրթություն ապահովել բոլորի համար: Բացի այդ՝ մենք ցանկանում ենք հնարավորինս մեծ թվով աշակերտների բարձր առաջադիմություն ցուցաբերելու ունակ դարձնել: Ուսումնական նյութերի բովանդակության վերահսկումն ու ամրագրումը և հիմնական ծրագրերին տիրապետելու առանցքային հմտություններն այս գործում վճռորոշ դերակատարում ունեն:

108. Բոլորի համար կրթության ապահովումը, սոցիալական խոչընդոտների բացակայությունը և բարձր առաջադիմությունը հնարավոր է միմիայն լեզվական իմացության պարագայում: Լեզուն կրթության և մասնագիտական որակավորման, հասարակության և մասնագիտական ոլորտում ինտեգրման բանալին է: Այսօր աստիճանաբար ավելանում է գերմաներենի անբավարար գիտելիքներ ունեցող երեխաների թիվը. դրանք հատկապես ներգաղթյալների ընտանիքներից սերող երեխաներն են: Որպեսզի երեխաները միմյանց հետ կարողանան հաղորդակցվել դպրոցական հենց առաջին օրվանից սկսած և կարողանան համահավասար իրավունքներով օգտվել կրթություն կամ մասնագիտական որակավորում ստանալու հնարավորությունից, պետք է նպատակային լեզվական աջակցություն ցուցաբերենք մանկապարտեզներում, դպրոց ընդունվելու համար նախասահմանենք պարտադիր լեզվական իմացության քննություն, հայտնաբերված անլիարժեքությունների դեպքում առաջարկենք ինտենսիվ աջակցություն և դպրոցին հարիր անհրաժեշտ լեզվական ծրագրեր՝ այս հարցում հնարավորինս ներգրավելով ծնողներին:

Միաժամանակ պետք է կարևորվեն այս երեխաների բազմալեզվությունն ու միջմշակութային գիտելիքներն ու ճանաչողությունը ու նպատակային աջակցություն ստանան: Բոլոր երեխաները պետք է առաջին դասարանից գերմաներենին զուգահեռ և իրենց տարիքային հնարավորություններին համապատասխան նվազագույնը մեկ օտար լեզու սովորեն:

109. Բուհական կրթության որակը և բուհերի շրջանավարտների ու հետազոտողների որակավորումը տեղեկացված հասարակության համար մեծ նշանակություն ունեն: Մենք ցանկանում ենք որակավորված առաջադիմություն ապահովել և Գերմանիայի միջազգային ճանաչումը՝ տաղանդների դարբնոցը, առաջխաղացնել: Այս նպատակին հասնելու համար հարկավոր է ունենալ համալսարանների, մանկավարժական բուհերի, երաժշտանոցների և գեղարվեստի դպրանոցների, տեխնիկական բուհերի, մասնագիտական ակադեմիաների, ինչպես նաև մասնավոր բուհերի տարբերակված համակարգ: Յուրաքանչյուր բուհ պետք է խրախուսվի իրեն ներհատուկ զարգացման մեջ: Որպեսզի պետական բուհերը կարողանան պատշաճ կերպով լուծել իրենց առջև դրված նպատակները, պետք է իրենց հիմնական զինվածությունն ստանան պետական բյուջեի հատկացումների միջոցով: Ուսանողական մատչելի վարձավճարների միջոցով բուհերը պետք է նպատակադրված բարելավեն իրենց առաջարկած մասնագիտական առարկաների դասավանդման որակը և կարողանան ներկայանալ հատուկ ոլորտի կրթական առաջարկներով: Գերազանցություն՝ նաև դասավանդման մեջ. սա պետք է բացարձակ պայման լինի գերմանական բուհերում:

Ուսանողներին պետք է քաջալերել զարգացնելու իրենց ունակությունները թե՛ գործնական դասընթացների, թե՛ գիտական կրթության և թե՛ հետազոտության շրջանակում: Որակավորման համապատասխանության պարագայում պետք է հնարավոր դարձնել բուհից բուհ տեղափոխվելը: Հաջողված ուսանողական փոխանակության ծրագրերը կարևորագույն որակավորումների ձեռքբերման աղբյուր են. այս որակավորումները հետագայում

իրենց նպաստն են բերում գիտահետազոտական ուսումնասիրություններ երկրի՝ Գերմանիայի զարգացմանը: Այստեղ կարևոր նշանակություն ունի նաև ուսման, գիտական առաջընթացի և ընտանիքի համատեղելիությունը: Նախապայման է նաև կրթաթոշակների հատկացման ընդլայնումը:

110. Հետազոտության և դասավանդման միասնությունը շարունակում է մնալ գերմանական բուհերի հաջողության կարևորագույն նախապայմանը: Այս ճանապարհը շարունակելու համար պետք է խրախուսվի համալսարանական բարձրակարգ հետազոտությունը, և պետք է մեծանա մրցակցությունը բուհերի միջև: Մենք ցանկանում ենք բուհերին տալ ավելի մեծ ազատություն և պատասխանատվություն ստանձնելու իրավունք և ավելի քիչ պետական աջակցություն: Մենք Գերմանիայում գիտական հետազոտությունը կազատենք բյուրոկրատական կապանքներից:

Գործնական գիտելիքներ և հմտություններ

111. Մենք ցանկանում ենք նորից խելացի հավասարակշռություն ստեղծել տեսության և պրակտիկայի միջև: Շատ գործնական մասնագիտություններ ապագայում ավելի շատ տեսական գիտելիքների կարիք կունենան քան առաջներում: Շատ ակադեմիական մասնագիտությունների պարագայում էլ առավելություն է գործնական հմտություններին ծանոթանալը որքան հնարավոր է ավելի վաղ և ավելի խորությամբ: Մենք ցանկանում ենք սովորելու գործընթացն արժևորել պրակտիկայում և պրակտիկայի միջոցով: Նեղ մասնագիտական ակադեմիաների ու տեխնիկական բուհերի հաջողությունները բացատրվում են նրանով, որ հատկապես նրանց հաջողվել է տեսականի և գործնականի, մասնագիտության և կրթության խելացի հավասարակշռության ապահովումը դասապրոցեսում:

112. Գերմանիայում գործում է մասնագիտական կրթության ոլորտում տեսականի և գործնականի համադրման երկակի համակարգ: Սա տեղական առանձնահատկություն և առավելություն

է միջազգային մրցակցության մեջ և երիտասարդների շրջանում՝ գործազրկության կանխարգելման լավագույն միջոց: Այն կրթական լավ մեկնարկի ու առաջխաղացման և ողջ կյանքի ընթացքում մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն է տալիս: Միաժամանակ կարևոր է աղջիկներին և տղաներին իրենց մասնագիտական կողմնորոշման ճանապարհին մատնացույց անել և օգնել օգտվելու կրթական հնարավորությունների բազմազանությունից:

Որոշ երիտասարդներ ի վիճակի չեն առաջին իսկ փորձից հաջողությամբ ավարտելու մասնագիտական որևէ կանոնավոր ուսում: Նրանց այսօր շատ հաճախ տրվում են վկայականներ առ այն, թե նրանք ինչ չեն կարող անել, փոխանակ տրվեն վկայականներ առ այն, թե նրանք ինչ կարող են անել: Մենք այսպես ենք հասկանում. ամեն ոք կարող է անել ինչ-որ բան: Այդ պատճառով թույլ ունակությունների տեր երիտասարդները առաջ գնալու լրացուցիչ հնարավորությունների կարիք ունեն, որոնք նրանց աշխատաշուկայում պահանջված և փնտրվող մասնագետ դառնալու որակավորում կապահովեն: Կրթական ճանապարհին ցանկացած առաջխաղացում ավելի լավ է, քան բացարձակապես ոչ մի կրթություն չստանալը:

Դրա համար մեզ անհրաժեշտ են երկակի կրթության նոր, ավելի ճկուն ուղիներ: Այս հարցում օգտակար կարող են լինել ավելի որակյալ աստիճանական կրթությունը և հատկապես կրթական այն բաղադրիչները, որոնք, որպես ինքնաբավ ուսումնական սահմանագծող և ստանդարտացված միավորներ, կարող են տալ վկայականներ և ճանաչվել որպես ամբողջական ուսում: Բացի այդ՝ անհրաժեշտ է խթանել այս գործընթացի բոլոր կողմերի, հատկապես հանրակրթական դպրոցների և մասնագիտական կրթական հաստատությունների փոխգործակցությունը: Երկակի կրթական համակարգն ավելի գրավիչ պետք է դառնա նաև շնորհիվ այն բանի, որ բարելավվեն միջին մասնագիտական կրթություն ստացած շրջանավարտների անցումային, առաջխաղացման հնարավորությունները՝ բուհական կրթություն ստանա-

լու ցանկության պարագայում:

113. Երիտասարդներն ավելի լավ են զարգացնում իրենց ստեղծագործական ուժերը, երբ իրենց մասնագիտական կայացման ճանապարհին պահանջարկ են վայելում, և երբ նրանց ոգևորում են այդ ճանապարհին: Այդ պատճառով պետք է հիմնական նախադրյալները լինեն այնպիսին, որ մասնավոր կամ պետական ոլորտի գործատուին մղեն ավելի քան երբևէ պատրաստ լինելու ցանկացողներին առաջարկել միջին մասնագիտական կրթություն ստանալու համար անհրաժեշտ ուսումնաաշխատատեղեր: Սրան հասնելու համար կամավորությունը, պատասխանատվության զգացումը և նպատակասլաց ազդակները մենք ավելի ենք կարևորում, քան պետական ազդեցությունը:

114. Աշխատաշուկայի պահանջներից մեկն էլ շարժունակ, տեղից տեղ տեղափոխվելու պատրաստ լինելն է: Այդ պատճառով մեզ անհրաժեշտ է ունենալ եվրոպական կրթական միասնական մի տարածք, որտեղ ձեռք բերած մասնագիտական և բարձրագույն կրթությունը համեմատելի և փոխադարձաբար ճանաչելի լինեն:

Լիարժեք կրթություն

115. Կրթական համակարգում պարտավորված ենք մեզ հասած ահռելի ժառանգության առջև: Կրթությունը մարդկային ուժերի դրսևորման աղբյուրն է, մարդու՝ որպես անհատականության և ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ քաղաքացու զարգացման կարևորագույն նախադրյալը: Մենք կրթական համակարգը պետք է պահպանենք՝ այն մշտապես նորոգելով: Հատկապես խառնիճաղանջ, բայց միևնույն ժամանակ հնարավորություններով լի մեր ժամանակներում հանրակրթությունը նոր նշանակություն է ձեռք բերում: Եվ մենք ցանկանում ենք գիտելիքների մատուցման և ձեռքբերման գործընթացը կենսունակ դարձնել հանուն այն բանի, որ գաղափարները և իդեալները չկորցնեն իրենց արժեքը: Միաժամանակ պետք է մեր դպրոցներում խթանենք տնտեսագիտական և բնագիտական առարկաների դասավանդումը:

Կրթական և հետազոտական ոլորտներին ուղղված այն քաղաքականությունը, որը սահմանափակվում է վերջիններիս շուկայական օգտակարությամբ միայն, դրան էլ կարող է չհասնել: Բոլորին կրթություն ապահովելու միջոցով համընդհանուր բարեկեցության, անվտանգության և մասնակցության հնարավոր է հասնել միայն այն դեպքում, երբ կրթությունն ինքն իր մեջ կրի իր իմաստն ու նպատակը, և ճանաչվի և գնահատվի նրա արժեքը:

2. Հետաքրքրասեր Գերմանիա. գիտահետազոտությունը՝ բարեկեցության երաշխավոր

116. Գիտությունը և հետազոտությունը վճռորոշ նշանակություն ունեն հասարակության նյութական և ոչ նյութական բարեկեցության համար և մեծապես նպաստում են աշխարհի բնակչության աճի հետ կապված մարտահրավերների դիմակայմանը: Բժշկության, համաշխարհային սննդապահովման, անվտանգության, հաղորդակցության, բնապահպան գիտակցմամբ առաջնորդվող տրանսպորտի և էներգիայի ապահովման ոլորտներում առանց գիտական և հետազոտական առաջընթացի զարգացում լինել չի կարող: Իսկ հումանիտար-հասարակական գիտությունները անփոխարինելի կողմնորոշիչ գիտելիքներ են ապահովում արագ փոփոխվող աշխարհում:

Մարդու գաղափարական և ստեղծագործական հարստությունը Գերմանիայի կարևորագույն առավելություններից են համաշխարհային մրցակցության մեջ: Միայն հայտնաբերման և հայտնագործման շահագրգիռ ոգով կարող ենք համոզիչ պատասխաններ տալ այնպիսի հարցերի, թե ինչով և ինչպես ենք ապրելու վաղը: Հետագա բարեկեցությամբ մտահոգ գաղափարները մի կողմից պահանջում են հանրային գիտակցության առավել պատկառելի վերաբերմունք հետազոտության հանդեպ, մյուս կողմից՝ Գերմանիայում վերջինիս գործնական կիրառումը շուկայական

ապրանքների տեսքով։ Հանդիսանալով Եվրոպայի ամենամեծ ժողովրդական տնտեսությունը՝ Գերմանիան պարտավոր է առաջատար դիրք զբաղեցնել 21-րդ դարի կարևորագույն տեխնոլոգիաների հայտնաբերման և դրանց զարգացման ոլորտում՝ միջազգային հարթակում իր մրցունակությունը պահպանելու և հզորացնելու համար։

117. ՔԴՄ-ն գիտական և հետազոտական ազատության կողմնակից է։ Հետազոտական հնարավորություններին և ռիսկերին հարկավոր է բարեխիղճ մոտեցում ցուցաբերել։ Հետազոտական ազատությունը սահմանափակվում է այնտեղ, որտեղ վիրավորվում է մարդու անձեռնմխելի արժանապատվությունը, և կամ վտանգվում է արարչագործությունը։

118. Գերմանիան գիտահետազոտական շատ բնագավառներում միջազգային ասպարեզում առաջատար է, և հարկ է պահպանել ու ընդլայնել այդ առաջատար դիրքերը։ Հատկապես հիմնարար հետազոտությունը, որ առաջին հերթին ուղղված է ճանաչողական ձեռքբերմանը և ոչ անմիջապես տնտեսական օգտավետությանը, կարիք ունի պետական հովանավորության։ Ներբուհական հետազոտությունը նույնպես առանձնահատուկ աջակցության կարիք ունի, քանի որ այստեղ է կրթվում ապագա գիտնականների մեծ մասը։

119. Նոր գաղափարները տանում են դեպի հետագա բարեկեցություն և զարգացում այն դեպքում, երբ հաջողվում է հիմնարար գիտելիքները վերածել կոնկրետ կիրառման, հատկապես՝ շուկայում մրցունակ ապրանքների կամ ծառայությունների տեսքով։ Հեռանկարային հետազոտությունը պահանջում է հիմնարար գիտելիքների և կիրառական հետազոտության, բուհերի, հետազոտական հաստատությունների և ձեռնարկությունների փոխկապակցվածություն և ռազմավարական միավորում։ Նորարարական ձեռքբերումները վաղուց արդեն հիմնականում անհատ հանճարների ձեռքբերումներ չեն։ Ազգային սահմանները վերանում և ճամփա են հարթում միջազգային գիտահետազոտական և ձեռնարկատիրական

համագործակցությունների համար։ Այդ պատճառով մենք պետք է կարողանանք ի մի բերել բոլոր ոլորտների ուժերը։

120. Ժամանակակից հետազոտությունը ենթադրում է որոշակի առարկայի՝ դիսցիպլինի սահմաններից դուրս ծավալվող միտք և մոտեցում։ Մեր ժամանակի խնդիրներն ու մարտահրավերները պահանջում են ավելի ու ավելի շատ միջառարկայական /ինտերդիսցիպլինար/ մոտեցումներ։ Հեռանկարային լուծումները հաճախ ի հայտ են գալիս տվյալ առարկայի սահմաններն անցնող գիտահետազոտական ծրագրերի շրջանակում։ ՔԴՄ-ն ակնկալում է բոլոր գիտական ճյուղերի՝ հումանիտար, սոցիալական, բնագիտական և ճարտարագիտական ոլորտների միասնաբար գործելու պատրաստակամությունը։

121. Գիտությունը, տնտեսությունը և պետությունը միասնական պատասխանատվություն են կրում նորարարությունների, ինչպես նաև Գերմանիայի՝ որպես տեխնոլոգիաների և հետազոտությունների խոշորագույն համաշխարհային կենտրոնի ապագայի համար։ Հետազոտությանը և զարգացմանը հատկացվող ծախսերը պետք է ավելացվեն և մինչև 2015 թվականը կազմեն համախառն ներքին արտադրանքի չորս տոկոսը։ Այստեղ անհրաժեշտ են ձեռնարկությունների, Դաշնության և Գերմանիայի առանձին հողերի համապատասխան ջանքերը։ Ֆինանսական քաղաքականությունը պետք է ինքն իրեն ընկալի որպես նորարարության շարժիչ և հարկային գրավչություններով նախադրյալներ ստեղծի լրացուցիչ նորարարությունների համար։ Այսպիսի նախադրյալներն անհրաժեշտ են Գերմանիայի գիտահետազոտական և նորարարական ներուժը կյանքի կոչելու համար։

122. Գիտահետազոտական ձեռքբերումների փոխադրումը տնտեսություն տեղի է ունենում հիմնականում նորագույն ցանցային համակարգերի միջոցով։ Անհրաժեշտ է ընդլայնել և շահագրգռել գիտնականների, ձեռնարկատերերի և կապիտալ տրամադրողների փոխգործակցությունը՝ որպես մեր հետազոտական համակարգի կենսունակությունն ապահովող անհրաժեշտ բա-

ղադրիչ: Պետք է խրախուսել և աջակցություն ցուցաբերել բուհերի ճյուղավորումների արդյունքում նոր գիտական և տեխնոլոգիական հենքի վրա ստեղծվող ձեռնարկություններին և հատկապես արտասահմանյան նորարարական ձեռնարկություններին, ովքեր նոր են մուտք գործում Գերմանիա: Հետազոտական ձեռքբերումը շուկայում մրցունակ վերջնարտադրանքի վերածելը հատկապես դժվարին է բարձր տեխնոլոգիաներով աշխատող ձեռնարկություններում և կարիք ունի նպատակային արտոնությունների:

123. Հատկապես միջին ձեռնարկատիրությունը, որի վրա և հենված է Գերմանիայի տնտեսությունը և որն ապահովում է մեր երկրում աշխատատեղերի մեծ մասը, շատ հաճախ չունի սեփական գիտահետազոտական կենտրոններ: Նրա գիտահետազոտական և նորարարական հզորացումը մեզ համար առանձնահատուկ կարևորություն ունի: Դրա համար անհրաժեշտ են թափանցիկ, մատչելի գիտահետազոտական զինվածություն և հատկապես գիտահետազոտական փոխգործակցություններ: Տնտեսության, գիտության և քաղաքականության տարածաշրջանային դերակատարները պետք է Դաշնության և առանձին հողերի աջակցությունը վայելեն նորարարական ներուժի հայտնաբերման և ընդլայնման հարցում: Պետք է շարունակել խթանել նաև միջին ձեռնարկատիրության ներգրավվածությունը եվրոպական գիտահետազոտական նախագծերին:

124. Նորարարությունների հաջողության համար ոչ միայն հարկավոր է վերացնել հետազոտողների առջև ծառացող բյուրոկրատական խոչընդոտները: Գիտական հաստատությունների զարգացման համար հետազոտությանն անհրաժեշտ են նաև ճկուն կազմակերպչական ձևեր և փորձարարական ավելի մեծ ոգևորություն: Ազատությունն ու սեփական պատասխանատվությունը, կատարելությունն ու մրցակցությունը, ինչպես նաև կրթական բարձր մակարդակը ՔԴՄ-ի համար սկզբունքային նշանակություն ունեն:

3. Մշակույթը որպես ազգային ինքնության և աշխարհի հետ հարաբերվելու պատրաստակամության արտահայտություն

125. Գերմանիան եվրոպական մշակութային երկիր է, որը հատկապես կրում է քրիստոնեա-հրեական ավանդույթների ու լուսավորչական փիլիսոփայության ազդեցությունը: Արվեստն ու մշակույթը ձևավորում են ոչ միան անհատի, այլև մեր ողջ ժողովրդի ինքնությունը: Մենք ցանկանում ենք պահպանել մեր երկրի հարուստ մշակութային ժառանգությունը, որը կրում է իր տարածքների և շրջանների բազմազանության կնիքը:

126. Մշակութային բազմազանությունը մեր հասարակության կենսունակության արտահայտությունն է, նպաստում է Գերմանիայում կյանքի որակի բարձրացմանը և խթանում նորն արարելու մարդկանց պատրաստակամությունն ու համարձակությունը: Մեր մշակութային իդեալը աշխարհի հետ երկխոսելու պատրաստ Գերմանիան է, որն ավանդաբար այլ մշակույթների հետ շփման մեջ միշտ անմիջական է եղել: Գերմանիայի մշակութային կենսունակությունն ու գրավչությունը մինչ այժմ էլ բացատրվում է այլ ժողովուրդների և մշակույթների հետ սերտ շփումների նրա պատրաստակամությամբ:

127. Մենք ճանաչում ենք արվեստի ազատությունը: Պետությունն ու քաղաքականությունը իրավասու չեն արվեստի, նրա արտահայտչամիջոցների կամ բովանդակության հարցերով, սակայն պատասխանատու են այն պայմանների համար, որոնցում արվեստն ու մշակույթը կարողանան զարգանալ: Արվեստն իրականության հետ հարաբերվելու յուրահատուկ ձև է: Նրա գոյության աղբյուրը հետաքրքրասիրությունն ու համարձակությունն են: Ստեղծագործ ներուժի խթանումը նույնպես որոշիչ նշանակություն ունի Գերմանիայի մրցունակության համար: Մշակութային տնտեսություն մրցակցային մեծ առավելություն է: ՔԴՄ-ն իր առաքելությունն է համարում արվեստի և մշակույթի խրա-

խուսումը՝ որպես Դաշնության, առանձին հողերի և համայնքների հանրային բացառիկ կարևորության խնդիր։ Այն հավասարապես ենթադրում է և՛ մշակութային ժառանգության պահպանություն, և՛ ժամանակակից արվեստի խրախուսում։ Այստեղ կարևորվում են ոչ միայն առանձին արվեստագետների բարձրարժեք ծառայությունները, այլև հասարակության լայն շերտերում ձևավորվող մշակույթը. ավանդական ու ժողովրդականություն վայելող արտահայտչամիջոցները, և վտարանդիների, հայրենադարձների ու ներգաղթյալների մշակութային ավանդը։ Մշակույթի հանդեպ հոգածությունը սուբվենցիա չէ, այլ անփոխարինելի ներդրում՝ մեր հասարակության ապագայում։

128. Պետական աջակցությունից բացի՝ անփոխարինելի նշանակություն ունի նաև քաղաքացիական-հասարակական հոգածությունը մշակույթի հանդեպ։ Մենք ցանկանում ենք բարելավել այն հիմնարար պայմանները, որոնք կխթանեն մասնավոր հոգածությունը մշակույթի հանդեպ՝ ի դեմս հիմնադրամների, մեկենասների և հովանավորների։

129. Կենդանի հիշողությունը մեր մշակույթի մասն է և իր մեջ, մեր պատկերացմամբ, ներառում է գերմանական պատմության բոլոր վերելքներն ու անկումները։

Գերմանիայի Դաշնային Հանրապետության համար կարևոր նշանակություն ունեն նացիոնալ-սոցիալիստների ժամանակաշրջանի դասերը, հատկապես՝ Հոլոքոստի եզակիությունը։

Պատմական մեծ նշանակություն ունեցավ նաև Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության սոցիալիստական դիկտատուրայի հաղթահարումը։ 1989 թվականի խաղաղ հեղափոխության և երկու Գերմանիաների վերամիավորման նշանակությունը բացառիկ է։ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության կոմունիստանական պատմությունը լոկ արևելագերմանական երևույթ չէ, այլ, ինչպես և նացիոնալ-սոցիալիզմը, մասն է գերմանական ազգային, ինչպես նաև եվրոպական պատմության։

Նույնը կարելի է ասել նաև հայրենիքից վտարվածների ճակատագրերի մասին։ Արտաքսման զոհերի հիշատակը և նրանց մշակութային ժառանգությունը ողջ ժողովրդի հիշողության կամարի մի մասն են կազմում։ Մենք չպետք է մոռանանք նաև Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկրի վերականգնման և ինտեգրացիայի խնդրում վտարանդիների և փախստականների ներդրած ավանդի մասին։

Խաղաղության և Դիմադրության /Վիդերշտանդ/ շարժումների, խաղաղությանն ու հաշտեցմանն ուղղված ջանքերի և տնտեսական ու քաղաքական զարգացման մեջ կատարած մեծ ներդրումների հիշատակն արժանի կերպով վառ պահելը ոչ միայն անխուսափելի և անփոխարինելի է սեփական պատմության հետ անկեղծ լինելու, այլև հիմնարար՝ ազգի ինքնագիտակցության և ժողովրդավարական ավանդույթների կերտման համար։ Հատկապես կարևոր է ամեն տեսակի տոտալիտար և բռնապետական համակարգերի մերժումը։

Ամենից առաջ կրթությունն ու գիտությունը, գրականությունն ու արվեստն են կոչված նպաստելու քաղաքացիների՝ գերմանական ողջ պատմության տերը լինելու և այն վերաիմաստավորելու գործին։

130. Առանց մշակույթի չի կարող զարգանալ ոչ մի կրթություն, առանց կրթության՝ ոչ մի մշակույթ։ Մշակութային կրթությունն անհրաժեշտ է՝ անհատին իր զարգացման ճանապարհին օգնելու և նրան ժողովրդավարության և հասարակության մասնիկը դարձնելու համար։ Մշակույթը կողմնորոշումների և գիտելիքների փոխանցման կարևորագույն նախապայման է։ Հատկապես երիտասարդներին հարկավոր է վաղ հասակից ծանոթացնել արվեստին և մշակույթին։ Միայն այսպես կարելի է հուսալ, որ ապագայում կաճի ստեղծագործական մասնագիտությունների և մշակութային հաստատությունների թիվը։ Մշակութային կրթությունը պետք է սկսվի ընտանիքում և չպետք է ավարտվի դպրոցով։ Ըստ ՔԴՄ-ի՝ մշակութային կրթությունը հանրային պատասխանատ-

վություն ստանձնած և հանրային աջակցություն վայելող կրթական համակարգի անփոխարինելի մասն է։

131. Գերմաներենն ավելին է, քան լոկ հաղորդակցման միջոց։ Այն մեր մշակույթի բացառիկ դրսևորումներից մեկն է և հասարակությունը միավորող ժապավեն։ Այդ պատճառով առանձնահատուկ պատասխանատվություն ենք կրում գերմաներենի նկատմամբ՝ հոգատար վերաբերմունքի և պաշտպանության արժանացնելով նրան։

132. Կրթական և մշակութային արտաքին քաղաքականությունը ծառայում է գերմաներենի և գերմանական մշակույթի տարածմանը և խնդիր ունի աշխարհով մեկ խթանել միջմշակութային երկխոսությունը, ինչպես նաև նպաստել ժողովրդավարական ու մարդու իրավունքների արժեքների հաստատմանը։ Պետք է խթանել արտերկրում գործող գերմանական կրթական և գիտական հաստատությունների, ինչպես նաև մշակույթի տարածման առաքելություն ստանձնած կազմակերպությունների աշխատանքը՝ արտերկրում մեր երկիրը պատշաճ ներկայացնելու նպատակով։ Արտաքին մշակութային քաղաքականությունը բարձրացնում է Գերմանիայի համաշխարհային հեղինակությունը և նպաստում միջազգային իր գործընկերների հետ մեր երկրի նաև տնտեսական կապերի զարգացմանը։

133. Ազատ, անկախ լրատվամիջոցները մեր ժողովրդավարական հասարակարգի կարևորագույն բաղադրիչն են, հատուկ պաշտպանության կարիք ունեցող մշակութային բարիք և մեծագույն պատասխանատվությամբ առաջնորդվող նշանակալի տնտեսական գործոն։ Գլխապտույտ արագությամբ զարգացող լրատվական աշխարհում անհրաժեշտություն է ծագում ամենից առաջ ապահովել գերմանական լրատվամիջոցների լրատվական բովանդակության բազմազանությունը և որակը, բայց նաև նրանց միջազգային մրցունակությունը։ Լրատվամիջոցների անկախության և նրանց շուրջ տարվող քաղաքականության շահից ելնելով՝ մերժում ենք քաղաքական կուսակցությունների թե՛ անմիջական և թե՛ միջնորդավորված ֆինանսական մասնակցությունը լրատվամիջոցներում և լրատվական ձեռնարկություններում։

Լրատվության բազմազանության մեջ մտնում է նաև հանրային-պետական և մասնավոր ռադիոյի իրեն արդարացրած երկակի համակարգը։ Լրատվական քաղաքականությունը պետք է հոգ տանի այն մասին, որ տեղի ունենա արդար մրցակցություն, որը երկու համակարգերին կտա պատշաճ զարգանալու հնարավորություններ։ Հանրային-պետական ռադիոն առաջին հերթին բնակչությանը պետք է ապահովի կրթական, մշակութային և լուրերի հիմնական տեղեկատվությամբ։ Այդպիսով այն միաժամանակ հանդես կգա և՛ որպես մշակույթի խրախուսող, և՛ որպես մշակույթ արտադրող։ Նա նաև առանձնահատուկ պատասխանատվություն ունի՝ նպաստել ներգաղթյալների ինտեգրացիոն գործընթացին և ներկայացնել վերջիններիս կենսական խնդիրներն ու առանձնահատկությունները։

134. Լրատվամիջոցներն ու լրագրողները հանրության վրա ազդեցություն գործելու իրենց հնարավորություններով խոշոր չափով միասնական պատասխանատվություն են կրում հասարակական և մշակութային, ինչպես նաև քաղաքական կրթության համար։ Ընտանիքի, մանկապարտեզի և դպրոցի դաստիարակչական խնդիրն է երեխային օգնել օգտվել լրատվական դաշտից և իրազեկ լինել իր իրավունքին։ Լրատվամիջոցները պատասխանատու են հատկապես երիտասարդների առջև։ Այս պատասխանատվությունը ենթադրում է նաև պարտավորություններ ստանձնելու պատրաստակամություն։ Պետք է մշտապես խթանվի երիտասարդների պաշտպանությունը յուրաքանչյուր տարիքային խմբի համար առանձին վերցված, պետք է հստակեցվեն այդ պաշտպանության սահմանները, և հետապնդվի ամեն մի ոտնձգություն։

V. ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՑԻԱԼ-ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՐԳՈՒՄ

135. Համաշխարհայնացումը /գլոբալիզացիա/ մարդածին զարգացում է, որի վրա հնարավոր է ներազդել, և որը կարելի է ուղղորդել: Եթե մենք աշխատենք տնտեսապես նպատակային և սոցիալական առումով արդար քաղաքականություն վարել, այդ դեպքում համաշխարհայնացումը չի նշանակի սոցիալական պետության և սոցիալ-շուկայական տնտեսակարգի վախճան: Հակառակը՝ այդպիսի քաղաքականությունը կարող է համաշխարհայնացման դրական ընկալման սկիզբը դառնալ ողջ աշխարհում: Նոր տնտեսական քաղաքականությունը պետք է սոցիալ-շուկայական տնտեսակարգի չափանիշներն ամրագրի նաև միջազգայնորեն: Այդպիսով՝ սոցիալ-շուկայական տնտեսակարգը նոր նշանակություն ձեռք կբերի:

136. Ըստ ՔԴՄ-ի՝ համաշխարհայնացման գործընթացը պետք է հիմնված լինի ավելի մարդասիրական և արդար աշխարհակարգի ստեղծման համար անհրաժեշտ և ողջ համաշխարհային հանրության համար ընդունելի նախապայմանների վրա: Սրա նպատակը պետք է լինի այն, որ բոլոր մարդիկ համաշխարհայնացման պայմաններում ավելի շատ ազատություն և բարեկեցություն շահեն: Համաշխարհայնացումը պետք է հոգա այն մասին, որ ձեռք բերված տնտեսական ազատությունը ծառայի մարդուն:

137. Սոցիալ-շուկայական տնտեսակարգը ՔԴՄ-ի կարծիքով հաջողակ մոդել է, որը մեզ նաև ապագայում թույլ կտա ապրել ազատ, բարեկեցիկ և ապահով: ՔԴՄ-ն հավատում է, որ տնտեսական և հասարակական այս մոդելը կարող է պատասխան տալ նաև համաշխարհայնացման մարտահրավերներին:

138. ՔԴՄ-ն սոցիալ-շուկայական տնտեսակարգի կուսակցություն է: Լյուդվիգ Էրհարդի հետ միասին կուսակցությունն այս տնտեսակարգը հիմնել է հետպատերազմյան տարիներին՝ հանդիպելով տարբեր դիմադրությունների, և նրա շնորհիվ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը դարձրել հաջողակ: ՔԴՄ-ն մերժում է կոլեկտիվիզմի սոցիալիստական և այլ տարատեսակները: Սա վերաբերում է նաև խելահեղ կապիտալիզմին, որը հիմնվում է միմիայն շուկայի վրա և ինքն իր մեջ չի ամփոփում մեր ժամանակների սոցիալական հարցերի լուծումներ: Սոցիալ-շուկայական տնտեսակարգը նաև վերամիավորված Գերմանիայում և համաշխարհայնացման դարաշրջանում է շարունակելու մնալ մեզ առաջնորդող հենասյունը:

1. Սոցիալ-շուկայական տնտեսակարգի սկզբունքները հանուն բարեկեցության, բաշխվածության և ապահովության

139. Սոցիալ-շուկայական տնտեսակարգը հիմք է ընդունում մարդուն՝ որպես Աստծո արարչագործություն, իսկ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Սոցիալ-շուկայական տնտեսակարգը ենթադրում է ազատության, համերաշխության և արդարության շաղկապվածություն և փոխլրացում:

140. Սոցիալ-շուկայական տնտեսակարգը ավելին է, քան տնտեսական համակարգը: Այն հասարակական մոդել է և հոգ է տանում այնպիսի հիմնարար նախապայմանների համար, որոնց պարագայում անհատների ստեղծագործ ուժերը կարող են զարգանալ համատեղ: Դրանով իսկ սոցիալ-շուկայական տնտեսակարգը ազատատենչ ժողովրդավարության սոցիալ-տնտեսական

կարգն է, քանի որ նա նույնպես սնվում է նույն ազդակից, ինչպես և պետական սահմանադրությունը։ Այս տնտեսակարգի գլխավոր խնդիրը մարդու արժանապատվության և ազատության պաշտպանությունն է պետության և այլոց կամայական ոտնձգություններից։ Շնորհիվ դրա՝ նա էականորեն նպաստում է հանրության համակեցության ներքին կայունությանը։

141. Սոցիալ-շուկայական տնտեսակարգն իր ուժը քաղում է նրանից, որ ազատությունը, պատասխանատվությունը, մրցակցությունը և համերաշխությունը մեկ միավոր են կազմում և աջակցում են միմյանց։ Այն ազատ շուկայի և սոցիալական համերաշխության անքակտելի մի համադրություն է։ Սոցիալ-շուկայական տնտեսակարգը սոցիալական է, քանի որ մարդկանց հնարավորություն է տալիս ինչպես հարկն է ապրել ինքնուրույնաբար՝ հոգ տանելով ինչպես իրենց, այնպես էլ իրենց մերձավորների համար։ Այն սոցիալական է, քանի որ անհատների ուժերն ու կարողություններն ուղղորդում է դեպի հասարակական համագործակցություն։ Այն սոցիալական է, քանի որ տնտեսապես հնարավոր է դարձնում սոցիալական ապահովության պետականորեն կազմակերպված մեր համակարգերի հիմքը՝ համերաշխության սկզբունքը։

Սոցիալ-շուկայական տնտեսությունը բարեկեցության և անվտանգության երաշխիքներ է ընձեռում բոլորին։ Սոցիալ-շուկայական տնտեսակարգը նշանակում է հոգածություն նաև բոլոր այն մարդկանց մասին, ովքեր իրենք իրենց համար ի վիճակի չեն սեփական ուժերով պատշաճ կենսամակարդակ ապահովել։ Սոցիալ-շուկայական տնտեսակարգն, այսպիսով, նաև սոցիալական արդարություն է իրականացնում։

142. Սոցիալ-շուկայական տնտեսակարգն իր մեջ միավորում է աշխատելու, արարելու կամք և համերաշխություն։ Համերաշխության սկզբունքը խրախուսող հաստատությունները չպետք է խլացնեն անհատի աշխատելու և արարելու կամքը. Աշխատանքը բարեկեցության կարևորագույն հիմքերից է։ Այս հիմքի վրա է ապահովվում սոցիալական խաղաղությունը։

143. Սոցիալ-շուկայական տնտեսակարգը մրցակցային տնտեսակարգ է։ Սոցիալ-շուկայական տնտեսակարգում տարվող քաղաքականությունը կարգավորող քաղաքականություն է։ Սոցիալ-շուկայական տնտեսակարգը ձեռնարկություններին շնորհում է աշխատանքը խրախուսող ազատություններ և բնակչությանն ապահովում ապրանքների և ծառայությունների լայն առաջարկով։ Այն յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս շուկայում գործել ինքնուրույնաբար և սեփական պատասխանատվությամբ։ Այն ենթադրում է գործուն պետություն, որն ապահովում է մրցակցային պատշաճ նախապայմաններ։ Դրա մեջ մտնում են նաև արհեստագործական ազատությունը, աշխատանքային հարաբերության կողմերի ազատությունը, պաշտպանվածությունը շուկայական արգելքներից և իշխանության չարաշահումներից՝ շուկային տիրապետող ձեռնարկությունների և շուկայական թափանցիկության ապահովման միջոցով։ Սոցիալ-շուկայական տնտեսակարգում ունեցվածքի պաշտպանությունը նախապայման է, որպեսզի տնտեսակարգը համընդհանուր նշանակության օգուտներ բերի՝ դրանով կատարելով իր սոցիալական պարտավորությունը։

144. Ձեռնարկատերերը և ձեռնարկությունների ղեկավարներն իրենց ստեղծագործական մոտեցմամբ և աշխատելու, գործակցելու պատրաստակամությամբ սոցիալ-շուկայական տնտեսակարգի հենասյուներն են։ Մեր երկրի հաջողության համար կարևոր է, որ կանայք և տղամարդիկ պատրաստ լինեն ձեռնարկություն հիմնելու և ռիսկեր ստանձնելու։ Ողջ հասարակությունն է օգուտ քաղում այն ձեռնարկություններից, որոնք արդյունավետ են աշխատում և շահույթ են ստանում։ Շահույթ ստանալու ձգտումն ապահովում է ձեռնարկության հետագա ապահով զարգացումը՝ լուծելով նաև հասարակական խնդիրներ։ ՔԴՄ-ն կողմ է ազատ և սոցիալական պատասխանատվությամբ առաջնորդվող ձեռնարկատիրությանը։ Ձեռնարկատերերը և ձեռնարկությունների ղեկավարներն ապահովում են հուսալի աշխատատեղեր և իրենց համբավով ու մշակութային ինքնությամբ նպաստում Գեր-

մանիայի հեղինակության բարձրացմանը ողջ աշխարհում: Ձեռնարկատերերը հաջողակ տնտեսվարման համար ազատությունների և համապատասխան հիմնարար նախապայմանների և գրավչությունների կարիք ունեն: Կարևոր է, որ ձեռնարկատիրության զարգացումն իր ազդեցությունը թողնի ձեռնարկատիրոջ կամ ձեռնարկության ղեկավարի ֆինանսական դրության վրա:

145. Ով զբաղվում է ձեռնարկատիրությամբ, որոշակի պատասխանատվություն է ստանձնում. պատասխանատվություն՝ գործարար և հասարակական հարաբերություններում, շրջակա միջավայրի, ապագա սերունդների և ուղղակիորեն աշխատակիցների և վերջիններիս ընտանիքների հանդեպ: Բացի այդ՝ ձեռնարկությունները պետք է խրախուսեն կնոջ և տղամարդու հավասարությունը բոլոր ոլորտներում՝ ընդհուպ մինչև ղեկավար պաշտոններ, ինչպես նաև հաշվի առնեն նույնաչափ աշխատավարձի սահմանման սկզբունքը՝ հավասար և հավասարարժեք աշխատանքի դեպքում: Հեռատես ձեռնարկատերերը գիտեն, որ սա բխում է իրենց իսկ շահերից: Սոցիալ-շուկայական տնտեսակարգի շարժիչ ուժը որոշակի պատասխանատվությամբ գործող սեփականատեր-ձեռնարկատերերն են: Այդ պատճառով անհրաժեշտ է Գերմանիայում նույնպես մեծացնել ծառայող կառավարիչների անհատական պատասխանատվության չափը:

146. Սոցիալական գործընկերությունը, տարիֆային ինքնիշխանությունը և ձեռնարկությունների կամ ընկերությունների որոշումներում մասնակից լինելու սկզբունքը մեր տնտեսական և սոցիալական կացութաձևի հիմնաքարերն են և քրիստոնեական եկեղեցիների սահմանած սոցիալական էթիկայի արտահայտություն: Աշխատող մարդու արժանապատվության մասին մեր պատկերացումն այն է, որ վերջինս մասնակից լինի այն որոշումներին, որոնցով ստեղծվում են վերջինիս աշխատանքային գործունեության նախապայմանները:

147. Գործառուներն իրենց հերթին, ինչպես ձեռնարկատերերը, իրենց աշխատանքով, իրենց աշխատունակությամբ և իրենց

պատրաստակամությամբ մեծապես նպաստում են իրենց ձեռնարկության և ողջ ժողովրդական տնտեսության հաջողությանը, դրանով իսկ՝ մեր երկրի բարեկեցությանը և զարգացմանը: Միաժամանակ նրանք էական դեր են խաղում սեփական և իրենց հարազատների գոյության ապահովման հարցում:

Ձեռնարկություններին հաջողության հասնելու համար անհրաժեշտ են լավ կրթված, ստեղծագործ և շահագրգիռ աշխատակիցներ: Գործառուներին անհրաժեշտ են որոշումներ կայացնելու հնարավորություններ, պատասխանատվություն և ազատ գործելու հնարավորություններ՝ իրենց ունակությունները և կարողություններն ամբողջությամբ և հաջողությամբ զարգացնելու համար: Կրթությունը և վերապատրաստումն ապահովում են վերջիններիս աշխատունակությունը և առաջադիմությունը: Միաժամանակ գործառուներին անհրաժեշտ է հիմնավոր աշխատանքային և սոցիալական ապահովագրություն՝ սեփական կյանքը ծրագրել կարողանալու համար: Նրանք իրավունք ունեն ակնկալել համընդհանուր բարեկեցության իրենց հասանելիք բաժինը:

148. Գերմանիայում ձեռնարկությունների հետագա զարգացման և զբաղվածության ապահովման համար աշխատատեղերի տեղափոխումն արտերկիր նույնիսկ կարող է անհրաժեշտ լինել: Բայց մենք ձեռնարկատերերից ակնկալում ենք, որ նրանք այսպիսի որոշումներ կայացնելիս առաջնորդվեն սոցիալական և հասարակական խնդիրները հաշվի առնելու պատասխանատվությամբ և իրենց ջանքերն ուղղեն Գերմանիան տնտեսական կենտրոն դարձնելուն:

2. Սոցիալ-շուկայական տնտեսակարգը համաշխարհայնացման պայմաններում

149. Ոչ թե սահմանափակելով կամ կառավարել-վերահսկելով, այլ ավելի շատ ազատություն և մրցակցություն ապահովելով կարող ենք պահպանել սոցիալ-շուկայական տնտեսակարգի

հզորությունը: Որքան բարձր են միջազգային շուկայում մեր արտադրանքների գները, այնքան էլ բարձր պետք է լինի մեր արտադրանքի որակը: Դինամիկ զարգացող աշխարհում մեզ անհրաժեշտ է ունենալ հետաքրքրասեր, նորարար և ստեղծագործ Գերմանիա: Տնտեսական հաջողությունն այսօր առավել կախված է տեխնոլոգիաներից, տաղանդներից և հանդուրժողականությունից: Միայն բաց և բազմաշերտ հասարակությունն է ի վիճակի ստեղծել ստեղծագործ մթնոլորտ, որտեղ կարող են ծնվել գաղափարներ, և նորարարությունը կարող է բարեկեցություն ապահովել:

150. Որպես ժողովրդական կուսակցություն՝ ՔԴՄ-ն մտադիր է համաշխարհայնացման գործընթացում հավասարապես պաշտպանել թե՛ ձեռնարկատերերի, թե՛ գործառուների, թե՛ ծառայություն մատուցողների և թե՛ ծառայություններից օգտվողների, թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակավայրերի շահերը: Քրիստոնեական մեր պատկերացումների հիման վրա մենք հանդես ենք գալիս հօգուտ այն բանի, որ նաև աշխարհի քիչ զարգացած տարածաշրջաններում ապրող մարդիկ ավելի լավ հեռանկարներ ունենան, անգամ եթե դա մեզ՝ գերմանացիներիս համար տնտեսական մրցակցության խնդիր առաջ բերի: Մեր նպատակը հնարավորությունների է՛լ ավելի մեծ արդարության հասնելն է թե՛ ազգային, թե՛ միջազգային ասպարեզում: Մենք ցանկանում ենք օգտագործել աշխարհում ունեցած մեր ազդեցությունը: Աղքատության, սովի, վարակների, անգրագիտության, կաշառակերության, մարդու իրավունքների հանդեպ ոտնձգությունների, խտրականության և ռազմական հակամարտությունների դեմ պայքարում կարևորագույն շարժիչ ուժ ենք համարում միջազգային առևտրի գնալով մեծացող փոխկապակցվածությունը և նորանոր շուկաների բացումը:

151. Եվրոպական միության տնտեսական և արժեքային միասնականությունը հաջողակ մոդել է և թույլ է տալիս, որ շուկաների բացումն ու մրցակցությունը, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, նաև իրավական, սոցիալական և բնապահպանական չափանիշները, գործի ի շահ բոլորի: Միաժամանակ Եվրոպան աշխարհի այլ քաղաքական և տնտեսական կենտրոնների հետ հարաբերություններում կարևորագույն դերակատար է համաշխարհայնացվող տնտեսության մեջ արդարացի տնտեսակարգային պայմանների հաստատման գործում: Մենք ցանկանում ենք մեծացնել Եվրամիության դերը ապագայի համար այս չափազանց կարևոր խնդրի լուծման գործում:

152. Մենք հանդես ենք գալիս ի շահ միջազգային կազմակերպությունների գործունակության, ուժերի, թափանցիկության և արդյունավետության բարձրացման: Սրանք ազատ և մարդասիրական աշխարհակարգի կերտման համար անհրաժեշտ կառույցներ են: Տնտեսապես ուժեղ պետությունները պետք է պատասխանատվություն ստանձնեն, որպեսզի տնտեսապես ավելի թույլ զարգացած պետությունները կարողանան պաշտպանել իրենց շահերը: ՔԴՄ-ն ցանկանում է համաշխարհային հանրության ներգրավվածության կառույցներն օգտագործել հօգուտ աշխարհում մարդու իրավունքների ամրագրման և բնապահպանական ու սոցիալական նվազագույն անհրաժեշտ չափանիշների իրացման: Անչափահասների աշխատանքը և աշխատողների շահագործումը չպետք է հանդուրժել:

153. ՔԴՄ-ն կողմ է այնպիսի քաղաքականության, որը վստահում է ազատ շուկաների դրական արարիչ ուժին և արդար մրցակցությանը: Բազմակողմ ազատ առևտուրը մեր կարծիքով համաշխարհային տնտեսության աճի և արդարության հաստատման որոշիչ նախապայման է: Առևտրի և կապիտալի առջև շուկաների բացումը, ինչպես նաև միջազգային մրցակցությունը պետք է ընթանան արդար պայմաններում: Մրցակցության այսպիսի համեմատելի և արդար պայմաններ այսօր դեռ չկան: Այդ պատճառով մենք մեր ջանքերը պետք է ուղղենք միջազգային ճանաչում գտած չափանիշների իրացմանը: Անհրաժեշտ է հետևողականորեն վերացնել առկա առևտրային խոչընդոտները:

154. Շուկային ոչ միշտ է հաջողվում իր ներքին հնարա-

վորություններով խոչընդոտել մենատիրությունների և ներքին պայմանավորվածությունների զարգացումը: Միջազգային, մասնավոր, ինչպես նաև պետական դերակատարների անզուսպ իշխանատենչությունը խոչընդոտելու համար անհրաժեշտ է միջազգային շուկաների ազատության պաշտպանություն ապահովել: Սա ենթադրում է միջազգայնորեն համաձայնեցված մրցակցակարգի հաստատում:

155. Տնտեսական քաղաքականության մեր համոզմունքները գնալով ավելի մեծ տարակարծության մեջ են մտնում այնպիսի տերությունների գործողությունների հետ, որոնք պետական ակտիվ միջամտությամբ փորձում են տնտեսական բնագավառի ազգային ռազմավարական նպատակներ իրականացնել: Մենք ցանկանում ենք, որ նաև այս պետությունները համոզվեն ազատ և արդար մրցակցության առավելության մեջ: Մեր նպատակն է մեծացնել միջազգային նորմերի շրջանակը: Բայց քանի դեռ մրցակցային համընդհանուր ընդունելի պայմաններ չկան, և քանի դեռ մեր ազգային շահերը կարևոր ռազմավարական նշանակության բնագավառներում վտանգված են, միանգամայն ընդունելի և օրինաչափ է, որ այս շահերը պաշտպանվեն սեփական պետական ուժերով: Այլ՝ավելի անորոշ պարագաներում առաջնայնությունը կտրվի շուկայի ազատության սկզբունքին:

156. Մտավոր սեփականության հստակ ամրագրված իրավունքները հիմք են ծառայում առաջընթաց ակնկալող և երկարատև հետազոտական ջանքերի համար և մեր տնտեսական հաջողության կարևորագույն նախադրյալներից են: Սակայն աշխարհում շատ հաճախ և ամենատարբեր դրսևորումներով ոտնահարվում է գյուտերի և գաղափարների սեփականության իրավունքը: Հատկապես նորարարությունների կենտրոն Գերմանիայի համար բացառիկ կենտրոնական նշանակություն ունեն առևտրի համաշխարհային կազմակերպության ներսում մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված օրենքի ուժ ունեցող և ընդունելի կանոնների մշակումը, ամրագրումն ու կիրարկումը:

157. Համաշխարհային մասշտաբով գործող ձեռնարկատերերը կարող են շարունակ դուրս գալ ազգային օրենսդրության ոլորտից: Քանի որ շուկաների համընդհանուր կարգավորման կատարյալ մեխանիզմներ չեն կարող լինել, և պետական չափազանց մեծ վերահսկողությունը կարող է տնտեսական խոչընդոտներ առաջ բերել, մենք մեր հույսը կապում ենք պատասխանատվության զգացումով առաջնորդվող ձեռնարկությունների հետ: Այս պատճառով էլ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել բազմազգ ձեռնարկությունների շահերը պաշտպանող կամավոր նախաձեռնություններին, ինպիսիք են, օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության „Global Compact“-ը կամ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) դրույթները:

158. Համաշխարհային ֆինանսական շուկան նպաստում է աշխարհում բարեկեցության բարձրացմանը և ներդրումների տեսքով խթանում շատ զարգացող պետությունների տնտեսական առաջընթացը: Բաց շուկաները և ազատ մրցակիցներն ապահովում են գերմանական կապիտալի շուկայի գրավչությունն ու վճարունակությունը: Ներդրումային այնպիսի հիմնադրամներ, ինչպիսին է, օրինակ՝ Private-Equity-Fonds-ը, կարող են Գերմանիայում նպաստել ձեռնարկությունների էլ ավելի մրցունակ և նորարար դառնալուն: Այդուհանդերձ առանձին մասնավոր ներդրումային խմբերի ֆինանսական միջոցներն այսօր արդեն բազմակի գերազանցում են ձեռնարկությունների և խոշոր բանկերի շուկայական հզորությունները: Այդ պատճառով ցանկանում ենք գործող միջազգային կազմակերպություններն օգտագործել համընդհանուր վստահություն ներշնչող կանոնների ձևավորման և առևտրային խոշոր արենաներում և ֆինանսական շուկաներում ավելի մեծ թափանցիկություն հաստատելու համար:

159. Սպառողները ոչ միայն վայելում են միջազգային մրցակցության պայմաններում ձևավորված մատչելի գներով բազմազան արտադրատեսակները, նրանք նաև մասնակցում են համաշխար-

հայնացման գործընթացին: Իրենց գնողունակությամբ և ներդրումային որոշումներով նրանք իրենց ազդեցությունն են ունենում առանձին արտադրատեսակների, նաև շուկայում արտադրողների գրանցած հաջողության վրա: Գերմանիայում վաճառվող բազմաթիվ արտասահմանյան ապրանքներ չեն արտադրվում միևնույն սոցիալական, իրավական և էկոլոգիական պայմաններում, ինչ Գերմանիայում արտադրվող ապրանքները: Մենք ցանկանում ենք բարելավել պատասխանատու սպառողի գիտակից որոշումներ ընդունելու պայմանները՝ թափանցիկություն ապահովելով միջազգային վավերականության վստահելի երաշխիքների ներմուծման միջոցով:

3. Տնտեսություն և աշխատանք

160. Բազմաթիվ մարդիկ վերջին տասնամյակներում կորցրել են իրենց վստահությունը սոցիալ-շուկայական տնտեսակարգի հանդեպ: Մի պահ տպավորություն ստեղծվեց, որ այն այլևս չի կարող լուծել կարևորագույն տնտեսական և հասարակական խնդիրները, ամենից առաջ՝ գործազրկությունը: Եվ սա ոչ թե այն պատճառով, որ սոցիալ-շուկայական տնտեսակարգը խոչընդոտում է վերոնշյալ խնդիրների լուծմանը, այլ որովհետև ավելի ու ավելի հաճախ են ոտնահարվում նրա հիմնարար սկզբունքները: Համաշխարհայնացման հետևանքով բացթողումներն առանձնապես ցայտուն են երևում:

161. Մենք պետք է կրկին և ավելի ակտիվորեն հանդես գանք սոցիալ-շուկայական տնտեսակարգի հիմնարար սկզբունքների դիրքերից և այն բերենք ավելի ճիշտ հավասարակշռության՝ հասնելու համար այնպիսի նպատակների իրագործման, ինչպիսիք են լիարժեք զբաղվածությունը, կայուն և կանոնավոր տնտեսական աճը, պատկառելի բյուջեն և կայուն սոցիալական ապահովագրության համակարգերը: Այս ամենի մեջ մտնում է նաև արարչագործության պահպանումը և բնական ռեսուրսներին խնայողաբար վերաբերվելը: Այդ դեպքում ապագայում էլ կլինենք ազատության և արդարության, նվաճումների և անվտանգության, իրար հետ և իրար համար ապրող հանրություն ունեցող երկիր: Մեզ առաջնորդող ուժը պիտի լինի սուբսիդիարության սկզբունքը, այն է՝ որքան հնարավոր է՝ քիչ պետական միջամտություն, և որքան հնարավոր է՝ շատ պետական միջամտություն, եթե անհրաժեշտ է: Գերմանիային անհրաժեշտ են հիմնարար բարեփոխումներ, որպեսզի մենք կարողանանք ապահովել մեր բարեկեցությունը և խթանել այն, և այս ամենը՝ արդար պայմաններում: Ի դեպ՝ սոցիալական արդարությունն առավելապես չափվում է քաղաքացիների կենսական հնարավորությունների քանակով և որակով:

162. Այսպիսի բարեփոխումների միջոցով սոցիալ-շուկայական տնտեսակարգը քաղաքացիներին կրկին ավելի լավ հնարավորություններ կընձեռի պասիվ շահառու լինելու փոխարեն իրենց կենսապայմանները սեփական պատասխանատվությամբ կերտելու: Հասարակական և քաղաքական մասնակցությունը փոխլրացնում են միմյանց: Սոցիալ-շուկայական տնտեսակարգը և ժողովրդավարությունը միայն միասնաբար գործելով կարող են շահել քաղաքացիների վստահությունը:

Ավելի շատ մրցակցություն, ավելի շատ ազատություն, ավելի շատ բաժնետիրություն

163. Տնտեսական կարևորագույն կենտրոն երկրի մրցունակությունը կախված է վերջինիս ձեռնարկությունների դինամիկայից: Գերմանիայի տնտեսությունը հիմնված է հարյուրամյակների ավանդույթ ունեցող արհեստագործության, միջին ձեռնարկատիրության, առևտրի, ազատ մասնագիտությունների, արտադրության, միջին օղակի կրթված մասնագետների, ինչպես նաև մի կողմից բնակչությանն անմիջապես հասցեագրված կարիքների բավարարման, մյուս կողմից՝ առաջատար, աշխարհում մրցունակ և միջազգայնորեն հաջողակ ձեռնարկությունների վրա: Միջին ձեռնարկությունները, ծառայություններ մատուցող և արհես-

տագործական ընկերությունները, ինչպես նաև ազատ մասնագիտությունները մեր տնտեսության ողնաշարն են։ Նրանք են հիմնականում ապահովում միջին մասնագիտական կրթությունն իրենց հարկի տակ, նաև՝ աշխատատեղերի մեծ մասը։ Ըստ այդմ, պետության գործառույթն է խրախուսել հենց մասնավոր սեփականության ոլորտը, փոքր և միջին ձեռնարկատիրություններին՝ ստեղծելով նրանց գոյության և զարգացման համար անհրաժեշտ պայմաններ։ Ավելի շատ շուկա նշանակում է ավելի շատ շանսեր՝ ուղղված մասնավոր փոքրիկ սեփականատիրությունների հաջողակ հիմնմանը։ Մենք ցանկանում ենք նվազեցնել պետական քվոտան, վերացնել բյուրոկրատիան, աշխատանքային իրավունքը դարձնել ավելի հասկանալի և ճկուն, ինչպես նաև հարկային իրավունքը դարձնել էլ ավելի մրցունակ և բարելավել ձեռնարկությունների ֆինանսավորման պայմանները։

164. Մեր նպատակն է բարձրացնել վստահությունը Գերմանիայի հանդեպ՝ որպես ներդրումների համար բարենպաստ երկրի։ Մենք ցանկանում ենք հզորացնել Գերմանիան՝ դարձնելով այն ձեռնարկությունների կենտրոնակայանների համար գրավիչ նստավայր և ներդրումային կենտրոն՝ նաև միջազգային ռիսկային ներդրողների համար. մենք ցանկանում ենք հասնել մեր արտադրական ծավալների էլ ավելի մեծացմանը սեփական սահմաններից ներս։ Համաշխարհային տնտեսական աճի և զբաղվածության մեջ մեծ դեր է վերագրվում Գերմանիային՝ որպես ֆինանսական հզորագույն կենտրոնի։

165. Մենք պետք է ճանապարհ հարթենք ազատության և մրցակցության համար։ Սա առաջին հերթին նշանակում է շուկաների բացում և բաց շուկաների պահպանություն, անարդար մրցակցության կանխում և տնտեսական իշխանության հակամրցակցային գործելակերպի խոչընդոտում։ Մենք ցանկանում ենք սահմանափակել և վերացնել պետական ստորաբաժանումները, ինչպես նաև մասնավորեցնել պետական կառավարման տնտեսվարող սուբյեկտները։ Նույնը վերաբերում է համայնքային կառավարման ոլորտին. պետական ձեռքը պետք է գործի միայն այն

ժամանակ, երբ այս կամ այն աշխատանքը կամ ծառայությունը մասնավոր հիմունքներով ավելի լավ արվել չի կարող։

166. Մրցակցային քաղաքականության շատ խնդիրներ այսօր արդեն տեղափոխվել են եվրոպական ներքին շուկայական հարթություն։ Ներքին շուկայի առջև ծառացած մարտահրավերների և համաշխարհայնացման պայմաններում մենք ցանկանում ենք, որ Եվրամիության մրցակցային վերահսկողությունը, նրա անդամ պետությունների առանձին ազգային մրցակցային հարցերով իրավասու մարմինների փորձի համադրմամբ, առավել ժամանակակից և զարգացած դառնա։

167. Մրցակցությունը սպառողների շահերի պաշտպանության հարցում կարևորագույն նախադրյալ է, քանի որ մրցակցություն խոչընդոտող ամեն մի մենաշնորհային համակարգ սահմանափակում է ապրանքների բազմազանությունը և սպառողների ընտրության ազատությունը։ Սպառողների իրավունքները քաղաքացիական իրավունքներ են։ Սպառողների շահերի պաշտպանությունը քաղաքական առանցքային խնդիր է։ Այն ընդհանուր սպառողական քաղաքականության մասն է կազմում, քաղաքականություն, որի խնդիրն է հավասարակշռություն հաստատել սպառողների և արտադրողների շահերի միջև՝ նպաստելով Գերմանիայում կյանքի բարձր որակի պահպանմանը։ Անհրաժեշտ է անհատական որոշումների և պետական հոգածության միջև հավասարակշռություն հաստատելու միջոցով հասնել սպառողների շահերի պաշտպանության առավելագույն նպատակահարմարության։ Ապրանքների և նրանց որակի մասին վստահություն և լավատեսություն ներշնչող, ամբողջական և գործնական տեղեկատվությունը հնարավորություն է տալիս դրսևորելու պատասխանատու սպառողական վերաբերմունք։ Մեր իդեալը խելացի և տեղեկացված սպառողն է։ Սպառողների պաշտպանությունը միայն պետության գործառույթը չէ. այն արտադրողների, վերամշակողների, վաճառողների և սպառողների համագործակցության և պատասխանատվության կարիքն ունի։ Մենք չենք ցանկանում, որ պետությունը ուղղորդիչ դեր խաղա սպառողական ոլորտում։

168. Գրավիչ տնտեսական կենտրոնը պետք է ունենա գործուն ենթակառուցվածքներ: Հատկապես Գերմանիայի համար՝ որպես Եվրոպայի սրտում գտնվող տարանցիկ երկրի, Եվրոպայի տնտեսական ինտեգրացիան աճող տրանսպորտային հոսքեր է ենթադրում: Տրանսպորտային բոլոր ոլորտների ենթակառուցվածքների առավել արդյունավետ օգտագործումը, պահանջարկին համապատասխան նրանց հետագա ընդլայնումը և խելացի վարչարարությունը ավելի մեծ տնտեսական աճ ապահովելու որոշիչ նախապայմաններ են: Սա կարևոր է ինչպես արդյունաբերականացված, այնպես էլ գյուղական շրջանների զարգացման հնարավորությունների առումով: Ընդ որում, ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտություն զգացվում է ինչպես նոր (նախկին դեմոկրատական), այնպես էլ հին հողերում: Այս ոլորտում ներդրումների ապահովումը պետական բյուջեի հնարավորություններից վեր է: Այդ պատճառով անհրաժեշտ է, որպես կայուն և շահավետ լուծում, ավելի ու ավելի շատ օգտվել տրանսպորտային ենթակառուցվածքների մասնավոր ֆինանսավորման հնարավորություններից: Այս ամենից բացի՝ տնտեսական կենտրոն հանդիսացող մեր երկրի համար հիմնային նշանակություն ունի էներգիայի ապահով, բնապահպան և շահավետ արտադրությունը:

169. Սոցիալ-շուկայական տնտեսակարգի հաջողակ բարեփոխման համար Գերմանիային անհրաժեշտ են գործունակ և նորարար քաղաքացիներ ու տնտեսություն: Մենք ցանկանում ենք ապագայի շուկաներ բացել: Գերմանիայից արտահանվող նորարարությունները, նոր արտադրատեսակները և ծառայությունները կարող են հաջողակ լինել համաշխարհային շուկայում, եթե նրանք նաև Գերմանիայում հաջողակ կլինեն: Հայտնագործությունների և գյուտերի (պատենտների) երկիր Գերմանիան պետք է դառնա նաև գաղափարների իրագործման երկիր: Գերմանիան պետք է խրախուսի մարդկանց, ովքեր պայծառ միտք և լուրջ տեսլականներ ունեն, պատշաճ կերպով գովազդի նրանց աշխարհով մեկ՝ միաժամանակ նախադրյալներ ստեղծելով դրա համար:

Գերմանիային անհապաղ անհրաժեշտ են արհեստագործության, ծառայությունների մատուցման և արդյունաբերության ոլորտի որակյալ մասնագետներ:

Աշխատանք բոլորի համար

170. Այս նշանաբանը սոցիալական արդարության միջուկն է: Աշխատանքը ինքնակայացման հնարավորություն է տալիս, կյանքին իմաստ է հաղորդում և հասարակական մասնակցության վճռորոշ նախապայման է: Բոլոր մարդիկ անհրաժեշտ են, ոչ ոք չպետք է բացառվի: Աշխատանքը եկամուտ և բարեկեցություն է ստեղծում: Սոցիալ-շուկայական տնտեսակարգը ձգտում է հասնել մարդկանց լիարժեք զբաղվածության: Այս նպատակը պարտավորեցնում է պետությանը, նաև՝ աշխատանքային հարաբերության կողմերին: Համատարած գործազրկությունը անտանելի է, անընդունելի և տնտեսապես վնասաբեր: Հեռանկարների բացակայությունը կարող է ամբողջ ընտանիքներ կործանել և բացասական ազդեցություն թողնել բազում սերունդների կենսական հնարավորությունների վրա:

171. Գերմանիայում գործազրկության հիմնական պատճառները կառուցվածքային են: Այդ պատճառով մեզ անհրաժեշտ է ապահովել ոչ միայն կայուն տնտեսական աճ, այլև նպատակային կրթական ներդրումներ և աշխատաշուկայի համապարփակ բարեփոխում: Մենք ցանկանում ենք զբաղվածության ավելի լավ հնարավորություններ ստեղծել տարեցների, պակաս որակավորում ունեցողների և երկարաժամկետ գործազուրկների համար: Հենց նրանք են զգում իրենց ազատությունից և բաժնետիրությունից դուրս վիճակում:

172. Աշխատաշուկայում կարևորվում է գործառուի պաշտպանվածության օրինական իրավունքի, գործազուրկների զբաղվածության հնարավորությունների և ձեռնարկությունների շահերի միջև արդարացի հավասարակշռության պահպանումը: Աշխատաշուկայում գործող պաշտպանիչ դրույթները կամ աշխա-

տանքային իրավունքը պետք է այնպես կազմված լինեն, որ չնպաստեն գործազրկությանը: Աշխատանքից ազատման պաշտպանվածության ճկունացումը, որը բարելավում է գործազուրկի հետագա զբաղվածության հնարավորությունները, արդարության հաստատման կարևոր պատվիրան է: Պետք է գործի հետևյալ կանոնը. աշխատանք՝ առաջին հերթին: Եվ ուրեմն՝ շահերի հավասարակշռության պահպանման խնդիրը աշխատանքային հարաբերության երկու կողմերի միասնական խնդիրն է:

173. Տարիֆային անկախությունը տնտեսական կենտրոն հանդիսացող Գերմանիայի կայունության երաշխավորն է: Այն սոցիալ-շուկայական տնտեսակարգի անքակտելի մասն է կազմում: Աշխատանքային հարաբերության կողմերը 21-րդ դարում արագ փոփոխվող աշխատանքային պայմաններին ճկուն պատասխաններ գտնելու գործընթաց են մեկնարկել: Տնտեսության ճյուղերի քարացած տարիֆային պայմանագրերը, որոնք բոլոր տնտեսվարողների համար նույնն են, բավարար լուծում չեն այլևս: Արհմիությունները և գործատուների միությունները կոչված են իրենց պատասխանատվությունից ավելի մեծ բաժին հատկացնել իրենց տնտեսվարող սուբյեկտներին: Այսպես՝ համընդհանուր հաստատման արժանացած շրջանակային տարիֆային պայմանագիրը կարող է լրացվել և գործածվել տվյալ տնտեսվարող սուբյեկտի առանձնահատուկ պահանջմունքների համաձայն: Այս գործընթացը մենք ցանկանում ենք ընդլայնել՝ տնտեսվարող սուբյեկտների՝ իրավականորեն ապահով միավորումներ կազմելով: Մենք կշարունակենք զարգացնել գործառուների որոշումներ կայացնելու և բաժնետիրության իրավունքը՝ որպես շահերի ներկայացման միջոցի՝ դարձնելով այն հեռահար և շահավետ թե՛ տնտեսվարող սուբյեկտների, թե՛ աշխատողների համար: Այն պետք է հաշվի առնի ձեռնարկությունների միջև գնալով աճող միջազգային փոխկապակցվածությունը:

174. ՔԴՄ-ն ցանկանում է կապիտալի հետ կապված սոցիալական գործընկերության շրջանակում զարգացնել ձեռնարկությունների շահույթի և կապիտալի մեջ առանձին գործառուների՝

ավելի մեծ մասնաբաժին ունենալու հնարավորությունները: Սա աշխատողների առջև կբացի լրացուցիչ եկամտի աղբյուրներ, կենսաթոշակային լրացուցիչ ապահովություն, կհաստատի ավելի շատ արդարություն և կստեղծի կապվածություն աշխատակիցների և իրենց ձեռնարկությունների միջև: Համապատասխան մեխանիզմները, այդ թվում՝ անվճարունակության դեմ ապահովագրությունը պետք է հնարավորինս մոտ լինեն տվյալ ձեռնարկության պահանջմունքներին և հաշվի առնեն ձեռնարկության առանձնահատկությունները: Բացի այդ՝ ձեռնարկության կապիտալի մեջ ներգրավվածությունը խթանում է ձեռնարկության սեփական կապիտալի քվոտան:

175. Հասարակական բարեկեցությունը գալիս է աշխատանքից: Որքան ավելի մեծ տնտեսական աճ, այնքան ավելի շատ աշխատատեղ և հակառակը. այս երկուսը պայմանավորված են միմյանցով: Ճկուն աշխատաժամանակի մոդելների օգտագործմամբ, օրինակ՝ տարեկան աշխատաժամանակի բաշխմամբ հնարավոր է աշխատանքն ավելի ճկուն և արդյունավետորեն կազմակերպել: ՔԴՄ-ն աշխատանքային հարաբերության կողմերին այս առումով քաջալերում է օգտվել աշխատաժամանակի ճկուն մոդելներից՝ կրճատելով անվճարունակության ռիսկերը:

176. Աշխատանքային գործունեության ոչ կամավոր դադարեցումը օրենքով կամ տվյալ ձեռնարկության պահանջներով սահմանված կենսաթոշակային տարիքի պատճառով, որպես մարդկային արժանապատվությունը ոտնահարող հանգամանք, շատ հաճախ և իրավացիորեն հարուցում է մարդկանց դժգոհությունը: Տարիքային սահմանների հաստատման իմաստը կենսաթոշակային իրավունքների բավարարման մեջ է: Բայց եթե որևէ մեկն ուզում է աշխատել սահմանված տարիքից երկար, չպետք է հանդիպի ոչ մի խոչընդոտի: Աշխատանքային շուկան և աշխատուժերը պետք է միմյանց վրա փոխազդելով այնպես զարգանան, որ արդյունքում ժողովրդագրական փոփոխությունները կարգավորվեն լավագույնս:

177. Բոլոր քաղաքացիները պետք է կարողանան գոյություն երաշխավորող եկամուտ ստանալ: Մեր աշխատանքային քաղաքականությունն ասում է. աշխատանքը պետք է գնահատվի: Երբ մարդ աշխատում է, ավելին պետք է վաստակի, քան չաշխատողը, և սա չի հակասում աշխատանքային արդարության սկզբունքին: Մենք ցանկանում ենք ստեղծել հիմնարար այնպիսի պայմաններ, որոնք նաև ցածր որակավորում ունեցող մարդկանց գրավեն արժանապատիվ վարձատրությամբ և աշխատավարձով օրինական ամենահասարակ զբաղվածության ու աշխատանքի: Այս նպատակով մենք ցանկանում ենք ֆինանսապես աջակցել ցածր վարձատրվող գործառուներին: Սա նաև պետք է շահագրգռի աշխատանք փնտրողներին՝ օգտվելու զբաղվածության ընձեռած առավելություններից, և պետք է գործատուներին քաջալերի ստեղծել նոր աշխատատեղեր: Մենք ցանկանում ենք աջակցություն ցուցաբերել աշխատանքին և ոչ գործազրկությանը:

178. Մենք չենք ուզում, որ Գերմանիայում մրցակցություն ծավալվի ցածր աշխատավարձերի հարցում: Անընդունելի վարձատրությունները, որոնք զգալիորեն կզիջեն տվյալ ոլորտի և բնակավայրի համար սահմանված ընդունելի չափերին, հարկավոր է արգելել:

179. Աշխատավարձի հետ կապված լրացուցիչ ծախսերի բարձր չափը նպաստում է գործազրկության և ստվերային աշխատանքի աճին: Մենք ցանկանում ենք կրճատել աշխատավարձի հետ կապված լրացուցիչ ծախսերը և սոցիալական ծախսերը քայլ առ քայլ և հնարավորինս տարանջատել աշխատանքային ծախսերից՝ դրանով իսկ խոչընդոտելով աշխատատեղերի հոսքն արտերկիր կամ ստվերային աշխատաշուկա:

4. Ժողովրդագրական փոփոխությունների ձևավորում. սոցիալական ապահովություն բոլոր սերունդներին

180. Համերաշխությունն ու սոցիալական ապահովությունը չեն բխում առաջին հերթին հենց պետությունից: Մարդն իր բնությամբ սոցիալական, հանրության հետ շաղկապված, համերաշխության ունակ և համերաշխության պարտավորված էակ է: Ընտանիքից սկսած՝ հարևանության մեջ, հասարակական աշխատանքում, միավորումներում և նախաձեռնություններում, եկեղեցիներում և քրիստոնեական համայնքներում կան շատ սոցիալական կենտրոններ և հաստատություններ, որոնց գործունեության հիմքում համերաշխության սկզբունքն է: Եթե համերաշխությունը դադարի բխել հասարակության միջից, այն մի օր ընդհանրապես կդադարի գոյություն ունենալ, երբ խոսքը վերաբերի սոցիալական ապահովության հիմնարար սկզբունքներին: Ամուսնությունը, ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը և մասնագիտական կրթությունը մարդու կենսական հնարավորությունների և հետագա սոցիալական բարօրության համար ավելի կարևոր են, քան շատ այլ բաներ:

Սոցիալական հոգածություն իրականացնող մասնավոր և պետական մարմինները կարևոր աշխատանք են կատարում սուբսիդիարության՝ սահմանադրորեն օրինական սկզբունքի հիման վրա:

181. ՔԴՄ-ն պարտավորվել է իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որ բարելավի մարդկանց կենսական հնարավորություններն ու հասարակությունում նրանց համակեցությունը: Մենք մերժում ենք ապահովության և համերաշխության սոսկ ֆինանսական աջակցության վրա հիմնված պատկերացումները: Միայն անձնական պատասխանատվության, պետական հոգածության և քաղաքացիական ջանքերի համադրությունը կարող է անվտանգություն և ապահովություն ստեղծել մարդկանց համար:

182. Սոցիալական պետությունը մեծ հաջողությունների է հասել: Այն շարունակում է անփոխարինելի մնալ: Սոցիալական ապահովության համակարգերը մեծամասամբ կերտել է ՔԴՄ-ն: Նրանք համերաշխության սկզբունքով, ռիսկերի նվազեցման գնով ապահովություն են երաշխավորում մարդկանց: Այս համակարգերը բերել են ընդարձակ բարեկեցություն, սոցիալական խաղաղություն և բաժնետիրություն: Բայց նրանք իրենց խնդիրներն ապագայում կարող են լուծել միայն այն դեպքում, եթե զարգանան և փոփոխվեն: Մեր նպատակն է ունենալ ոգևորող սոցիալական պետություն, որը անհատներին է՛լ ավելի կշահագրգռի և նրանց համար պայմաններ կստեղծի իրենց հնարավորությունների սահմաններում ստանձնել անձնական պատասխանատվություն և ցուցաբերել անձնական նախաձեռնություններ:

183. Սոցիալական ապահովության համակարգերի ստեղծման ճանապարհին մենք առաջնորդվում ենք երեք սկզբունքով. այդ համակարգերը պետք է մեծացնեն անձնական պատասխանատվության դերը, պետք է համապատասխանեն սերունդների միջև արդարության սկզբունքին և չպետք է ոտնահարեն աշխատանքային /ունակությունների դրսևորման/ արդարության սկզբունքը: Պետք է կրճատվի այս համակարգերի կախվածությունը աշխատանքային գործունեությունից: Այդ պատճառով պետք է շարունակել միմյանցից տարանջատել սոցիալական ապահովությունն ու աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև ֆինանսավորումը դնել ավելի լայն հիմքի վրա: Մեր սոցիալական ապահովության համակարգերը պետք է հաշվի նստեն տարբեր պահանջմունքների, կենսափուլերի և կենսաձևերի հետ: Այդ հարցում պետք է բոլորը վստահաբար ապահովագրված լինեն ռիսկերից: Հարկավոր է մարդկանց մեջ խրախուսել սեփական /անհատական/ հոգածություն ապահովելու պատրաստակամությունն ու կարողությունը: Մրցակցությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը, ծախսեր կատարելու և պատասխանատվության գիտակցությունը և սուբսիդիարության սկզբունքը պետք է խրախուսվեն ապահովության բոլոր համակարգերում: Մենք վճռականորեն կպայքարենք սոցիալական հատկացումների չարաշահումների, ինչպես նաև անօրինական աշխատանքի դեմ, քանի որ սրանք կործանում են համերաշխությունը:

Առողջապահական ապահովագրություն

184. ՔԴՄ-ն ցանկանում է, որ նաև ապագայում յուրաքանչյուր ոք Գերմանիայում, անկախ եկամտից, տարիքից կամ առողջական ռիսկերից, ստանա որակյալ և իր բնակավայրին մոտ բժշկական օգնություն, և որ բոլորը մասնակից լինեն երկրում բժշկական առաջընթացին: Առողջապահության համակարգի ազատ էության միջուկի կազմում բժիշկներ ընտրելու ազատությունն ու բուժմասնագետների ազատ գործունեությունն են:

185. Ժողովրդագրական փոփոխությունների և բժշկական ու բժշկատեխնիկական առաջընթացի պայմաններում առողջապահական ապահովագրության համակարգի կազմակերպումը և ֆինանսավորումը պետք է զարգացնել հեռատեսորեն: Պետք է խթանել և խրախուսել անձնական պատասխանատվությունը, սեփական առողջության մասին հոգալը և հիվանդությունների կանխարգելումը, պետք է լիարժեք օգտագործվի արդյունավետության և տնտեսական շահութաբերության ողջ ներուժը, ինչպես նաև բացվեն անհատական ընտրության և որոշումներ կայացնելու շատ հնարավորություններ:

186. Առողջ ապրելակերպի շնորհիվ հիվանդությունների կանխարգելումը և առողջության պահպանումը յուրաքանչյուր անհատի պատասխանատվությունն է և բխում է նրա շահերից: Կանխարգելումն այդ իսկ պատճառով պետք է զարգանա որպես ինքնուրույն սյուն՝ բժշկական օպերատիվ միջամտության, վերականգնողական և խնամքի ոլորտների կողքին: Խրախուսական մոդելների, կամընտրական կամ ինքնուրույնաբար սահմանվող տարիֆների զարգացումը կարևոր քայլ է անձնական պատասխանատվության, կանխարգելման և առողջապահական ոլորտի ֆինանսավորման խթանման ճանապարհին:

187. Մեր առողջապահական ազատ և ինքնակառավարվող համակարգի որակը, անխափան գործունեությունը և ֆինանսավորումը ապահովելու համար ցանկանում ենք խթանել որակի մրցակցությունը: Այս հարցում կատարված աշխատանքը և ծախսերը պետք է ավելի թափանցիկ դառնան:

188. Օրենսդրությամբ ամրագրված առողջապահական ապահովագրության մեջ աշխատանքով ձեռք բերված եկամուտներին հարակից ֆինանսավորումը աստիճանաբար պետք է լրացվի համերաշխության խրախուսական տարրերով: Սրանք հնարավորինս շուտ պետք է փոխարինվեն կապիտալի կուտակման համերաշխության խրախուսական մոդելով: Շատ ցածր եկամուտով մարդիկ պետք է ստանան սոցիալական օժանդակություն: Քանի որ երեխաները համերաշխության համակարգերի շարունակականությունն ապահովելու ամենակարևոր նախապայմաններից մեկն են, նրանց ապահովագրությունն ապագայում պետք է իրականացվի պետականորեն: Երեխաներին հատկացվելիք սոցիալական օժանդակությունն ու ապահովագրությունը կֆինանսավորվեն պետական բյուջեից: Առողջապահական և աշխատանքային ծախսերի այս աստիճանական տարանջատման շնորհիվ առողջապահական ապահովագրությունը կստանա ապագայի պահանջմունքներին համապատասխանող ֆինանսավորում:

Ծերության ապահովագրություն

189. Ծերության ապահովագրությունը Գերմանիայում հիմնված է երեք սյուների վրա՝ օրենքով սահմանված կենսաթոշակային ապահովագրություն, հիմնարկ-ձեռնարկության կողմից իրականացվող և անձնական հոգածություն:

190. Վերաբաշխման հիմունքով օրենքով սահմանված կենսաթոշակային ապահովագրությունը ներկայումս ապահով ծերության ամենակարևոր երաշխիքն է: Այն հիմնվում է «սերունդների միջև կնքված պայմանագրի» վրա: Բնակչության տարիքային խմբերի հարաբերակցության փոփոխությունները և սոցիալական

պարտադիր վճարումներ իրականացնող աշխատողների թվի շարունակական անկումը հանգեցնում են նրան, որ գնալով ավելի քիչ աշխատողներին բաժին է ընկնում կենսաթոշակառուների ավելի մեծ թիվ: Սերունդների միջև կնքված պայմանագիրն այդ պատճառով պետք է դրվի ավելի նոր և կայուն հիմքի վրա, ինչը երիտասարդ մարդկանց հնարավորություն կտա ավելի վստահ ծրագրելու իրենց կյանքը, իսկ տարեցներին՝ ակնկալելու ավելի մեծ հուսալիություն:

191. Ակտիվ սերունդն իր վճարումներով ապահովում է այլևս անաշխատունակ սերնդի եկամտի մեծ մասը և իր երեխաների միջոցով երաշխավորում համերաշխության հանրության հետագա գոյությունը: Նաև այդ պատճառով է, որ մենք հանդես ենք գալիս ի շահ ընտանեսեր հասարակության, որը ճանաչում և գնահատում է դաստիարակություն իրականացնողների՝ ծնողների բազմակի ծանրաբեռնվածությունը:

192. Օրենքով սահմանված կենսաթոշակային ապահովագրությունը պետք է հետագայում նույնպես զգալիորեն պայմանավորված լինի վճարումներով և չպետք է ցածր լինի որոշակի ապահովության մակարդակից, բայց և չպետք է գերծանրաբեռնի սոցիալական վճարումներ իրականացնողներին: Օրինական կենսաթոշակային ապահովագրության նպատակահարմարությունը կարող է կասկածի տակ դրվել, եթե այն մատուցի միմիայն այնպիսի ծառայություններ, որոնք այլ ապահովության համակարգերում կարելի է ստանալ առանց վճարումների: Հետևանքը կլինի բոլորին հասցեագրվող նվազագույն օժանդակությունը կամ հարկային եկամուտներից հատկացվող սոցիալական օգնությունը:

193. Օրենքով հաստատված կենսաթոշակն ավելին է, քան տարեցների շրջանում աղքատությունից խուսափելու միջոց: Այն յուրաքանչյուրին շնորհում է որոշակի ազատություն և գնահատում այն ծառայությունները, որոնք ժամանակին կատարվել են որպես վճարումներ, երեխաների դաստիարակություն կամ հարազատների խնամք: Այն նաև հետագայում անհրաժեշտ ծառա-

յություններ է մատուցում ժառանգներին, և մարդկանց, ովքեր հիվանդության պատճառով այլևս ի վիճակի չեն աշխատել:

194. Սակայն օրենքով սահմանված կենսաթոշակն ապագայում այլևս չի կարող ապահովել այնպիսի կենսամակարդակ, ինչպիսին ցայժմ գոյություն է ունեցել տարեց մարդկանց համար: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ պատշաճ կենսամակարդակ ապահովելու գործընթացին միանան նաև հոգածության այլ ձևեր, ինչպես օրինակ՝ անձնական և հիմնարկ-ձեռնարկությունների կողմից իրականացվող տարիքային ապահովագրությունը: Այսպիսի հոգածության ձևերն արդյունավետ են և հարկ է դրանք հետևողականորեն խթանել:

195. Հիմնարկ-ձեռնարկությունների սահմանած տարիքային ապահովագրությունը գնալով ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում: Գործառուներից ակնկալվում է ավելի մեծ շարժունակություն և ճկունություն: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հիմնարկ-ձեռնարկությունների սահմանած տարիքային ապահովագրության համար անհրաժեշտ նախապայմաններին: Մենք հանդես ենք գալիս նաև հանուն անձնական, ձեռնարկությունից դուրս առանձին վարվող տարիքային խնամքի հաշիվների, որոնց մուծումներ կարող են անել ինչպես գործատուները, այնպես էլ գործառուները, և որոնք կարճ ժամանակում կարող են հնարավորություն տալ համապատասխան սոցիալական օժանդակություն ստանալու պահանջ ներկայացնել: Այսպիսի կենսաթոշակների մասով պահանջը պետք է բավարարվի հնարավորինս կարճ ժամկետներում:

Խնամքի ապահովագրություն

196. Միության կողմից ներմուծված խնամքի ապահովագրությունն իրեն արդարացրած համակարգ է: Այն պետք է շարունակի ապագայում ևս նպաստել խնամքի հետ կապված ռիսկերի կրճատմանը՝ առաջարկելով խնամքի և հոգածության ավելի բարձր որակ: Ամբողջական պարտադիր ապահովագրությունը

հետագայում ևս անխուսափելի է: Այն սակայն անհատին չի խոչընդոտում անձնական պատասխանատվությամբ և անձնական նախաձեռնությամբ մասնակցել ռիսկերի կրճատման և խնամքի կազմակերպման գործընթացին:

197. Խնամքի սոցիալական ապահովագրությունը հեռանկարային ֆինանսական հիմքերի վրա դնելու համար վերաբաշխման սկզբունքով կատարվող ֆինանսավորումը աստիճանաբար պետք է լրացնել համերաշխության խրախուսական բաղադրիչներով և, սերունդների միջև արդարության սկզբունքից ելնելով, հնարավորինս շուտ փոխարինել կապիտալով ապահովված համերաշխության խրախուսական մոդելով: Խրախուսանքի չափը սահմանելիս պետք է հաշվի առնել ծնողների ավանդը երեխաներ դաստիարակելու գործում՝ նրանց համար պետբյուջեից հատկացնելով սոցիալական լրացուցիչ օժանդակություն:

198. Կանխարգելումն ու առողջության վերականգնումը խնամքի հետ կապված միջոցառումների համալիրում պետք է առաջնային լինեն: Ամբուլատոր բուժումն առաջնային պետք է լինի ստացիոնար բուժումից՝ սա է մեր սկզբունքը: Պետք է զարգանան և խթանվեն կացության և խնամքի նոր ձևեր: Խնամատարական բյուջեների միջոցով, որոնք խնամքի կարիք ունեցողները անձնական տնօրինմամբ կարող են կիրառել ամբուլատոր, կիսաստացիոնար կամ ստացիոնար բուժումների դեպքում, և նաև խնամքի համար սահմանվող ժամկետների միջոցով մենք ցանկանում ենք խթանել նաև տնային խնամքի համակարգը և արժանին փոխհատուցել այդ խնամքն իրականացնող հարազատներին:

199. Խնամքի ապահովագրության համակարգի և ֆինանսավորման մեջ կատարվելիք փոփոխությունները հնարավորություններ են բացում ավելի դինամիկ դարձնելու խնամքի հետ կապված ծառայությունները և նորովի սահմանելու խնամքի կարիք հասկացությունը՝ հատկապես ի շահ այն մարդկանց, ովքեր ունեն սահմանափակ կենցաղային կարողություններ, ինչպես,

օրինակ՝ ծերունական մտավոր թուլության դեպքում: Սրա նպատակը խնամակալության իրատեսական, կայուն մակարդակի ապահովումն է, և խնամքի կարիք ունեցողի, նրա հարազատների և սոցիալական վճարումներ իրականացնողների հաշվին ավելացող հավելյալ վճարումների խոչընդոտումը:

Գործազրկության ապահովագրություն

200. Գործազրկության ապահովագրությունը գործազրկության դեպքում որոշ սահմանափակ ժամանակով նախկինում կատարած աշխատանքի դիմաց ստացած եկամուտի չափի բավական մեծ մասի վճարում է երաշխավորում: Աշխատանքի տեղավորման հարցում միջնորդության, աշխատունակության պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառումների շնորհիվ գործազրկության ապահովագրության համալիրը կատարում է կարևոր սոցիալական, առողջապահական և տնտեսական գործառույթներ:

201. Գործազրկության ապահովագրությունը շարունակում է մնալ համերաշխության ապահովագրություն, որը յուրաքանչյուրին որոշակի ժամանակահատվածում երաշխավորում է տոկոսային հարաբերությամբ հավասար եկամուտ և համերաշխության սկզբունքով նվազեցնում անհատին սպառնացող ռիսկերը: Գործազրկության նպաստի տևողությունը պետք է պայմանավորված լինի կատարված վճարումների տևողությամբ: ՔԴՄ-ի տեսանկյունից՝ գործազրկության ապահովագրությունը մեծ նշանակություն ունի հատկապես ավելի ճկուն աշխատաշուկա ունենալու անհրաժեշտության համատեքստում:

202. Գործազրկության ապահովագրությունը գործազուրկներին հնարավորություն է տալիս կարիքից դրդված պարտադրված չլինել ստանձնելու առաջին իսկ պատահած աշխատանքը, այլ փնտրելու իր հնարավորություններին համապատասխան աշխատանք: Մյուս կողմից՝ գործազուրկները պետք է ավելի մեծ ճկունություն հանդես բերեն՝ անհրաժեշտության դեպքում նաև փոքրինչ անհամապատասխան աշխատանք ստանձնելու համար: Գործազրկության մեջ հայտնվելու դեպքում մենք ցանկանում ենք մարդկանց համար նոր աշխատանքի անցնելու ավելի մեծ հնարավորություններ և գրավչություններ ստեղծել՝այդ ընթացքում շարունակելով երաշխավորել նրանց հավասարակշիռ ապահովագրությունը գործազրկությունից:

203. Գործազրկության ապահովագրությունը պետք է կրի զբաղվածությունը խրախուսող բնույթ և սահմանափակվի բացառապես իր ապահովագրական գործառույթներով: Մեր առաջնային նպատակն աշխատանքի առաջնային շուկայում առավել մեծ զբաղվածության ապահովումն է. այս նպատակին հասնելու համար ցանկանում ենք կիրառել ակտիվ աշխատանքային քաղաքականություն՝ իր բոլոր գործիքներով: Համահասարակական այնպիսի խնդիրներ, ինչպիսին, օրինակ՝ մասնագիտական կրթություն ստանալու կարողության վերականգնումն է, ըստ իրավասությունների ոլորտների՝ կֆինանսավորվեն պետական բյուջեի միջոցներից:

Ապահովագրություն դժբախտ պատահարներից

204. Օրենքով սահմանված ապահովագրության այս տեսակին մեծ դեր է վերապահված գործառուի աշխատանքի ապահովության, դժբախտ պատահարներից նրա պաշտպանվածության և առողջապահության հարցերում: Այն կանխարգելման, բուժսպասարկման և առողջության վերականգնման կարևորագույն պատվար է: Օրենքով սահմանված ինքնակառավարվող ապահովագրության այս տեսակն ապագայում ավելի մեծ պատասխանատվություն ստանձնած իր միավորումներով պետք է համապատասխանի տնտեսական չափանիշներին և սահմանափակվի միմիայն օրինական զբաղվածության ընթացքում տեղի ունեցող դժբախտ դեպքերով:

Հաշմանդամ մարդկանց հասցեագրվող սոցիալական ապահովագրություն

205. Մենք ցանկանում ենք երաշխավորել կյանքին լիարժեք մասնակցության և իրենց կյանքն ինքնուրույն որոշելու հաշմանդամ մարդկանց ապագան: Սա նշանակում է, որ հաշմանդամ մարդիկ՝ իրավահավասար, ինչպես բոլորը, մասնակցություն կունենան հասարակության հոգևոր, սոցիալական, մշակութային, մասնագիտական և քաղաքական կյանքին: Մենք ցանկանում ենք ստեղծել սրա համար անհրաժեշտ նախապայմաններ:

Հաշմանդամությունը շատ հաճախ կապված է ամենատարբեր չափերի սահմանափակումների հետ, որոնց ոչ միշտ է հնարավոր հավասարազոր լուծումներ գտնել: Համերաշխության հասարակությունը հաշմանդամ մարդուն պաշտպանում է այնտեղ, որտեղ անհրաժեշտություն է ծագում, և որտեղ հարկ է հարթել անհատական թերությունները, բայց այդ պատրաստակամությունը չպետք է վերածվի չափազանցված և անհարկի հոգածության:

206. Շատ կարևոր է, որ մարդիկ հենց փոքր հասակից սովորեն ընկալել հաշմանդամ և ոչ հաշմանդամ մարդկանց միջև շփման ինքնըստինքյան հասկանալի անհրաժեշտությունը, սովորեն գնահատել վերջիններիս և՛ ուժեղ, և՛ թույլ կողմերը: Սրան լավագույնս կարելի է հասնել ընտանիքներում, մանկապարտեզներում և դպրոցներում համատեղ կազմակերպվող դաստիարակության և կրթության միջոցով: Ինչպես հարազատ միջավայրում խնամքի իրականացման, այնպես էլ այս հարցում, հաշմանդամություն ունեցող մարդկանց և նրանց հարազատների հետ համաձայնության պարագայում ողջունելի է նույն՝ «ավելի լավ է ամբուլատոր, քան ստացիոնար» սկզբունքը: Սա երեխաների պարագայում կնշանակի, որ նախապատվությունը պետք է տրվի հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների համատեղ դաստիարակությանը՝ իրենց հարազատ միջավայրում: Պետք է խրախուսել հաշմանդամների զբաղվածությունն աշխատանքում՝ առաջնային աշխատաշուկայում է՛լ ավելի շատ աշխատանքային հարաբերությունների հնարավորություններ ստեղծելով:

207. Մենք ցանկանում ենք ստեղծել այնպիսի կենսադաշտ, որտեղ բոլոր մարդիկ, այդ թվում՝ հաշմանդամություն և հենաշարժողական խնդիրներ ունեցողները, տեղից տեղ տեղափոխվել կարողանան, ինչպես հարկն է: Դրա համար անհրաժեշտ նախապայմանը շենքերում և փողոցներում և այլուր տեղաշարժման արգելքների վերացումն է: Շատ հաշմանդամ մարդիկ տեղից տեղ տեղափոխվելու մեջ սահմանափակված են: Քաղաքային և բնակավայրային հատակագծման աշխատանքներում անհրաժեշտ է է՛լ ավելի մեծ ուշադրություն հատկացնել անարգել և անխոչընդոտ ուղիների կառուցմանը:

5. Վստահելի ֆինանսներ, վստահելի Գերմանիա

Պարտքերի մարում և նոր պարտքերի գոյացման արգելք

208. Գերմանիայում պարտքերի բեռն արդեն այսօր չափազանց ճնշող է: Բացի այդ՝ մեր երկրի ֆինանսական հնարավորությունների միայն աննշան մասն է ներդրվում ապագայի ծրագրերում: Գերմանիայի ժողովրդագրական միտումներն աստիճանաբար ավելի ու ավելի մեծ չափով իրենց բացասական ազդեցությունն են թողնում սոցիալական ապահովության համակարգերի և պետական բյուջեի վրա: Այդ պատճառով մենք պետք է հետևողականորեն կրճատենք պարտքերի ներկա ցուցանիշը: Պարտքաթափման սկզբունքով առաջնորդվող հետևողական քաղաքականությունը բարձրացնում է քաղաքացիների ու ձեռնարկությունների վստահությունը և ներդրումների պատրաստակամությունը՝ իրենց իսկ տնտեսական սուբյեկտներում: Այսօրվա պարտքերը վաղվա հարկերն են:

209. Մեր երկրի բարեկեցությունը վտանգված կլինի, եթե պետությունը շարունակաբար անի ավելի շատ ծախս, քան ստանա

եկամուտ: Եթե մենք պարտքագոյացումը չարգելակենք, պետությունը հետագայում չի կարողանա այլևս կարևորագույն խնդիրներ լուծել: Մենք ցանկանում ենք այնպիսի երկիր ունենալ, որն ապահովի իր երեխաների ապագան, ոչ թե ապրի նրանց հաշվին: Մենք ցանկանում ենք այնպիսի երկիր, որտեղ պետությունը ֆինանսապես ի վիճակի լինի օգնել սոցիալապես անապահովներին: Օգնության կարիք ունեցող մարդկանց և սերունդների միջև արդարության սկզբունքը հաշվի առնելով՝ մենք կարծում ենք, որ պետական պարտքերն իրենց բնույթով ապասոցիալական են:

210. Նոր պարտքերի գոյացման սահմանափակման նպատակով որպես առաջնային քայլ է դիտվում ամենախիստ իմաստով «պետական ներդրումներ» հասկացության սահմանումը: Միմիայն այսպիսի ներդրումները պետք է ֆինանսավորվեն վարկերի միջոցով, այն ներդրումները, որոնք արժեքներ և բարիք են ստեղծելու: Դրան զուգահեռ վարկերով ֆինանսավորված ներդրումներից առաջացած պարտքերը որպես կանոն պետք է նորից մարված լինեն ամենաուշը վարկերի ընդունման պահից ամրագրված ժամկետի լրանալուն պես: Դրանով մենք կապահովենք այն, որ պարտքերի ստանձնման սահմանադրորեն ամրագրված կանոնների միջոցով հաջողությամբ կսահմանափակվի վարկեր վերցնելու պրակտիկան, և կներմուծվի պարտքերի արգելակման որոշակի մեխանիզմ: Ամենաուշը մինչև հաջորդ տասնամյակի կեսերը մենք ցանկանում ենք բոլոր ոլորտներում ներմուծել նոր պարտքերի գոյացման բացարձակ արգելանք, որը կսահմանափակի նոր պարտքերի առաջացման հնարավորությունները՝ հասցնելով դրանք անխուսափելի նվազագույնի: Այն պետք է ամրագրվի սահմանադրության, բոլոր հողերի հիմնական օրենքների մեջ և համայնքային բոլոր հարթությունների համար:

211. Մենք ձգտում ենք հասնել նրան, որ Դաշնությունը, հողերն ու համայնքները պարտքերի թոթափման գործընթացում հանդես գան միասնական պայմանավորվածությամբ: Տնտեսական առաջընթացի մեր ժամանակներում պետական պարտքերի կրճատմանը զուգահեռ պետք է միջոցներ ձեռնարկել հետագա

կոնյունկտուրային տատանումների դեմ: Բացի այդ՝ պետք է գնալով ավելի ու ավելի քննադատաբար ստուգվի հանձնարարականների և ծախսերի ողջ ծավալի անհրաժեշտությունը և արդյունավետությունը բոլոր հարթություններում: Պետբյուջեի կառավարման թափանցիկությունն ապահովելու համար մենք ցանկանում ենք Դաշնությանը, հողերին և համայնքներին պարտավորեցնել վարելու հաշվեմատյաններ՝ առևտրային սկզբունքների հիման վրա:

212. Բոլորին աշխատանքով ապահովելն ու վստահելի պետական ֆինանսների առկայությունը պայմանավորված են միմյանցով: Այդ պատճառով մենք պետական եկամուտների համակարգը կնորոգենք այնպես, որ չչարաշահվի աշխատանքի գործոնը: Մենք ցանկանում ենք աշխատավարձի մասով լրացուցիչ ծախսերը տարանջատել աշխատանքային ծախսերից՝ այդպիսով նպաստելով Գերմանիայում ավելի շատ աշխատատեղերի ստեղծմանը: Այդ պատճառով մենք ցանկանում ենք կրճատել ուղղակի հարկերի ու սոցիալական վճարումների չափը, և այս թեթևացումը ֆինանսավորել անուղղակի հարկերի միջոցով: Այստեղ կարևոր է հետևյալը. ուղղակի հարկերի և սոցվճարումների բեռի թեթևացումը պետք է առնվազն համապատասխանի անուղղակի հարկերի լրացուցիչ ծանրաբեռնման չափին:

Ֆինանսական համակարգի բարեփոխումը

213. Գերմանիայի դաշնային կառավարման համակարգը՝ ֆեդերալիզմը, կարիք ունի թափանցիկ ֆինանսական համակարգի: Պետական կառավարման տարբեր օղակների պատասխանատվությունը պետք է ընկալելի լինի քաղաքացուն: Միայն այդժամ նա կարող է դասակարգել և գնահատական տալ քաղաքական որոշումներին և կողմնորոշվել դրանցով՝ իր ընտրական իրավունքի իրականացման ճանապարհին: Դրա համար խիստ անհրաժեշտ է հարգել այսպես կոչված «կոնեքսիայի»՝ տվյալ դեպքում՝ վարչարարության ոլորտին վերաբերվող ազդեցիկ, արդյունավետ հարաբերությունների, կապերի սկզբունքը:

Ֆինանսական համակարգը պարտավոր է հաշվի առնել ելակետային տարբեր իրավիճակներ, հողերում ստեղծել համեմատելի, համահավասար հիմնարար նախապայմաններ, ապահովել գրավչություն՝ հողերի տնտեսական և ֆինանսական հնարավորությունները խթանելու համար: Մենք հանդես ենք գալիս հանուն արդար պայմաններում ընթացող միջհողային /դաշնային/, մրցակցության: Այդ պատճառով դաշնային հողերի տնտեսական հնարավորությունների աճի պարագայում պետք է մեծացվի նրանց վճարումային մասնակցության չափը: Անցումային կարգավորումից հետո մինչև 2019 թվականը պետք է առանց հատուկ կանոնակարգման պարզեցված ֆինանսական փոխհատուցումը հասանելի լինի բոլոր հողերին: Համերաշխության պակտի ժամկետը նույնպես լրանում է այդ թվականին:

214. Մենք ցանկանում ենք ավելի մեծ ֆինանսական ինքնապատասխանատվություն ապահովել հողերի համար և դրա համար անհրաժեշտ նախապայմաններ ամրագրել հարկային իրավունքի մեջ: Այն հողերում, որոնք գերազանցում են սահմանադրությամբ ամրագրված պարտքի սահմանները և չեն կատարում մաաստրիխտյան չափանիշներին հասնելու իրենց պարտավորությունները, պետք է հետագայում իրականացվեն ֆինանսական առողջացման ծրագրեր:

215. Մենք ցանկանում ենք բյուջետային ճգնաժամերի մասին օրենքով կյանքի կոչել նախազգուշական մի համակարգ, որն ապագայում թույլ կտա գործել ոչ միայն բյուջետային ճգնաժամը փաստելուց հետո միայն: Դաշնության կողմից օգնությունների հատկացման համար նախապայման պետք է լինի ֆինանսական առողջացման պայմանագրի կնքումը դաշնության և տուժած հողի միջև:

216. Համայնքներին նույնպես պետք է ինքնապատասխանատվությամբ գործելու ավելի մեծ հնարավորություններ տալ: Հենց նրանց ֆինանսական հնարավորություններն են անմիջական ազդեցություն գործում քաղաքացիների առօրյայում: Այդ պատճառով մենք պետք է համայնքային հարկերը զարգացնենք այնպես, որ համայնքները կարողանան հոգալ իրենց քաղաքացիների կարիքները:

Պարզ և արդար հարկեր

217. Իրենց հարկերով քաղաքացիները պետությանն են տրամադրում միջոցներ, որոնք անհրաժեշտ են վերջինիս՝ իր առջև դրված խնդիրները լուծելու համար: Որպեսզի քաղաքացիների համար հարկային օրենքն ընդունելի լինի, այն պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝ լինի պարզ, ցածր և արդարացի: Այն, որ ֆինանսապես ավելի վճարունակները պետք է ավելի մեծ պարտավորություն ստանձնեն, քան թույլերը, լիովին համապատասխանում է համերաշխության և արդարության մեր հիմնարար արժեքներին: Միաժամանակ հարկային իրավունքը չպետք է բարձր հարկաչափերով սահմանափակի քաղաքացիների ֆինանսական ազատություններն ու հնարավորությունները: Ցածր հարկաչափերով հարկային համակարգը աշխատանք և նախաձեռնություն է խթանում և քաղաքացիներին հնարավորություն տալիս կանխարգելել կենսական ռիսկերը: Պարզ հարկային համակարգն ավելի շատ արդարություն է ապահովում, քան այն բարդ հարկային համակարգը, որը փորձում է լուծում գտնել յուրաքանչյուր առանձին դեպքի համար: Որքան բարդ է այն, այնքան ավելի շատ առավելություններ ունի այն մարդը, ով իրեն կարող է թանկ խորհրդատվություն թույլ տալ, առանց որի նա որպես կանոն ի վիճակի չի լինի օգտվել հարկային խնայողության բոլոր հնարավորություններից:

218. Ձեռնարկությունների հարկման հեռանկարայնությունը պետք է հենվի այն սկզբունքի վրա, որ ձեռնարկություններն առաջին հերթին տնտեսական և ոչ թե հարկային սուբյեկտներ են: Այն պետք է սահմանի այնպիսի հարկային բեռ, որ մեր երկրում ձեռնարկությունների հիմնումը և նրանց շարունակական գործարկումը, աշխատատեղերի ստեղծումը և հետազոտության ու

առաջադիմության ոլորտներում ներդրումներ կատարելը շահավետ լինի: Հարկային քաղաքականությունը նաև նորարարության քաղաքականություն է: Անկախ ձեռնարկությունների ունեցած իրավական կարգավիճակից՝ այն պետք է ապահովի մրցակցային չեզոքություն՝ լինելով պարզ և ընկալելի: Այս հարցում մենք պետք է պատրաստ լինենք համապատասխանել աշխարհի ժողովրդական տնտեսությունների միջև գնալով մեծացող ցանցի պահանջմունքներին:

6. Զարգացում՝ պատմական ձեռքբերումների հիման վրա. աջակցություն նորանդամ հողերին

219. 1953 թվականի հունիսի 17-ի ժողովրդական դիմադրությամբ և հատկապես՝ 1989 թվականի խաղաղ հեղափոխությամբ նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության քաղաքացիները ազատության, ժողովրդավարության և սոցիալ-շուկայական տնտեսակարգի հանդեպ ունեցած իրենց վստահությամբ նախադրյալներ ստեղծեցին Գերմանիայի վերամիավորման համար: Այս պատմական հաջողությամբ կարող են հպարտանալ թե՛ արևելքում, թե՛ արևմուտքում ապրող բոլոր գերմանացիները: Նոր նահանգներն իրենց պատմական և մշակութային մեծ ավանդույթներով գերմանական դաշնային կառավարման համակարգին նոր ազդակներ են հաղորդում:

220. Նոր նահանգները հիմնային մեծ փոփոխություններ ապրեցին՝ ամբողջատիրական բռնապետությունից դեպի ժողովրդավարություն և կենտրոնացված պլանային տնտեսությունից դեպի սոցիալ-շուկայական տնտեսակարգին անցնելով: Ողջ Գերմանիայի միասնական ջանքերի և համերաշխության, պատմության մեջ նմանօրինակը չունեցող ֆինանսական տրանսֆերների, ջանասիրության և վերակառուցման մեծ կամքի շնորհիվ ծաղկեցին շատ շրջաններ և այժմ Եվրոպայի սրտում ներկայանում են որպես Գերմանիայի ժամանակակից բնակավայրեր:

221. Կրթական ոլորտի բարեփոխումների, ծրագրերի կազմման տեմպերի խթանման, բյուրոկրատիայի կրճատման, ինչպես նաև տնտեսության, գիտության և տեխնիկայի միջև սերտ համագործակցության բնագավառներում նոր հողերը և նրանց քաղաքացիներն առաջատար դիրքերում են հայտնվել:

222. Կոմունիստական բռնապետության, Գերմանիայի տրոհման և ոչ արդյունավետ տնտեսակարգի հետևանքները, ինչպես նաև քաղաքացիների միջին խավի պատմականորեն աննախադեպ կորուստը դեռ լիովին չեն հաղթահարվել: Ինքնաբավ տնտեսական զարգացումը դեռևս իրականություն չի դարձել: Չնայած արդիականացման բավական մեծ հաջողություններին՝ դեռևս մեծ անելիքներ կան հանրային ենթակառուցվածքներում և տնտեսական համակարգում:

223. Եվրամիության արևելյան ընդլայնման հետ միասին ի հայտ են գալիս ոչ միայն նոր հնարավորություններ, այլև լրացուցիչ մրցակցային խնդիր՝ թույլ կառուցվածք ունեցող արևելագերմանական տնտեսության համար: Սրան, ինչպես նաև համաշխարհայնացման շատ այլ պահանջների առհասարակ շատ մանր և միջին ձեռնարկություններ բավարար չափով պատրաստ չեն:

224. Ժողովրդագրական փոփոխություններն արևելյան Գերմանիայում ավելի շոշափելի են, քան արևմտյանում: Ծնունդների կտրուկ նվազումը, բնակչության ծերացումը, ինչպես նաև աշխատել ցանկացող և բարձր որակավորում ունեցող երիտասարդների արտահոսքը իրենց բացասական ազդեցությունն են թողնում առանց այդ էլ սակավ ռեսուրսների վրա: Գերմանիայի Դաշնային Հանրապետության պատմությունը շատ դեպքեր է նշում, երբ հնարավոր է եղել արտագաղթող շրջաններից հեռանկարային շրջաններ ստեղծել: ՔԴՄ-ի քաղաքականության նպատակն է, որ արևելյան Գերմանիայի տարածաշրջանները մարդկանց գրավիչ կենսապայմաններ առաջարկեն:

225. Մեզ անհրաժեշտ է ուժեղ քաղաքացիական հասարակություն ունենալ նաև նոր հողերում՝ որպես ժողովրդավարության, իրավական պետության և սոցիալ-շուկայական տնտեսակարգի կարևոր նախադրյալ: Միայն արդյունավետ գործող քաղաքացիական հասարակությունը կարող է հոգալ մեր ազատատենչ-ժողովրդավարական հասարակության տնտեսական առաջընթացի և կայունության մասին: Ոչ միայն նոր հողերում է մեզ անհրաժեշտ ավելի շատ ազատություն՝ շուկայական տնտեսության զարգացման գործընթացների և մրցակցային քաղաքականություն իրականացնելու, դաշնային իրավունքի մեջ /օրենսդրության մեջ/ խոչընդոտների վերացման և փորձարարությունների ամբողջական դրույթներ սահմանելու համար: Մարդիկ պետք է ավելի մեծ հնարավորություններ ստանան իրենց կյանքն անձնական պատասխանատվությամբ իրենց ձեռքը վերցնելու համար: Դրանով մենք նախապայմաններ ենք ստեղծում, որ աշխատունակ մարդիկ մնան և իրենց գիտելիքները ծառայեցնեն հայրենիքին, և ներդրողներն իրենց կապիտալը բերեն նոր հողեր: ՔԴՄ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում երիտասարդ ղեկավարների ինտեգրմանը տարածաշրջանային աշխատաշուկաներում: Բոլոր դերակատարների միջև համագործակցության միջոցով, այսպիսով, պետք է փորձ արվի նպաստել շրջանների ժողովրդագրական կայունացմանը:

226. Հատկապես մեծ քաղաքներում, խիտ բնակավայրերում և զբոսաշրջային կենտրոններում են առաջանում նորարար, տնտեսապես դինամիկ զարգացող շրջաններ: Մենք ցանկանում ենք աջակցություն ցուցաբերել ձեռնարկատիրական նախաձեռնություններին այն դեպքում, երբ դրանց արդյունքում կստեղծվի մրցակցային կառուցվածք ունեցող միջին ձեռնարկատիրություն կամ տարածաշրջանում գործող և տարածաշրջանային նշանակության մեծ ձեռնարկություն: Այս հարցում մենք պետք է օժանդակ միջոցներ կենտրոնացնենք զարգացող շրջանների և դրանցում բարձր տեխնոլոգիաների հիման վրա զարգացող տնտեսության, գիտության և մշակույթի փոխշաղկապվածության վրա:

Հարկավոր է առաջատար գիտահետազոտությունը և բարձր տեխնոլոգիաները կապակցել ձեռնարկությունների և կապիտալ տրամադրող հաստատությունների հետ՝ համաշխարհային մրցակցության պահանջներին համապատասխան արտադրանք թողարկելու համար:

227. Զարգացող շրջաններն իրենց աշխատունակ ենթակառուցվածքներով, հատկապես՝ գրավիչ մարդատար փոխադրամիջոցներով պետք է կապվեն համեմատաբար թույլ կառուցվածք ունեցող շրջանների հետ, որպեսզի վերջիններս նույնպես ներգրավվեն զարգացման մեջ: Սակավաթիվ բնակչություն ունեցող և մեծ բնակավայրերի կուտակումից զուրկ շրջաններում պետք է կենտրոնանանք որոշակի ճյուղերի և բնագավառների խթանման վրա: Պետք է շարունակվի Եվրամիության աջակցությունը նոր հողերի հատկապես անբարենպաստ շրջաններին, որպեսզի հնարավոր լինի քայլել համաշխարհային մրցակցության մեջ:

228. Նոր հողերը Համերաշխության պակտի շրջանակում հատկացվող միջոցների լիարժեք ծավալով օժանդակության կարիք ունեն մինչև 2019 թվականը: Այդ միջոցներն ուղղորդված են դեռևս առկա ենթակառուցվածքային թերությունների ծածկմանը, նպատակային ներդրումային ծրագրերի խթանմանը և համայնքների անբավարար ֆինանսական կարողությունների լրացմանը՝ հասնելու համար ինքնաբավ տնտեսական զարգացման և արդիականության շարունակականության:

229. Անդրազգային /միջպետական/ տրանսպորտային ենթակառուցվածքի հետագա ընդլայնումը տնտեսական առաջընթացի կենտրոնական նախապայմաններից է: Միջեվրոպական տրանսպորտային ուղիները, հատկապես՝ Միջին և Արևելյան Եվրոպայի հետ, ինչպես նաև արևելյան ողջ տարածքում, պետք է հետևողականորեն զարգանան և ընդլայնվեն:

230. Տնտեսության և ենթակառուցվածքների ոլորտում հեռանկարային ներդրումները հնարավոր են այն դեպքում միայն, երբ հաշվի է առնվում ժողովրդագրական զարգացումների գործոնը:

Թերբեռնված ենթակառուցվածքները պետք է համապատասխանեցվեն բնակչության աճի տեմպերին, և պետք է որդեգրվեն կենսապահովման և վարչարարության տարբեր ստանդարտներ։ Պետությունը սակայն պարտավոր է ապահովել նվազագույն ստանդարտը։ Կենսապայմանների համարժեքությունն ամենուրեք եղել և մնում է մեր նպատակը։ Պետք է տեղերում զարգանան սեփական նախաձեռնությունները։ Կյանքի որակն ապագայում տարբեր կերպ կսահմանվի ոչ միայն նոր հողերում։

VI. ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ. ՀԱՆՈՒՆ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ

1. Ի պաշտպանություն մարդու արժանապատվության – Կյանքի սկզբից մինչև վերջ

231. Մարդու՝ որպես Աստծո ստեղծած էակի անձեռնմխելի արժանապատվությունը մարդկային տնօրինման ենթակա չէ, և պետք է պահպանել այն։ Մարդը միշտ սուբյեկտ է, նա երբեք չպետք է օբյեկտ լինի։ Մարդու արժանապատվությունը ելակետային և կողմնորոշիչ է նաև կենսաէթիկայի ոլորտի մարտահրավերների դեպքում։ Այն հարգանք և պաշտպանություն է պահանջում մարդկային կյանքի բոլոր փուլերի համար։ Դեռ չծնված կյանքը, սերմնաբջջի և ձվաբջջի իրար միանալուց սկսած, նախածննդյան ախտորոշման շարունակ զարգացող հնարավորությունների նկատմամբ մեր քննադատական վերաբերմունքի կարիքն ունի։ Մենք հանդես ենք գալիս պրեիմպլանտացիոն ախտորոշման (PID) վրա դրված արգելքի օգտին։ Մենք չենք համակերպվում հղիության արհեստական ընդհատման, ներառյալ՝ ուշացած ընդհատումների բարձր ցուցանիշների հետ։ Մենք պետք է կանանց և տղամարդկանց օգնենք վճիռ կայացնելու հանուն կյանքի։

232. Բուժումը, ցավի մեղմումը և մարդու նկատմամբ խնամակալությունը կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում՝ մարդասիրության, համերաշխության և քրիստոնեական հավատքի մեջ խարսխված, մերձավորին սիրելու արտահայտություն են։ Հաշմանդամ մարդիկ, հիվանդները, մահամերձները և կյանքի այլ

դժվարին փուլերում գտնվող մարդիկ արժանապատիվ կյանքի իրավունք ունեն: Մենք խրախուսում ենք մահամերձներին ցուցաբերվող պալլիատիվ՝ ցավազրկող բուժօգնությունը, քրիստոնեական ապաստարանների՝ հոսպիցների և մահամերձներին ցուցաբերվող խնամատարական գործունեության այլ ձևերը, որոնք մեղմացնում են մահամերձների կյանքի վերջին օրերը և նրանց տալիս իրենց հարազատներին արժանավայել հրաժեշտ տալու հնարավորություն: Մենք մերժում ենք ակտիվ մահօգնությունը: Մենք ցանկանում ենք խրախուսել օրգանների նվիրաբերման մարդկանց պատրաստակամությունը:

233. Կենսաբժշկական հետազոտությունը լուծումներ է առաջարկում ապագայի խնդիրների համար և մեծապես նպաստում հիվանդությունների բուժմանը և ցավի մեղմմանը: Այստեղ հարկ է բարեխղճորեն ծանրութեթև անել հնարավորություններն ու ռիսկերը: Մարդու անձեռնմխելի արժանապատվության հանդեպ հարգանքը մեզ համար ավելի առաջնային է, քան հետազոտական ազատությունն ու մրցակցայնության ապահովումը: Մենք հանդես ենք գալիս ի շահ սաղմնային կյանքի հետևողական և շարունակական պաշտպանության և դեմ ենք սպառողական բնույթ կրող սաղմնային հետազոտություններին: Մենք այս ուղղությամբ աշխատանք ենք տանում նաև եվրոպական և միջազգային հարթություններում: Մենք մերժում ենք մարդու կլոնավորումը:

2. Բնական կենսապայմանների/կենսահիմքերի պաշտպանություն

234. Համաձայն քրիստոնեական ընկալման՝ մարդը, բնությունը և շրջակա միջավայրը Աստծո արարչագործությունն են: Նրանց պաշտպանությունը մեր խնդիրն է: Կայուն զարգացման սկզբունքը քրիստոնեաժողովրդավարական քաղաքականության հիմնական բաղադրիչներից է. մենք ցանկանում ենք պահպանել և մեր սերունդներին թողնել այնպիսի երկիր, որն ապագայում նույնպես ապրելու պիտանի լինի: Հաջորդող սերունդներն ունեն տնտեսական զարգացման, սոցիալական բարեկեցության և անվնաս շրջակա միջավայր ունենալու իրավունք:

235. Շրջակա միջավայրի և կլիմայի պաշտպանության հեռատեսորեն գործող պաշտպանությունը նոր աշխատատեղերի հնարավորություններ է ստեղծում: Այդ պատճառով բնապահպանական կրթությունը, հետազոտությունը և զարգացումը, շրջակա միջավայրի պաշտպանության տեխնոլոգիաները, շրջակա միջավայրի և կլիմայի պաշտպանությունը և դրա վրա հիմնված և զարգացող նորարարությունները պետք է շարունակաբար խրախուսվեն: Ի շահ կլիմայի և շրջակա միջավայրի պաշտպանության՝ մենք ցանկանում ենք ընդլայնել շրջակա միջավայրի պաշտպանության տեխնոլոգիաների գծով Գերմանիայի առաջատար դիրքերն աշխարհում: Այսպիսով՝ կարող ենք մեծ գործ կատարած լինել սեփական երկրում արժեքների, նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ՝ խթանելով նաև միջին ձեռնարկատիրությունը:

236. Աղքատության հաղթահարումը և բնական կենսահիմքերի պաշտպանությունը սերտորեն կապված են միմյանց հետ: Աղքատությունը նույնպես նպաստում է բնական հարթությունների չարաշահմանը: Վերջապես՝ դրանով փլուզվում է կենսաբազմազանությունը, ինչն իր հերթին նպաստում է մարդկանց կյանքն ապահովող կենսական հիմքերի կործանմանը: Ըստ մեզ՝ շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունն արտաքին և զարգացման քաղաքականության կարևոր բաղադրիչ է, որը պետք է նպաստի աշխարհում արդարության հաստատմանը:

237. Մեր պատկերացմամբ տնտեսական զարգացումը և շրջակա միջավայրի պաշտպանությունն իրար չեն հակասում: Հատկապես այնպիսի ժամանակներում, երբ երկիր մոլորակի էկոլոգիական ծանրաբեռնվածության սահմաններն ավելի ու ավելի պարզորոշ են ուրվագծվում, կարևորվում է հետևյալը. կայուն տնտեսական զարգացումը հնարավոր է միմիայն շրջակա միջավայրի և կլիմայի պաշտպանության պարագայում: Բացի այդ՝

ծախսերի առումով և զարգացման միտումներում առավելություն է համարվում ռեսուրսների արդյունավետ և խնայողական օգտագործումը: Այդ պատճառով մենք հանդես ենք գալիս հանուն բնապահպան և սոցիալական շուկայական տնտեսության, որը զարգացող հետազոտությամբ, գրավիչ նպատակային համակարգերով և խրախուսական ծրագրերով, ինչպես նաև բնապահպանական ուղղվածության հասարակարգի ամրապնդմամբ հետապնդում է շրջակա միջավայրի պաշտպանության հստակ նպատակներ: Մենք կարծում ենք նաև, որ հետագայում ռեսուրսների օգտագործման կամ շրջակա միջավայրի ծանրաբեռնման համար պետք է սահմանվեն ոչ թե հարկեր, այլ տուրքեր: Այդ դեպքում հասույթն իր հերթին որոշակիորեն կուղղվի շրջակա միջավայրի և կլիմայի պաշտպանությանն առընչվող խնդիրների լուծմանը:

238. ՔԴՄ-ն սպառվող ռեսուրսների նկատմամբ հոգատար և խնայողական վերաբերմունքի, հետազոտության և զարգացման դրական դերակատարման, ինչպես նաև շրջակա միջավայրի և բնության պահպանության կողմնակից է, վերաբերմունք, որը մարդու մեջ ստեղծագործականություն և պատասխանատվություն է սերմանում: Շատ կարևոր է շրջակա միջավայրի վերաբերյալ բարձրորակ կրթության ապահովումը: Մենք ցանկանում ենք դպրոցների, համայնքների, հողերի, շրջակա միջավայրի և բնության պաշտպանության հարցերով զբաղվող միությունների, ինչպես նաև գյուղատնտեսների և անտառագետների հետ միասին բնապահպանական գիտակցություն և վերաբերմունք խարսխել հասարակության մեջ:

Կլիմայի պաշտպանություն

239. Գլոբալ կլիմայական փոփոխությունները սպառնում են արարչագործությանը և գալիք սերունդների կենսական հնարավորություններին: Մենք մեր բարոյական պարտքը և ապագային վերաբերող առաջնային քաղաքական խնդիրն ենք համարում այս զարգացման դեմ դուրս գալը: ՔԴՄ-ն իր ջանքերն

է ներդնում, որ Գերմանիան շարունակի իր առաջատար դերը կլիմայի պաշտպանության հարցում և միջազգային ասպարեզում հանդես գա որպես ազդակներ հաղորդող կողմ: Հնարավորինս շատ արդյունաբերական, զարգացած և զարգացող երկրների հետ միասին մենք ցանկանում ենք առաջ տանել կլիմայի պաշտպանությունը: 2012 թվականից հետո ընկած ժամանակաշրջանին վերաբերող «Կլիմայի պաշտպանության միջազգային» համաձայնագիրը, որը հիմնված է Կիոտոյի արձանագրության վրա և պարունակում է շուկայական տնտեսության համար գրավիչ դրույթներ և ակտիվ ներգրավվածության հնարավորություն է ընձեռում մինչ այժմ մի կողմ քաշված արդյունաբերական, զարգացած և զարգացող երկրներին, այս ուղղությամբ կատարված կարևորագույն քայլերից է:

240. Գերմանիան պարտավորվել է մինչև 2012 թվականը 21 տոկոսով կրճատել թունավոր արտանետումները: Մինչև 2020 թվականը մենք ցանկանում ենք թունավոր արտանետումների քանակը կրճատել մինչև 30 տոկոսով՝ 1990 թվականի տվյալների համեմատությամբ: Այս հարցում մենք կարևոր ենք համարում, որ նաև մյուս արդյունաբերական երկրները արտանետումների շարունակական կրճատման պարտավորություն ստանձնեն:

241. Մենք որդեգրել ենք կլիմայի վերաբերյալ կրկնակի ռազմավարություն, որն ամրագրում է թունավոր արտանետումների թույլատրելի սահմանները և խրախուսում կլիման խնայող տեխնոլոգիաների կիրառումն ու զարգացումը: Ածխածնի դիօքսիդը պետք է ողջ աշխարհում իր համապատասխան գինն ունենա, որպեսզի ներդրումներ կատարողները մտածեն կլիման չխաթարող ավելի բարենպաստ տեխնոլոգիաների ուղղությամբ: Դրան նպաստում են ինչպես արտանետումների օրենքներով գործող առևտուրը, այնպես էլ կլիմայապաշտպան զարգացման ծրագրերի միջոցով տեխնոլոգիաների ներմուծումը զարգացող և զարգացած երկրներ: Մեր նպատակն է, որ մթնոլորտի տաքացումը սահմանափակվի առավելագույնը 2 աստիճան ցելսիուսով՝ նախարդյունաբերական ելակետային դրության հետ համեմատած:

242. Էներգիայի խնայումը, էներգետիկ արդյունավետության բարձրացումը և վերականգնվող էներգիայի օգտագործումը կլիմայի պաշտպանությանն ուղղված մեր քաղաքականության հիմնասյուներն են: Միաժամանակ անհրաժեշտ է, որ արդեն իսկ հիմա մշակվեն կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունների սահմանափակման ռազմավարություններ: Դրա մեջ մտնում է նաև, օրինակ, ջրհեղեղային և ծովափնյա տարածքների պաշտպանությունը: Բացի այդ՝ հարկավոր է մշակել նաև հողերի օգտագործման՝ կլիմայական փոփոխությունների հետևանքով անհրաժեշտ նոր ռազմավարություն:

Ապահով էներգամատակարարում

243. Էներգիայի պահանջարկն աշխարհում ամենուր աճում է: Հաշվի առնելով Գերմանիայի կախվածությունը սուղ և թանկ էներգակիրների ներմուծումից՝ անվտանգ, շրջակա միջավայրին չսպառնացող և տնտեսապես շահավետ էներգամատակարարումը մեզ համար բացառիկ կարևորության քաղաքական հարց է: Մենք ցանկանում ենք նվազեցնել ներկրման կախվածության հետ կապված ռիսկերը: Պետք է ընդլայնել էներգակիրների աղբյուրների և առաքման ուղիների աշխարհագրությունը, խորացնել և ընդլայնել էներգետիկ գործընկերությունները առաքող և տարանցիկ երկրների հետ: Եվրամիության տարածքում միասնական էներգետիկ քաղաքականության միջոցով մենք ցանկանում ենք էներգիայի մատակարարումը դնել ապահով հիմքերի վրա:

244. Մենք հանդես ենք գալիս հանուն էներգետիկ պաշարների խնայողական օգտագործման, հայրենական վերականգնվող էներգակիրների շուտափույթ ընդլայնման և էներգիա արտադրող տեխնոլոգիաների արդյունավետության բարձրացման: Մեծ նեղուժ ենք տեսնում շենքերի վերանորոգման ժամանակ ջերմային, ջեռուցման արդյունավետության ապահովման մեջ: Մինչև 2020 թվականը մենք ձգտում ենք հասնել էներգիայի կրկնակի արտադրողականության՝ 1990 թվականի համեմատությամբ: Այդ գործին իրենց նպաստն են բերում նաև ապակենտրոնացված էներգարտադրող հաստատությունները:

245. Ապահով, բնապահպան և տնտեսապես շահավետ էներգամատակարարման հիմքը էներգետիկ հնարավորությունների լայնապրոֆիլ և հավասարակշռված ամբողջությունն է: Վառելիքային էներգակիրների օգտագործումը մենք ցանկանում ենք իրականացնել կլիմայի համար հնարավորինս անվտանգ կերպով՝ դրանով իսկ նախապայմաններ ստեղծելով, որ Գերմանիայում ծնունդ առնի շրջակա միջավայրի համար աշխարհում ամենաանվտանգ էլեկտրակայանային պարկերից մեկը:

246. Վերականգնվող էներգիայի աղբյուրները, որպես հայրենական էներգակիրներ, կարող են մեծ նշանակություն ունենալ մատակարարման անվտանգության բարձրացման, ինչպես նաև կլիմայի պաշտպանության գործում: Նրանք շրջակա միջավայրի համար անվտանգ զարգացման, նորարար գործարարության և աշխատատեղերի նոր հնարավորություններ են ստեղծում: Մենք ցանկանում ենք հետևողականորեն շարունակել վերականգնվող ռեսուրսների, ինչպես նաև էներգիայի այլ ռեգեներատիվ աղբյուրների օգտագործման մեր բռնած ճանապարհը: Դրա մեջ մտնում է նաև օֆշորային գոտում քամու էներգիայի զարգացման հնարավորությունների, ինչպես նաև արևային, բիո- և գեոթերմիկ էներգիայի օգտագործումը: Բացի այդ՝ մենք ցանկանում ենք խթանել էներգիայի խնայողությանն ուղղված տեխնոլոգիաների զարգացումը:

247. Տեխնոլոգիական նորարարությունների զարգացման համար գրավիչ նախապայմանների ստեղծման միջոցով մենք ցանկանում ենք խթանել վերականգնվող էներգակիրների օգտագործումը: Մինչև 2020 թվականը մենք ձգտելու ենք Գերմանիայում սպառվող էներգիայի ողջ ծավալում հասնել ռեգեներատիվ էներգիայի նվազագույնը 20 տոկոս սպառման: Հոսանքարտադրման և վառելիքային ոլորտներում վերականգնվող էներգակիրների օգտագործման ծավալների ընդլայնումից բացի պետք է բարձրացվի

նաև վերականգնվող էներգակիրների կիրառման ծավալը ջեռուցման և սառեցման գործընթացներում: Մեր նպատակն այն է, որ վերականգնվող էներգիան մինչև 2050 թվականը գերակշռի Գերմանիայի էներգամատակարարման ծավալներում:

248. Տեսանելի ապագայում Գերմանիայում դեռևս հնարավոր չէ հրաժարվել ատոմային էներգիայի արտադրությունից: Այն հնարավորություն է տալիս կամուրջ գցել մինչև այն ժամանակաշրջանը, երբ կլիմայի համար անվտանգ և տնտեսապես շահավետ էներգակիրները բավարար չափով հասանելի կլինեն: Կլիմայի պաշտպանությանն ուղղված մեր ռազմավարության շրջանակում ձգտում ենք երկարացնել ապահով ատոմակայանների շահագործման ժամկետները: Մեզ համար այդ հարցում առաջնայինը յուրաքանչյուր այդպիսի կայանի անվտանգության հնարավորինս բարձր մակարդակի ապահովումն է: Այս առումով առանձնահատուկ կարևորություն է ստանում ռադիոակտիվ թափոնների վերջնական ապահով հանգրվանի հարցը: ՔԴՄ-ն ջանում է, որ պահպանվեն Գերմանիայի ունեցած գիտական, տեխնոլոգիական և անվտանգության հարցերի վերաբերյալ ձեռքբերումներն այս ոլորտում: Միայն այսպես Գերմանիան կարող է իր նպաստը բերել աշխարհում շահագործվող ատոմակայանների անվտանգության շարունակական բարելավմանը՝ միաժամանակ աշխատատեղեր ապահովելով Գերմանիայում:

249. Էներգետիկ ոլորտի հետազոտությունները և էներգետիկ նորարարական տեխնոլոգիաներն ապագայում էներգամատակարարման ապահովման անխուսափելի նախապայմաններ են: Մենք ցանկանում ենք ընդլայնված և թափանցիկ հետազոտություն և տեխնիկական զարգացում ապահովել այս բնագավառում՝ նպաստելով կլիմայապաշտպան բոլոր էներգակիրների հնարավորությունների օգտագործմանը, կլիմայապաշտպան էներգիա արտադրող տեխնոլոգիաների շարունակական զարգացմանը, ինչպես նաև ռեսուրսների խելամիտ օգտագործմանը: Մենք ածխով և գազով աշխատող ժամանակակից մաքուր էլեկտրակայաններին ոչ պակաս կարևորություն ենք տալիս, քան միջուկային

վառելիքի ոլորտում կատարվող հետազոտություններին: Հատկապես էներգախնայողական արտադրանքների և ծառայությունների զարգացման մեջ ենք տեսնում զարգացման հնարավորություններ մեր ձեռնարկությունների և նոր աշխատատեղերի ստեղծման համար:

250. Էներգիայի գնի բարձրացումը կանխելու համար ցանկանում ենք նպաստել հոսանքարտադրման և գազի շուկայում առողջ մրցակցությանը: Մենք ջանում ենք վերացնել մրցակցային բոլոր խոչընդոտները և արագորեն ընդլայնել եվրոպական տնտեսական տարածքում հոսանքի և գազի միջպետական առևտրի համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Շրջակա միջավայրը խնայող տեղաշարժի ապահովում

251. Տեղից տեղ տեղափոխվելը, տեղաշարժը ժամանակակից հասարակություններում հիմնարար պահանջմունք է՝ և՛ տնտեսական առաջընթացի, և՛ բարեկեցության նախապայման: Այս պահանջմունքի հետ պետք է հաշվի նստել, անկախ այն հանգամանքից, որ Գերմանիան ամբողջովին խեղդվում է երթևեկային խցանումների մեջ, և վտանգվում է մեր քաղաքացիների առողջությունը:

Մենք հետևողական աջակցություն ենք ցուցաբերում տրանսպորտային բոլոր ոլորտներում շրջակա միջավայրի աղտոտման կրճատմանը և խրախուսում համապատասխան զարգացումները: Մենք ցանկանում ենք կրճատել երթևեկության աղմուկը և օդի աղտոտվածությունը: Երթևեկությունը կարգավորող խելամիտ միջոցառումները, վնասակար արտանետումների թույլատրելի աստիճանի հետևողական նվազեցումը, քիչ վնասակար արտանետումներով աշխատող ավտոմեքենաների նկատմամբ հարկային խրախուսումների սահմանումը, օդային երթևեկության ներգրավումը վնասակար արտանետումների պատժաչափերի ոլորտ, ինչպես նաև հասարակական տրանսպորտի զարգացումը մեզ համար այլընտրանքային միջոցներ են: Բացի այդ՝ մենք գրավչու-

թյուններ կստեղծենք խնայողողունակ շարժիչային տեխնիկայի զարգացումը խթանելու համար և կխրախուսենք այլընտրանքային վառելիքների օգտագործումը։

252. Բնապահպան ուղղվածության հիմնարար պայմանների ստեղծման և շուկայական տնտեսության գործիքների միջոցով մենք ցանկանում ենք բարձրացնել օդային, ջրային և ճանապարհային երթևեկության միջոցների՝ կլիմայի համար հնարավորինս անվտանգ շահագործման հնարավորությունները։ Մենք անհրաժեշտ ենք համարում նոր մեքենաների վրա տեղադրվող բարելավված շարժիչային տեխնիկայի միջոցով զգալիորեն կրճատել CO_2 գազի արտանետումները, կենսավառելիքի օգտագործումը և այլն։ Մենք ցանկանում ենք մեծապես կրճատել վառելիքի օգտագործումը բոլոր մեքենաների կողմից. սա հավասարապես խնայում է թե՛ շրջակա միջավայրը, թե՛ սպառողների դրամապանակը։

Բնության բազմազանության պաշտպանությունը

253. Ողջ աշխարհով մեկ տեսակների բազմազանության դրամատիկ անկումը ստիպում է մեզ ավելի սերտացնել միջազգային համագործակցությունը շրջակա միջավայրի և բնության պաշտպանության հարցերում։ Մենք ցանկանում ենք աջակցություն ցուցաբերել զարգացող երկրներին՝ կենսաբազմազանության պահպանման, ռեսուրսների հեռանկարային օգտագործման, ինչպես նաև կենսաբազմազանության պաշտպանությանն ուղղված միջոցառումների և գործիքների արդյունավետ զարգացման գործում։ Այս հարցում առաջնային է ցամաքում և ծովում պաշտպանվող տարածքների և տարբերակված օգտագործման ենթակա տարածքների համաեվրոպական և համաշխարհային կենսացանցի ստեղծումը։ Նաև այս համատեքստում հանդես ենք գալիս հանուն ՄԱԿ-ում շրջակա միջավայրի հարցերով ինքնուրույնաբար գործող հաստատության ձևավորման։ Մենք նաև հանդես ենք գալիս հանուն անտառների, հատկապես՝ կուսական անտառների պաշտպանության վերաբերյալ միջազգային օրենքով պարտավորեցնող կարգավորման։

Ի պաշտպանություն կենդանիների

254. Ողջ արարչագործության հանդեպ ակնածանքը մեզ պարտավորեցնում է պատասխանատու վերաբերմունք հանդես բերել նաև կենդանիների հանդեպ։ Կենդանիների պաշտպանությունը մեզ համար կարևորագույն խնդիր է։ Մենք ջանում ենք կենդանիներին պահել իրենց տեսակին անհրաժեշտ պայմաններում՝ հարգելով և պաշտպանելով նրանց որպես արարչագործության բաղկացուցիչ մաս։ Կենդանիների վրա կատարվող փորձերը պետք է հնարավորինս կրճատվեն և փոխարինվեն այլընտրանքային մեթոդներով։

Մեր բնական ժառանգությունը. մի կտոր հայրենիք

255. Գերմանիայի բնական և մշակութային բազմազան լանդշաֆտները մեր հայրենիքի առանձնակի արժեք ունեցող տարածքներն են։ Մենք ցանկանում ենք բնական այս հարուստ ժառանգությունը պահպանել և փոխանցել գալիք սերունդներին։

256. Հատկապես համեմատաբար խիտ բնակեցված Գերմանիայում ընդերքը և չմշակված տարածքները՝ որպես սպառվող ռեսուրսներ, պետք է առանձնակի պաշտպանության արժանանան։ Պահուստային տարածքների օգտագործումը, հատկապես քաղաքի սահմաններից ներս մշակման ենթակա բաց տարածքների իրացումը պետք է առաջնային լինեն քաղաքից դուրս կանաչ տարածությունների օգտագործման հավակնությունների նկատմամբ։ Տարածքների օգտագործումը պետք է խիստ կրճատվի. մեր քաղաքականությունը կստեղծի դրա համար անհրաժեշտ հիմնարար նախապայմաններ։

3. Հեռանկար՝ գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի համար

257. ՔԴՄ-ն ցանկանում է աշխույժ գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն ունենալ Գերմանիայի ողջ տարածքում: Որպես բարձրարժեք սննդամթերքների արտադրության պատասխանատու՝ մենք առաջին հերթին տեսնում ենք մեր գյուղատնտեսությանը: Գյուղատնտեսությունն ու անտառային տնտեսությունը արտադրում են նաև կարևոր բնական հումք և վերականգնվող էներգիա: Սերունդներ ի վեր նրանք խնամում, սնում են մեր մշակութային լանդշաֆտները և իրենց ազդեցությունը թողնում գյուղական բնակավայրերի զարգացման վրա: Նրանք այդ անում են մարդու, կենդանիների, բնության և շրջակա միջավայրի հանդեպ պատասխանատվության մեծ գիտակցումով: Միաժամանակ գյուղատնտեսությունը և անտառային տնտեսությունը ստեղծում են պայմաններ՝ հանգստի, ազատ ժամանցի և զբոսաշրջության համար:

258. Ռեսուրսների պահպանման և խնայողության հարցում կարևոր դեր է խաղում հողի և ընդերքի նկատմամբ անհատի սեփականության գործոնը: Մարդու անձնական պատասխանատվությունը և նվիրվածությունն իր սեփականությանը ավելի ազդեցիկ են քան պետական պարտավորվածությունը: Հանրային շահի գիտակցմամբ շրջակա միջավայրի և բնության պահպանությանն ուղղված անհատական ջանքերն ու աշխատանքը պետք է պատշաճ փոխհատուցման արժանանան: Նրանք պայմանագրային պայմանավորվածություններից էլ առաջնային նշանակություն ունեն:

259. ՔԴՄ-ի իդեալը բազմաֆունկցիոնալ և գործարար գյուղատնտեսությունն է, որը, հավատարիմ մնալով գյուղացիական տնտեսության իր արմատներին, միաժամանակ խրախուսում է ստեղծագործական մոտեցումներն ու նորարարությունները: Մենք ճիշտ ենք համարում, որ պետությունը հնարավորինս հեռու պահի իրեն գյուղատնտեսական շուկաներն ուղղորդելուց և խուսափի բյուրոկրատական ու վերահսկողական գործելաոճ հանդես բերելուց: Դրանով շուկայական կողմնորոշումը, ստեղծագործական մոտեցումը, լավ կրթությունը և լավ կառավարումը առավել կկարևորվեն որպես առանցքային որակներ: Մենք կքաջալերենք գյուղատնտեսներին և անտառտնտեսներին այս հարցում: Ընդ որում՝ թե ինչպիսին կլինեն ձեռնարկատիրության ձևը կամ արտադրական ուղղությունները, սովորական, թե էկոլոգիական կլինի մշակման տեխնոլոգիան, մեզ համար կարևոր չէ: Գերմանական գյուղատնտեսության և անտառային տնտեսության բազմազանությունը և շուկայական կողմնորոշումը մեզ համար նշանակում է նաև ներկայություն ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային շուկաներում:

260. Մենք ցանկանում ենք, որ նաև եվրոպական ագրարային քաղաքականության շրջանակում բարելավվեն գյուղատնտեսների արտադրական և աշխատանքային պայմանները: Մեր նպատակն ազնիվ մրցակցային նախապայմաններն են եվրոպական և միջազգային գյուղատնտեսական շուկաներում: Մենք ջանում ենք հասնել նրան, որ Եվրամիությունում ներդաշնակվեն օրենսդրական հիմնարար պայմանները, որ շրջակա միջավայրի, բնության, սպառողների և կենդանիների պաշտպանության ասպեկտներն էլ ավելի մեծ ուշադրության արժանանան և համաձայնեցվեն միջազգային հարթության վրա:

261. Մենք ցանկանում ենք ունենալ աշխույժ և ապրելու համար հարմար գյուղական շրջաններ: Նրանք կարևոր տարածքներ են տնտեսության, մշակույթի, բնության և հանգստի համար: Նրանց անհրաժեշտ են զարգացման այնպիսի հեռանկարներ, որոնք այնտեղ ապրող մարդկանց համար կստեղծեն կյանքի, կրթության և աշխատանքի համար անհրաժեշտ նախապայմաններ: Մեր ուշադրության կենտրոնում են հատկապես թույլ կառուցվածք ունեցող գյուղական բնակավայրերը: Նրանց դեռ երկար ժամանակ անհրաժեշտ կլինի ակտիվ աջակցություն սոցիալական և տեխնիկական ենթակառուցվածքների զարգացման և տնտեսական կարողությունների խթանման հարցերում:

262. Բնական հումքերի արտադրությունը կամ վերականգնվող էներգիայի օգտագործումը նոր տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացի մեծ հնարավորություններ է բացում ոչ միայն գյուղատնտեսության և անտառային տնտեսության ոլորտներում: Այս բնագավառում բնապահպանական տեսանկյունից անվտանգ տնտեսվարման ձեռքբերումների պահպանմամբ ցանկանում ենք շարունակել խելամտորեն ընդլայնել Գերմանիայի՝ աշխարհում ունեցած առաջատար դիրքերը:

263. Այսպես կոչված «կանաչ» գենային տեխնիկան ապագայում կարող է կարևոր դեր խաղալ ինչպես սննդապահովման, այնպես էլ էներգետիկ անվտանգության հարցերում: Տնտեսական շահավետությունից բացի այս հարցում անհրաժեշտ է կարևորել նաև անվտանգության և ապահովության չափանիշները: Հումքերի արդյունավետ օգտագործման, հումքերի պահպանման և էներգետիկ բույսերի արտադրության նպատակով «կանաչ» գենտեխնիկայի օգտագործման նպատակահարմարությունը հարկ է մանրամասնորեն ուսումնասիրել: Հաջող հետազոտությունից հետո Գերմանիայում պետք է սկսվի գենտեխնիկայի գործնական կիրառումը՝ նպաստելով նոր արտադրատեսակների թողարկմանը:

264. Մենք ցանկանում ենք նաև մեծապես խրախուսել բազմաֆունկցիոնալ գյուղատնտեսությունը, որը նշանակում է ոչ միայն հողագործություն, այլև վերամշակում և արտադրանքի վաճառք տարածաշրջանային տնտեսական գոտիներում և շուկաներում:

VII. ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ, ՈՒԺԵՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՎԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏ ԵՐԿԻՐ

1.Քաղաքացիական հասարակության հզորացում. անձնական նախաձեռնությունների խրախուսում

265. Մեր ազատական-ժողովրդավարական սահմանադրական կարգը և նրա քաղաքական հաստատությունները կենսունակ ժողովրդավարության հիմքն են: Մեր նպատակն է շարունակաբար ամրացնել սահմանադրական այս կարգի վարկն ու նրա հանդեպ քաղաքացիների հարգանքը: Արագ փոփոխվող աշխարհում մեր երկրի ապագա կենսունակությունը կախված է նրանից, որ քաղաքացիները պատասխանատվություն ստանձնեն միմյանց հանդեպ՝ սա ընկալելով որպես իրենց անձնական և հասարակական ազատության արտահայտություն: Մենք ցանկանում ենք, որ պետության և քաղաքացիների միջև գործեն գործընկերային և փոխվստահության վրա հիմնված հարաբերություններ: Մենք ցանկանում ենք այնպիսի երկիր, որը կանգնած է իր քաղաքացու կողքին, որը երաշխավորում է, ապահովում է, օգնում է, քաջալերում է և յուրաքանչյուրին իր փոքրիկ բաժին ազատությունն ու անձնական պատասխանատվությունն ունենալու հնարավորություն տալիս:

266. Ժողովրդավարական գործընթացներին քաղաքացու մասնակցությունը դրսևորվում է ընտրություններում և հանրաքվեներում, բայց նաև քաղաքացիական բազմապիսի նախաձեռնու-

թյուններում։ Հանրային բարեկեցության հասնելու ճանապարհին մեր կենսունակ ժողովրդավարությանն անհրաժեշտ է ակտիվ քաղաքացիների կամավոր և անմնացորդ նվիրումը։

267. Քաղաքացիական գիտակցությունը ծնում է հասարակական համերաշխություն։ Քաղաքացիների մասնակցությունը չի կարելի փոխարինել ոչ մի ուրիշ բանով։ Յուրաքանչյուրն ունի կարողություններ, որոնք կարող են հարստացնել մեր համակեցությունը։ Յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում հանրային բարեկեցության համար։ Քաղաքացիական գիտակցությունը և պատասխանատվության զգացումն արտահայտվում են ամուսնության և ընտանիքի մեջ, եկեղեցում, աշխատավայրում, միություններում, խմբակներում և քաղաքացիական նախաձեռնություններում, ինչպես նաև համայնքներում և պետության մեջ։

268. Առանց հասարակական հիմունքներով աշխատանքի՝ մեր հասարակությունը աղքատ կլիներ։ Մարդկանց, ովքեր աշխատում են հասարակական հիմունքներով, ովքեր կամավոր սոցիալական աշխատանք են կատարում կամ կյանքի են կոչում և ֆինանսավորում քաղաքացիական նախագծեր, պետք է խրախուսել և չհիասթափեցնել բյուրոկրատական կարգուկանոնի պարտադրանքներով։

269. Մենք ցանկանում ենք ունենալ այնպիսի քաղաքացիներ, ովքեր պատրաստ են ստանձնելու քաղաքացիական նախաձեռնություններ և պատասխանատվություն։ Հասարակական աշխատանքի բորսաները և կամավորականների համախմբման գործակալությունները կարող են աջակցել և կազմակերպել հասարակական աշխատանքներ։ Մենք ջանում ենք, որ քաղաքացու կենսագրությունն ուսումնասիրելու ժամանակ պատշաճ ուշադրության արժանանան այն ժամանակահատվածները, երբ կատարվել է հասարակական և կամավորական աշխատանք։

270. Շատ մարդիկ, հատկապես ձեռնարկատերերը, արժեքավոր ներդրում են ունենում մեր բարեկեցության ապահովման հարցում։ Հիմնադրամների, հանրային օգտագործման և հարկային օրենքների բարեփոխումներով մենք ցանկանում ենք աջակցել նրանց գործունեությանը։

271. Միությունները, այլ հասարակական կազմակերպությունները ու խմբերը ակտիվ և ազատ քաղաքացիական հասարակության մասն են։ Նրանք իրենց առջև դրված խնդիրները հանրային բարեկեցության սահմաններում տնօրինում են ինքնուրույնաբար։ Նրանք խթանում են նաև հասարակական և քաղաքական քննարկումները։

Սպորտ

272. Սպորտը միավորում է, կրթում, աշխուժացնում, ոգևորում և ինտեգրում։ Սպորտը նպաստում է մարդասիրական այնպիսի արժեքների ամրագրմանն, ինչպիսիք են հանդուրժողականությունը, ազնվությունը, աշխատանքը, մրցակցությունը, պատասխանատվությունը, սեփական սահմանների ճանաչումն ու այլոց սահմանների հանդեպ հարգանքը։ Ահա այսպես սպորտը կարող է էականորեն նպաստել ավելի խաղաղ և ավելի լավ աշխարհի հաստատմանը։

Սպորտը մեր երկրում մեծ *ժողովրդականություն* է վայելում։ Լրատվամիջոցներում սպորտի լայն լուսաբանվածությունն այն դարձնում է իրադարձություն բոլորի համար. սպորտը նշանակալի տնտեսական գործոն է, այն ստեղծում և ապահովում է աշխատատեղեր։ Մեր սպորտային քաղաքականության առաջնային նպատակը սպորտին՝ իր ողջ համակարգով, շարունակական աջակցություն ցուցաբերելն է, նրա ինքնիշխանության և ինքնապատասխանատվության հզորացումը։

Ակումբները գերմանական սպորտի հիմքն են։ Ակումբներին և նրանցում հասարակական հիմունքներով աշխատող մարդկանց հուսալի աջակցություն ցուցաբերելը մեր սպորտային քաղաքականության կարևորագույն նպատակներից է։ Սպորտը, շարժումը և սնունդը կարևոր դեր են խաղում առողջության

պահպանման գործում: Պետք է լրացուցիչ խթաններ ստեղծել անհատի անձնական պատասխանատվությունը սեփական առողջության պահպանման հարցում բաձրացնելու համար: Սպորտի և շարժման միջոցով հիվանդությունների կանխարգելումը թեթևացնում է մեր սոցիալական համակարգերի բեռը:

Սպորտային կենտրոնների անխափան գործունեությունը և սպորտային ենթակառուցվածքների բազմազանությունը ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ սիրողական սպորտի զարգացման անվիճելի նախապայմաններ են:

Հավասարաչափ աջակցություն՝ պրոֆեսիոնալ և սիրողական սպորտին

273. Մենք սպորտում ցուցաբերվող առաջադիմության սկզբունքի և մարդասիրական պրոֆեսիոնալ սպորտի կողմնակից ենք: Պրոֆեսիոնալ սպորտը կարևոր օրինակ է ծառայում մասսայական սպորտի զարգացման համար: Բունդեսվերում՝ զինված ուժերում, դաշնային ոստիկանությունում և մաքսային ծառայությունում սպորտի խրախուսումը գերմանական պրոֆեսիոնալ սպորտի համար պարտադիր խնդիր է, և պետք է պահպանել ցայժմ այդ ոլորտում ձեռք բերած մակարդակը: Տնտեսությունը, գործարար աշխարհը նույնպես պետք է պրոֆեսիոնալ մարզիկներին մասնագիտական հեռանկարների հնարավորություն տան:

Շնորհաշատ երիտասարդների նպատակային և համակարգված խրախուսման համար անհրաժեշտ է վերջիններիս ապահովել փոխհամաձայնեցված և համակարգված սպորտային, դպրոցական և մասնագիտական կրթությամբ: Մենք հանդես ենք գալիս սպորտային էլիտար դպրոցների ընդլայնման օգտին:

Հաշմանդամների սպորտային հաջողությունները, լինեն դրանք պրոֆեսիոնալ, թե սիրողական ոլորտում, հիացմունք են առաջացնում, և անկաշկանդ կամքի ու ջանքի արտահայտություն

են: Սպորտն ու շարժումը խթանում են անհատական առաջադիմությունը, ինքնավստահություն են ծնում, դյուրացնում են մարդու տարածական և սոցիալական շարժունակությունը և, առհասարակ, առողջ կյանքի արդյունավետ միջոցներ են:

Անհրաժեշտ է ընդլայնել հաշմանդամներին առաջարկվող սպորտով զբաղվելու հնարավորություններն և գրավչությունները: Պետք է ապահովել հաշմանդամների անխոչընդոտ ելքն ու մուտքը սպորտային հաստատություններ:

Պայքար խթանիչների դեմ

274. Խթանիչները խաթարում են սպորտի նշանակությունը, մրցակցության մեջ խաբում իրար հետ ուժերը չափողներին, հանդիսատեսին և, վերջապես, վտանգում են մարզուհիների և մարզիկների առողջությունը: Պրոֆեսիոնալ սպորտի հանդեպ ակնածանքը մեծապես կախված է խթանիչների դեմ տարվող արժանահավատ և արդյունավետ պայքարից:

Խթանիչներ հանդիպում են նաև մարմնամարզական և ազատ ժամանցի կենտրոններում. նրանց դեմ միասնաբար պետք է պայքարեն սպորտի, քաղաքականության, տնտեսության, լրատվության ոլորտները և ողջ հասարակությունը:

2. Հանուն հզոր պետության. ազատության և անվտանգության երաշխիքներ քաղաքացիներին

275. Մեր պետությունը ծառայում է հանուն մարդու արժանապատվության և ազատության: Այն իր հեղինակությունը կառուցում է հատկապես շնորհիվ սահմանադրության հետ իր կապվածության: Պետությունը պարտավոր է հոգալ անհատի և հանրության բարեկեցության մասին: Ժողովրդավարական համակեցության մեջ չկա իրավունք առանց պարտականության և չկա ազատություն առանց պատասխանատվության:

276. Պետության առանցքային խնդիրներից է պաշտպանել մարդու հիմնարար իրավունքները և կանխել իշխանության չարաշահումը: Պետությունը պարտավոր է իր քաղաքացիներին պաշտպանել արտաքին և ներքին սպառնալիքներից և իրագործել ազատության և խաղաղության հանդեպ ստանձնած իր պարտավորությունը: Նա պարտավոր է անձի զարգացման հնարավորություն ընձեռել իր յուրաքանչյուր քաղաքացու, խրախուսել թույլերին և համերաշխության սկզբունքով ապահովել ռիսկերի կանխումը, ինչը վեր է անհատի ուժերից: Բացի այդ՝ պետությունը պետք է ապահովի և մշտապես զարգացնի մարդկանց համակեցության համար անհրաժեշտ կարգուկանոնը և պահպանի հասարակական կարողությունների ազատությունն ու բազմազանությունը: Նա պետք է հոգա և ապագա սերունդներին փոխանցի բնական պատշաճ կենսապայմաններ և նպաստի արարչագործության պահպանմանը:

277. Որպեսզի պետությունը կարողանա կենտրոնանալ իր առջև դրված առանցքային խնդիրների վրա, այն չպետք է ծանրաբեռնված լինի կամ իր վրա վերցնի պահանջներ կամ խնդիրներ, որոնց ստանձնումը կհակասեր անձնական պատասխանատվության, ազատության և սուբսիդիարության սկզբունքներին: Կենսունակ պետական ծառայությունը նախապայման է վստահելի հանրային ենթակառուցվածքների համար: Պետական ծառայողի ինստիտուտը եղել է կարևորագույն խնդիրների լուծման պատասխանատուն: Մենք ցանկանում ենք ունենալ հզոր, բայց ոչ ուռճացած պետություն:

Ազատություն Աստծո և մարդկանց հանդեպ պատասխանատվության մեջ

278. Մեր ազատատենչ պետությունն ապրում է այնպիսի նախապայմանների հաշվին, որոնք նա ինքը չի կարող երաշխավորել: Արժեքային համոզմունքները ենթակա չեն պետական կարգավորման: Ավելին՝ հենց նրանք են ստեղծում հասարակական համակարծություն, որի արդյունքում իրացվում են մարդկանց ազատություններն ու պարտավորությունները:

279. Հավատարիմ լինելով սահմանադրության համապատասխան դրույթին՝ մենք հավատարիմ ենք մեր ստանձնած պատասխանատվությանը Աստծո և մարդկանց առջև: Սահմանադրությունը խարսխված է այնպիսի արժեքների վրա, որոնք բխում են քրիստոնեությունից: Նրանք իրենց խոր կնիքն են թողել մեր երկրի և հասարակության վրա: Մեր գիտակցության մեջ նրանց պահելը, պահպանելը և արժևորելը մենք ընկալում ենք ոչ միայն որպես քրիստոնեական եկեղեցիների, այլև պետության և քաղաքացիների առջև դրված առաջնահերթ խնդիր: Քրիստոնեական խորհրդանիշները պետք է տեսանելի լինեն հանրային-պետական ոլորտում: Նրանք նույնքան պետք է պաշտպանված լինեն, որքան քրիստոնեական հանգստյան ու տոն օրերը:

280. Միաժամանակ մենք ընդունում ենք, որ այլ կրոնները նույնպես փոխանցում են արժեքներ, որոնք դրական ազդեցություն կարող են գործել մեր հասարակության և մեր ազատ սահմանադրական կարգի վրա: Մենք հարգում ենք կրոնական բոլոր պատկանելությունները: Նույնը մենք ակնկալում ենք նաև տարբեր կրոնների հետևորդներից: Մենք առանձնակի պատասխանատվություն ենք կրում Գերմանիայում հրեական համայնքների նկատմամբ: Նրանք մեր մշակույթի մասն են և մեր հասարակության անբաժանելի բաղադրիչն են: Իրենց հասարակական գործունեությամբ նրանք միաժամանակ նպաստում են ողջ աշխարհում Գերմանիայի վարկը բարձր պահելուն:

281. Մենք ճանաչում ենք քրիստոնեական եկեղեցիների և ընդունված կրոնական համայնքների ինքնուրույնության և անկախության սկզբունքը: Մենք նրանց համատեղ պատասխանատվությունն ենք տեսնում հանրային բարեկեցության հարցում, այդ պատճառով էլ կողմ ենք եկեղեցական հարկերի գոյություն ունեցող համակարգին: Մենք ճանաչում և հարգում ենք եկեղեցիների՝ կարիքավորներին ուղղված գործնական ջանքերը՝ բխած «սիրիր

մերձավորիդ» քրիստոնեական սկզբունքից: Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների՝ հասարակության մեջ գործելու ազատությունը պետք է անձեռնմխելի մնա: Մեր ազատ օրենսդրությամբ երաշխավորվում է դավանանքի ազատության իրավունքը: Մենք աշխարհի պետություններից և կառավարություններից ակնկալում ենք, որ նրանք նույնպես իրենց երկրներում ապահովեն դավանանքի ազատություն: Մենք ցանկանում ենք աջակցություն ցուցաբերել կրոնների միջև ընթացող մշտական երկխոսությանը:

Ազատական ժողովրդավարական սահմանադրություն

282. Գերմանիայում մարդկանց համակեցության համար հիմք է ծառայում սահմանադրական արժեհամակարգը: Այս վստահելի հիմքի վրա էլ մեր ժողովուրդը համախմբվել է ի ժողովրդավարական, ազատատենչ, սոցիալական և դաշնային իրավական պետություն:

283. Մենք դավանում ենք ներկայացուցչական ժողովրդավարություն, որը իրար է կապում քաղաքական իշխանությունն ու ժողովրդավարական պատասխանատվությունը: Ներկայացուցչական ժողովրդավարությունը չի բացառում անմիջական ժողովրդավարության բաղադրիչները: Սրանք կարող են ռեգիոնալ մակարդակներում հաջողությամբ լրացնել ներկայացուցչական համակարգը:

284. Մենք ապրում ենք տարբեր աշխարահայացքների, կարծիքների և հետաքրքրությունների տեր մարդկանց հասարակությունում: Սա պահանջում է ժողովրդավարական կամքի ձևավորում, որտեղ իրար հակասող կարծիքների և շահերի բովում կամբողջանան և կկազմվեն մեծամասնություններ, որոնք սակայն չեն անտեսի փոքրամասնությունների ցանկություններն ու համոզմունքները: Մեծամասնության սկզբունքը նաև փոքրամասնությունների շահերի պաշտպանություն է ենթադրում:

285. Քաղաքական կուսակցություններն առանձնահատուկ պատասխանատվություն են կրում պետության և հասարակության առջև: Նրանք հանձն են առնում ուսումնասիրել հասարակության ցանկությունները, ազդում են քաղաքական կամքի ձևավորման վրա և նպաստում են քաղաքացիների ակտիվ մասնակցությանը քաղաքական կյանքին: Նրանք իրենց խնդիրը կատարած են լինում, եթե շահում են քաղաքացիների վստահությունը և նրանց առջև հանդես են գալիս պարզ, գործնական և հասցեագրված առաջարկներով: Կուսակցությունների՝ հասարակական կարծիքի ձևավորման ջանքերը և գործունեությունն առհասարակ պետք է թափանցիկ լինեն:

Ժողովրդական կուսակցություններն իրենց հայացքն ուղղում են Գերմանիայի ողջ ժողովրդին: Հատկապես ՔԴՄ-ն՝ որպես ժողովրդական կենտրոնամետ կուսակցություն, ի վիճակի է լավագույնս համադրել ամենատարբեր շահերը՝ հօգուտ հանրային բարօրության:

286. Մեր ազատ հասարակությանը համապատասխանում են լրատվամիջոցների ազատությունն ու պատասխանատվությունը: Նրանք մասնակցում և ազդում են հանրային կարծիքի ձևավորման վրա և նպաստում պետական իշխանության վերահսկմանը: Սրա համար անհրաժեշտ նախապայման է նրանց անկախ և բազմազան լինելը:

Ազատությունն ու անվտանգությունը իրավական պետությունում

287. Ազատության ապահովումը և մարդկանց համակեցության կարգավորումը օրենքի խնդիրն է: Իրավական պետությունում պետական իշխանության իրացումը կախված է իրավունքից և օրենքից: Օրենսդրությունը մեր հասարակությանը տալիս է կարգավորման շրջանակ: Այն ստեղծում, ամրագրում է արժեքներ և կարելիի համար սահմաններ գծում այնտեղ, որտեղ վտանգվում են մարդու արժանապատվությունն ու ազատությունը: Մեր իրա-

վական պետությունը մեզ երաշխավորում է իրավական ապահովություն։

288. Ազատությունն ու անվտանգությունը մարդու տարրական պահանջմունքներ են։ Նրանք չեն բացառում, այլ փոխլրացնում են միմյանց։ Պետությանը վերապահված բացառիկ իրավասությունների մենաշնորհից է բխում նաև ազատություն և անվտանգություն ապահովելու նրա պարտավորությունը։ Այն պետությունը, որը չի պաշտպանվում իր թշնամիներից, խաղում է իր քաղաքացիների ազատության հետ։ Այդ պատճառով մենք պետք է սթափ և աչալուրջ լինենք անհանդուրժողականության, ծայրահեղականության և բռնության յուրաքանչյուր դրսևորման նկատմամբ։ Չպետք է բացառել որևէ անհանդուրժողականություն։ Ծայրահեղական նկրտումներով առաջնորդվող իշխանություն ունենալու մեր դառը փորձը մեզ մղում է մեծ պատասխանատվությամբ պայքարել աջ և ձախ ծայրահեղական խմբավորումների դեմ։

289. Հանցագործությունների, հասարակական անվտանգությանը և կարգին սպառնացող վտանգների կանխումը, ինչպես նաև հանցագործությունների և անօրինականությունների հայտնաբերումն ու հետապնդումը հասարակության խաղաղ համակեցության կարևորագույն նախապայմաններ են։ Հանցավորության դեմ պայքարը համահասարակական խնդիր է։ Այսպես ընտանիքները և պետությունը լրատվամիջոցների աջակցությամբ պետք է պայքարեն հատկապես երիտասարդների կողմից ուժի կիրառման դրսևորումների դեմ, որոնք շատ հաճախ հետևանք են լինում անհաջող ինտեգրացիայի և թյուր ընկալված դերային վարքի և անհեռանկարայնության։ Պետության հանդեպ կարող է վստահություն լինել այն դեպքում միայն, երբ մարդ պաշտպանված է զգում իրեն և չի վախենում իր ընտանիքի և ունեցվածքի համար։ Ով անտեսում է անվտանգությունը, վտանգի տակ է դնում պետության հանդեպ հարգանքը։

290. Հանցավորության թերագնահատումը սխալ ճանապարհ է։ Ով օրենք է խախտում և դրանով դեմ կանգնում մեր հասարակության արժեհամակարգին, պետք է հաշվի նստի համապատասխան հետապնդման և արժանի պատժաչափի հետ։ Ոստիկանությունն ու արդարադատությունը պաշտպանում են հասարակությանը հանցավորությունից։ Լիարժեք ժողովրդավարությունը պետք է իր պետական օրգաններին հնարավորություն տա օրենքի շրջանակում օգտագործել հանցավորության դեմ պայքարի համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկա և ձեռք բերել այդ գործում անհրաժեշտ տեղեկություններ։ Տվյալների պահպանման շահերը պետք է ներդաշնակեցվեն հանցավորության դեմ արդյունավետ պայքարի հետ։ Տվյալների պաշտպանությունը չպետք է հանցագործությունների պաշտպանության վերածվի։

291. Համաշխարհային մասշտաբներով գործող ահաբեկչությունը և կազմակերպված հանցավորությունը ահագնանում են։ Քաղաքացիները պետք է պաշտպանվեն դրանցից։ Պետք է ընդլայնել հետախուզական մարմինների և արդարադատության ոլորտում ծավալվող միջազգային գործակցությունը։ Սահմաններ չճանաչող հանցավորությանը պետք է անսահմանափակ իրավական միջոցներ հակադրել։

292. Քաղաքական իսլամիզմը և ահաբեկչական իսլամիզմը, որոնցից ամեն մեկն իսլամի իր արմատական մեկնաբանությունն ունի մեր սահմանադրական կարգի վերաբերյալ, առանձնահատուկ վտանգ են մեր քաղաքացիների, այդ թվում նաև մահմեդականների՝ սահմանադրությանը հավատարիմ մեծամասնության համար։ Մենք խրախուսելու ենք բոլոր ժողովրդավարների՝ կրոնական սահմաններից դուրս ծավալվող հասարակական համերաշխությունը, միաժամանակ հետևողականորեն պայքարելու ենք ուժի կիրառման, բռնությունների պատրաստ արմատականության դեմ։

293. Ներքին անվտանգությունը բարելավելու համար անհրաժեշտ է հզորացնել ոստիկանությունը։ Ներքին անվտանգությունը նոր մարտահրավերների պայմաններում համաշխարհային նշանակություն է ստացել։ Ներքին և արտաքին անվտանգության գոր-

ծիքներն ու օրգանները պետք է միմյանց հետ շաղկապված լինեն։ Մեր ազգային հայեցակարգի մեջ պետք է բարելավվի Դաշնության, հողերի և համայնքների համագործակցությունն այս ոլորտում։

Այսպիսի հայեցակարգի համար կարևորագույն դրույթ է Բունդեսվերի վերաբերյալ դրույթը, որն ուղղված է հայրենիքի պաշտպանության հզորացմանը։ Առանձնապես վտանգավոր իրավիճակներում պետք է թույլ տալ զինված ուժերի միջամտությունը պետության ներսում։ Զինված ուժերն իրենց առանձնահատուկ կարողությունները պետք է ի նպաստ դնեն ահաբեկչական սպառնալիքների և աղետների կանխման ժամանակ՝ գործելով օրենքի շրջանակում՝ ի լրումն դաշնային և հողային ոստիկանության գործողությունների։

Ապաբյուրոկրատացման խթանում

294. Մենք մերժում ենք այնպիսի պետությունը, որը կարգավորում է մարդկանց կյանքի բոլոր ոլորտները։ Մենք դեմ ենք օրենքների և որոշումների միջոցով պետական գերկարգավորմանը և վարչարարության գերբյուրոկրատացմանը։ Քաղաքացիական ազատությունը և սոցիալ-շուկայական տնտեսակարգը չպետք է խեղդվեն նորմերի տարափի տակ։ Կանոնավորապես պետք է ստուգվի առկա օրենքների ու նորմերի հետագա նպատակահարմարությունը։ Օրդենսդիրները պետք է ստուգեն և հիմնավորեն նոր օրենքների և նորմերի անհրաժեշտությունը։ Սկզբունքը հետևյալն է. եթե անհրաժեշտ չէ ստեղծել նոր օրենք, ուրեմն պետք չէ ստեղծել նոր օրենք։ Տարրական օրենքները, ինչպիսին կանոնակարգերն ու հրամանագրերն են, պետք է հետագայում ուժի մեջ մտնեն բացառապես որոշակի ժամանակահատվածի համար։ Օրենքները պետք է լինեն հասկանալի և սահմանված լինեն հնարավորինս հակիրճ։ Օրենքների պարզորոշությունն ու համակարգվածությունը պետք է շարունակ բարելավվեն։ Պետք է պարզեցվեն վարչական գործընթացներն ու պետական մարմինների համակարգերը և ընդլայնվեն այսպես կոչված E-Government-ի՝ տեղեկատվական և հաղորդակցային կառավարման և վարչարարության առաջարկած հնարավորությունները։

295. Բյուրոկրատիայի կրճատումը պետք է սկսվի պետության նպատակների հստակեցման քայլից։ Ավելորդ բյուրոկրատիայի կրճատումը ի շահ արդյունավետ և հասցեականացված վարչարարության՝ անհապաղ կարգավորման և մշտական ուշադրության արժանի խնդիր է, որը բխում է քաղաքացիների, տնտեսության և պետության շահերից։ Քաղաքացիները կարող են և ցանկություն ունեն ավելին անել հասարակության հետ և հասարակության ներսում, քան դա նրանց թույլ է տալիս պետական իրավասությունների խրթին և անթափանց բաշխվածությունը։ Մենք ցանկանում ենք պետական բոլոր օղակների, ինչպես նաև համաեվրոպական հարթության մեջ հասնել իրավասությունների և պատասխանատվությունների ոլորտների հստակ բաշխվածության։ Կարևոր է, որ ապաբյուրոկրատացման ճանապարհին համադրվեն բոլոր օղակների ջանքերը։

Արդյունավետ արդարադատություն և արտարադատության հետևողական իրականացում

296. Անկախ արդարադատությունը մեր իրավական պետության ողնաշարն է։ Այն քաղաքացիներին պաշտպանում է իշխանության չարաշահման կամայականություններից և հոգում, որ յուրաքանչյուրն օգտվի իր իրավունքից։

Քննվող գործերի տևականությունը արգելում է իրավական խաղաղության պատշաճ վերականգնմանը։ Մենք ցանկանում ենք պահպանել դատարանների և դատախազությունների գործունակությունը և անհրաժեշտության դեպքում բարելավել այն։

297. Արդարադատությունը պետք է ճշգրիտ համադրվի քաղաքացիների անվտանգության շահերի հետ: Մեր նպատակը նախկինում հանցանք կատարածների՝ վերստին հասարակության անդամ դառնալն է, սակայն քաղաքացիները պետք է մշտապես պաշտպանված լինեն մշտական վտանգ ներկայացնող հանցագործներից: Անվտանգությունն ու դատապարտված անձի վերասոցիալիզացիան չպետք է իրար հակասեն: Վերասոցիալիզացիան նույնպես պետք է ծառայի քաղաքացիներին հանցավորությունից պաշտպանելու գործին: Տուժածի պաշտպանությունը գերակա է հանցագործի պաշտպանության նկատմամբ:

Սոցիալական պետություն/պետականություն

298. Ազատական իրավական պետությունը և սոցիալական պետությունը լրացնում են միմյանց: Արդարացի սոցիալական համակարգը պետք է հիմնարար նախապայմաններ ստեղծի բոլոր մարդկանց արժանապատիվ կեցության համար և օգնություն երաշխավորի մարդու կամքից անկախ ստեղծված ծայրահեղ իրադրություններում: Սոցիալական արդարությունը պետք է գործի հատկապես թույլերի համար: Պետական սոցիալական հոգածությունը չպետք է վերածվի պետական խնամակալության: Այն պետք է խրախուսի անհատի կարողությունների ու ունակությունների դրսևորումները և ակնկալի վերջինիս համերաշխ մասնակցությունը հասարակական կյանքին. այստեղ նույնպես գործում է սուբսիդիարության սկզբունքը:

Դաշնային կառավարում/ֆեդերալիզմ և համայնքային ինքնակառավարում

299. Գերմանիայի դաշնային համակարգը մշակութային հիմքով և պատմականորեն ձևավորված տրամաբանական իրողության՝ մեր հայրենիքի և իր քաղաքացիների ինքնության արտահայտությունն է: Դաշնային կառավարումը և համայնքային ինքնակառավարումը մեր պետության սահմանադրական կարևորագույն սկզբունքներից են: Մենք ցանկանում ենք պահպանել և զարգացնել այդ սկզբունքները: Դրանք նպաստում են մարդկանց ազատության ապահովմանը և պետական իշխանության բաշխմանը: Դրանք հնարավորություն են տալիս հաշվի առնել առանձին տարածաշրջանների և համայնքների առանձնահատկություններն ու հատուկ շահերը: Քաղաքներում և համայնքներում ամեն օր հոգ է տարվում այն մասին, թե ինչպես է գործում մեր համակեցությունը: Մարդկանց անմիջական շփումներում իրականացվող ակտիվ աշխատանքների, տեղական մակարդակով որոշումներ կայացնելու գործընթացներում քաղաքացիական մասնակցության միջոցով է ապացուցվում մեր համակեցության հանդեպ քաղաքացիների տածած հարգանքը: Եվրոպական ինտեգրացիայի և համաշխարհայնացման պայմաններում ինքնակառավարվող համայնքները ամենակարևոր օղակներն են, որոնց մեր հասարակությունը կարող է դիմել և վստահել:

300. Հանրային խնդիրները, հասցեականության, քաղաքացիներին անմիջապես մոտ լինելու սկզբունքից ելնելով, պետք է լուծվեն համայնքային մակարդակում, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար: Համայնքները պետք է ապահովված լինեն բավարար ֆինանսական միջոցներով: Դաշնության, հողերի և համայնքների իրավասությունների բաշխման մեջ պետք է հաշվի առնվեն և կիրառվեն սուբսիդիարության և կոնեքսիայի՝ արդյունավետ հարաբերությունների սկզբունքները:

301. Հողերի մասնակցությունը Դաշնության օրենսդրությանը և վարչարարությանը մեր դաշնային համակարգի անհրաժեշտ սկզբունքներից է: Սա վերաբերում է նաև հողերի միջև համագործակցությանը, ինչը մենք ցանկանում ենք խթանել: Դաշնության, հողերի և համայնքների իրավասություններն ու քաղաքական պարտավորությունները պետք է հստակ ճանաչելի լինեն:

302. Դաշնային կառավարումը գնալով ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում համաշխարհայնացման և Եվրամիության ընդլայնման ու ամրապնդման ֆոնի վրա։ Գերմանիան հարստացնում է Եվրամիության ինտեգրացիոն գործընթացն իր դաշնային կառուցվածքներով և իր փորձով։

3. Գերմանիան՝ ինտեգրացիոն երկիր

303. Ներգաղթյալների՝ հատկապես երկրորդ և երրորդ սերնդի երեխաների և երիտասարդների ինտեգրացիան մեր հասարակության մեջ ՔԴՄ-ի համար քաղաքական առանցքային խնդիր է։ Ինտեգրացիան մենք հասկանում ենք որպես առաջադեմ դրական գործընթաց, որը ենթադրում է միգրանտների, քաղաքականության և ողջ հասարակության պատասխանատվություն։ Միգրացիան և ինտեգրացիան կառավարելի են. դրանք մեզ համար նոր հնարավորություններ են և հարստացնում են մեր երկիրը։ Մեր քաղաքականությունը պետք է ելնի Գերմանիայի ունեցած հասարակական և տնտեսական նշանակության շահերից՝ միաժամանակ հաշվի առնելով եվրոպական միգրացիայի չափերը, գիտակցելով իր մարդասիրական պարտավորությունները և իր պատասխանատվությունը ավելի թույլ զարգացած պետությունների հանդեպ։

304. Մենք կարիք ունենք լավ որակավորում ունեցող, աշխատունակ և ինտեգրացիայի պատրաստ օտարերկրացիների վերահսկվող ներգաղթի, մարդկանց, որոնք ցանկանում են ապրել, աշխատել մեզ մոտ, ընդունել մեր արժեքներն ու մեր երկիրը՝ որպես իրենց հայրենիք։ Այսպիսի մարդկանց համար Գերմանիան պետք է գրավիչ լինի։ Նրանք օգուտ են մեր երկրին։

305. Մենք, առաջնորդվելով պատմական պատասխանատվությամբ, հավատարիմ ենք մնում գերմանացի վտարանդիների ընդունման և միաժամանակ նրանց հայրենի շրջաններում կենսապայմանների բարելավմանն ուղղված մեր քաղաքականությանը։

306. Գերմանիան աշխարհի հանդեպ բաց և հանդուրժող երկիր է, երկիր, որտեղ գերմանացիներն ու ներգաղթյալները խաղաղ ապրում և աշխատում են կողք կողքի։ Գերմանիան մշտապես ընդունել է մարդկանց և նրանց մեծամասամբ հաջողությամբ ինտեգրել՝ հնարավորություն տալով նրանց զարգացնելու իրենց շնորհները, հարստացնելու և զարգացնելու մեր երկիրը մշակութային, հոգևոր և սոցիալական առումներով։ Իրենց հաջողություններով նրանք ճանաչման են արժանացել։ Միաժամանակ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, առաջնորդվելով մարդասիրական մղումներով, ապաստան է տվել բազմաթիվ մարդկանց, ինչպես և ենթադրում է մեր քրիստոնեական ընկալումներից բխող պատասխանատվությունը։

307. Գերմանիան ինտեգրացիոն երկիր է։ Ինտեգրացիան հասարակության մեջ անձի ներգրավումն է՝ մշակութային բազմազանության հանդեպ համընդհանուր արժեքների վրա հիմնված հարգանքի դրսևորմամբ։ Ինտեգրացիան նաև ինտեգրվող անձի կողմից մեր երկրի նկատմամբ պատասխանատվության ստանձնումն է։ Մենք մերժում ենք կողք կողքի, բայց իրար հետ կապ չունեցող զուգահեռ հասարակությունները, որոնցում չի հարգվում մեր երկրի իրավական կարգը։ Ով ցանկանում է ապրել Գերմանիայում, պետք է ճանաչի և ընդունի մեր ազատ և ժողովրդավարական սահմանադրության սահմանած արժեքներն ու նորմերը՝ առանց իր ծագումն ուրանալու և իր արմատներից հրաժարվելու։ Որտեղ սակայն կասկածի տակ են դրվում մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը, այնտեղ չի կարող գործել մշակութային առանձնահատկության հանդեպ իրավունքը։ Սա հատկապես վերաբերում է կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքին։ Այս սկզբունքի շուրջ բոլորը պետք է միակարծիք լինեն՝ ինչպես ներգաղթյալները, այնպես էլ նրանց ընդունողները։ Ով տևականորեն մերժում է ինտեգրացիան, պետք է հաշվի նստի պատժամիջոցների հետ։

308. Գերմաներենի իմացությունը ինտեգրացիայի բանալին է։ Հստակ դրված և ընդունելի պահանջները, ըստ մեզ, խոչընդոտներ չեն, այլ հասարակական ինտեգրացիայի կարևոր պայման։

Մեր սահմանադրությունն ասում է՝ պահանջել և աջակցել: ՔԴՄ-ն հանդես է գալիս ինտեգրացիոն լայնածավալ աջակցության դիրքերից: Ինտեգրացիան վերաբերում է քաղաքականության բոլոր ոլորտներին:

309. Հաջող ինտեգրացիան անհատից պահանջում է կամք և գործողություն, այն նաև հասարակության և պետության պատասխանատվության ոլորտում է: Այն պահանջում է բոլորի համատեղ ջանքերը և առնչվում կյանքի բոլոր բնագավառներին: Ինտեգրացիան տեղի է ունենում հենց համայնքներում ծավալվող համատեղ կյանքում: Այստեղ պահանջվում են հատկապես եկեղեցիների, կրոնական միությունների, մշակութային և կրթական հաստատությունների, ներգաղթյալների հարցերով զբաղվող կազմակերպությունների, լրատվամիջոցների, սպորտային կառույցների, հիմնադրամների, միությունների և կազմակերպությունների, ձեռնարկությունների և արհմիությունների ջանքերը: Այս դեպքում բոլորս կշահենք՝ ունենալով արդյունավետ ինտեգրացիա և վերահսկվող ներգաղթ՝ շահավետ թե՛ տնտեսության, թե՛ աշխատանքային ոլորտի, և թե՛ մեր համատեղ առօրյա կյանքի համար:

310. Քաղաքացիության շնորհումը՝ որպես ինտեգրացիոն հաջող գործընթացի արտահայտություն, մենք հասկանում ենք որպես անձի իրավահավասար մասնակցության իրագործում՝ իրավունքներով և պարտավորություններով հանդերձ: Սա անհատի կյանքում վճռորոշ պահ է, երբ վերջինս իր հավատարմությունն է հայտնում մեր պետությանը: Այս գործընթացը պետք է ճանաչում գտնի և ուշադրության արժանանա ու խրախուսվի՝ քաղաքացիության շնորհման թվերի ետընթացի պայմաններում:

311. Ազգային ինտեգրացիոն ծրագիրը ՔԴՄ-ի մտահղացումն է, և ՔԴՄ-ն քաղաքական համընդհանուր այնպիսի հայեցակարգի կողմնակից է, որը աշխատանքի և սոցիալական, ընտանիքի, կրթության և օտարերկրացիների հարցերով տարվող քաղաքականությունը կշաղկապի նոր ինտեգրացիոն քաղաքականության հետ: Այս կերպ մենք կարող ենք ձևավորել գործընկերային հասարակություն:

VIII. Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՆՐԱ ՇԱՀԵՐԻ

Եվրոպան Գերմանիայի հնարավորությունն է

312. ՔԴՄ-ն գերմանական եվրոպամետ կուսակցություն է: Հենց սկզբից այն ջերմեռանդությամբ առաջ է մղել եվրոպական միավորման գործընթացը: Կոնրադ Ադենաուերը խիզախորեն մեկնարկեց այն, Հելմուտ Քոլը շարունակեց այն խորացնել նաև Գերմանիայի վերամիավորումից հետո, հիմա մենք ենք շարունակում եվրոպական ինտեգրացիան: Եվրամիությունը բխում է բոլոր անդամ-պետությունների և նրանց քաղաքացիների շահերից: Եվրոպայի հզորությունը մշտապես նաև Գերմանիայի շանսն է:

313. Եվրոպան մշակութային և արժեքային ընդհանրություններով հանրություն է: Այն իր բնակիչներին միավորում է եվրոպական ինքնության գիտակցությամբ: Ազգային պետությունները և նրանց ժողովուրդների ինքնությունը միավորված և բազմադեմ Եվրոպան բնորոշող բաղկացուցիչներ են: Մեր մայրցամաքի միասնական ավանդույթները, կրոնական, գաղափարական և պատմահասարակական հիմքերը միավորում են այստեղ ապրող ժողովուրդներին անկախ նրանց ազգային և տարածաշրջանային, քաղաքական և տնտեսական տարբերություններից:

314. Մարդու մասին քրիստոնեական պատկերացումը՝ որպես համընդհանուր եվրոպական ժառանգության տարր, չափազանց

կարևոր է եվրոպական ինքնության համար: Այն նաև համաշխարհայնացման պայմաններում է շարունակելու մնալ Եվրոպայի միասնական ապագան կերտելու կարևոր սկզբունքը:

315. Առաջնորդվելով սեփական շահի գիտակցմամբ՝ Գերմանիան պետք է ակտիվ դերակատարություն ստանձնի Եվրոպայի միասնությունն ավարտին հասցնելու գործում: Միավորված Եվրոպան համաշխարհայնացման դարաշրջանում լավագույնս կարող է հետամուտ լինել մեր շահերին տրանսատլանտյան մեր գործընկերների հետ միասին, որոնց հետ մեզ կապում են միասնական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ազատությունը, ժողովրդավարությունը և իրավական պետությունը:

316. Եվրոպայի միավորումը մեր մայրցամաքի ամենախոշոր քաղաքական իրադարձությունն է: Այն օրինակ և կողմնորոշիչ է աշխարհի շատ երկրների համար: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից սկսած՝ այն Եվրոպային բերում է ազատություն, խաղաղություն և բարեկեցություն: Եվրոպայի միավորումը նաև այս հաջողությունների պահպանման բանալին է: Այսօր Եվրամիությունը մեզ երաշխավորում է ավելի շատ ներքին և արտաքին ազատություն: Մենք համոզված ենք՝ Եվրամիությունը լավագույն պատասխանն է այնպիսի մարտահրավերերների, ինչպիսիք են համաշխարհայնացումը, միգրացիան, մեր անվտանգությանը, կլիմային և էներգետիկ անվտանգությանը սպառնացող վտանգները:

Ոչ մի անդամ պետություն ինքնուրույն ի վիճակի չէր լինի դիմագրավել այս մարտահրավերներին: Ճակատագիրը գերմանացիներին ու Եվրամիության նրանց գործընկերներին միավորել է մեկ հանրության մեջ: Առանձին անդամ պետությունների ինքնիշխանությունը արդյունավետորեն զարգանում է միայն շնորհիվ միասնական եվրոպական ինքնիշխանության:

317. Եվրամիությանն անհրաժեշտ է, որ իր քաղաքացիները գիտակցեն և ընդունեն Եվրամիության կարևորությունը: Այն պետք է ձգտի նորովի համոզիչ դառնալ իր քաղաքացիների համար, քանի որ խաղաղությունը, բարեկեցությունը և անվտանգությունն այսօր ընկալվում են որպես ինքնըստինքյան հասկանալի իրողություններ: Մենք ցանկանում ենք մեր քաղաքականությամբ մեծացնել մեր քաղաքացիների վստահությունը Եվրամիության հանդեպ:

318. Մենք ցանկանում ենք, որ հատկապես երիտասարդներն ակտիվորեն մասնակցեն Եվրամիության ինտեգրացիոն գործընթացներին: Սա նրանցից կպահանջի խորությամբ ուսումնասիրել Եվրոպայի պատմությունն ու եվրոպական քաղաքականությունը: Մենք ցանկանում ենք ունենալ հզոր և գործունակ Եվրոպա: Այդ պատճառով Եվրամիությունը պետք է սուբսիդիարության սկզբունքի համաձայն կենտրոնանա այնպիսի խնդիրների վրա, որոնք եվրոպական հարթության վրա ավելի լավ կարող են լուծվել, քան ազգային կամ համայնքային: Դրա համար անհրաժեշտ է հետագայում Եվրամիության Համաձայնագրերի մեջ կատարվող փոփոխություններում ուսումնասիրել և ճշտել խնդիրների կառուցվածքը: Ընդ որում՝ պետք է ձգտել նաև խնդիրների որոշ մասը հնարավորինս նորից ուղղորդել անդամ պետությունների իրավասության ոլորտ: Անհրաժեշտ է կերտել ժողովրդավար, թափանցիկ, գործունակ, ոչ բյուրոկրատ և քաղաքացիներին մոտ Եվրամիություն:

319. Եվրամիության ֆինանսական միջոցների օգտագործումը պետք է լինի նպատակային, արդյունավետ և հեռանկարային, ֆինանսական համակարգը պետք է բարեփոխվի անդամ պետությունների տնտեսական հզորություններին համապատասխան, ընդ որում՝ Եվրամիությունը չպետք է ստանա սեփական իրավասություններ՝ հարկեր սահմանելու և պետական պարտքեր վերցնելու: Այս առումով նույնպես մենք մարդկանց պետք է պարզ դարձնենք, թե ինչ առավելություններ ունի Եվրոպան, և ապագայի ինչ հեռանկարներ է այն բացում իրենց համար:

320. Եվրամիությունը՝ որպես քաղաքացիների և անդամ պետությունների միություն, Լիսաբոնի Համաձայնագրի շնորհիվ

այժմ կանգնած է քրիստոնեական, հրեական, անտիկ և լուսավորական ազդեցությունների արդյունքում ծնված միասնական արժեքների և մարդու եվրոպական ընկալման հիմքի վրա: Հիմնարար իրավունքների խարտիան այս արժեքների արտահայտությունն է: Մենք արժևորում ենք Աստված - մարդ հարաբերությունը: Մենք շարունակում ենք Եվրամիության սահմանադրություն ստեղծելու հեռահար նպատակ հետապնդել:

321. Ազգային պետությունը կփոփոխվի, բայց դեռ երկար կգոյատևի: Անդամ-պետությունների կողմից ստացած իր լիազորությունների շրջանակում Եվրամիությունը գործում է դաշնային կառավարման սկզբունքներով և մեթոդներով:

322. Մենք ցանկանում ենք խթանել ժողովրդավարությունն ու Եվրախորհրդարանի իրավունքները Եվրամիությունում: Եվրախորհրդարանն ու Եվրամիության Խորհուրդը պետք է իրավահավասարությամբ և երկպալատ համակարգով մասնակցեն եվրամիության օրենսդրության կերտմանը: Անդամ պետությունների ազգային խորհրդարանները պետք է շարունակեն անդամ պետությունների բարձր լիազորությունները փոխանցել Եվրամիության լիազորությունների ոլորտին: Նրանք նաև պետք է ստանձնեն սուբսիդիարության և արդյունավետ հարաբերությունների սկզբունքների վերահսկման գործընթացը: Եվրախորհրդարանի ընտրություններում քաղաքացիների տված քվեն պետք է իր արտացոլումը գտնի Եվրախորհրդարանի կողմից Եվրահանձնաժողովի նախագահի ընտրության մեջ: Բացի այդ՝ մենք հանդես ենք գալիս հօգուտ համաեվրոպական ուղիղ ընտրությունների իրավունքի հաստատման:

323. Քաղաքական կուսակցությունները եվրոպական հարթության վրա նպաստում են համաեվրոպական քաղաքական գիտակցության և Եվրամիության քաղաքացու կամքի արտահայտման հաստատմանը: Մենք՝ քրիստոնյա-ժողովրդավարներս, հետամուտ ենք այս խնդրին՝ որպես Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) անդամ: Եվրոպական կուսակցությունները պետք է առավել շատ ջանքեր գործադրեն համաեվրոպական հանրության ստեղծման հարցում, զորօրինակ՝ եվրոպական քաղաքականության առավել անձնականացման միջոցով:

324. Գտնվելով Եվրոպայի կենտրոնում՝Գերմանիան լավ հարաբերությունների կարիք ունի իր հարևանների հետ: Լինելով Եվրամիության ամենախիտ բնակեցված և ամենամեծ ժողովրդական տնտեսությունն ունեցող երկիրը՝ մենք պարտավոր ենք մեր նպաստը բերել Եվրոպայի միավորման գործընթացին՝ հանդես գալով որպես ինքնավստահ, աշխարհի հետ երկխոսելու պատրաստ և կամուրջներ գցող երկիր: Մենք համոզված ենք՝ Եվրոպան հաջողություն կդառնա միայն միասնական ջանքերի շնորհիվ՝ ինչպես խոշոր, այնպես էլ փոքր, ինչպես հին, այնպես էլ նորանդամ պետությունների իրավահավասար համակեցության արդյունքում: Ֆրանսիան Գերմանիայի կարևորագույն գործընկերն է Եվրոպայում: Մենք ցանկանում ենք ընդլայնել այս հարաբերությունը, որպեսզի Ֆրանսիան և Գերմանիան շարունակեն առաջատարներ լինել Եվրամիության կերտման գործում:

325. Մեզ համար Եվրոպան առաջին հերթին նաև տարածաշրջանների Եվրոպա է: Պետք է մշտապես պահպանել Եվրոպայի տարածաշրջանների և համայնքների բազմազանությունը և ինքնուրույնությունը: Հատկապես սահմանային տարածաշրջաններում է, որ եվրոպական ինտեգրացիոն իրականությունն առանձնահատուկ կերպով ընկալելի և զգալի կարող է լինել: Հարևան տարածաշրջանների քաղաքական, մշակութային, լեզվական, պատմական և հասարակական առանձնահատկությունների փոխադարձ ճանաչողությունն ու ըմբռնումը սահմանանց համագործակցության հիմքն են: Այդ պատճառով մենք ցանկանում ենք սահմանային շրջաններում խթանել մեր համապատասխան հարևանների լեզուն ուսումնասիրելու հնարավորությունները: Սահմանային և սահմանանց տարածաշրջաններն, այսպիսով, եվրոպական միավորման գործընթացի կարևոր հիմնաքարերն են և պետք է գիտակցաբար ստանձնեն այս կամրջող առաջատար դերակատարումը:

326. Հայրենիքի հանդեպ կապվածությունը, ազգային ինքնությունը և եվրոպական միասնականությունը միմյանց լրացնում են և կախված են միմյանցից: Մենք հանդես ենք գալիս էթնիկ խմբերի և փոքրամասնությունների՝ միջազգայնորեն և եվրոպական հարթության վրա ամրագրված իրավունքի, հայրենիքի, սեփական լեզվի և մշակույթի հանդեպ իրավունքի օգտին:

327. Միավորված և իր սահմաններն ընդլայնող Եվրոպայում նույնպես հայրենիքից վտարվածներն ու էթնիկ խմբերը կարևոր կամրջող դեր են խաղում ժողովուրդների միջև: Նույնպես և այն գերմանացիները, որոնք մնացել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմաններից դուրս կարող են այս կարևոր դերն ստանձնել Գերմանիայի և նրա հարևանների միջև՝ նպաստելով Եվրոպայի հետագա ընդլայնմանը և կայացմանը: Մարդկանց բռնի տեղահանությունը, ինչպիսին էլ այն լինի, պետք է մերժվի միջազգայնորեն. պետք է ճանաչվեն ոտնահարված իրավունքները:

328. Եվրամիության մինչ այժմ տեղի ունեցած ընդլայնման փուլերը մեծացրել են կայունության գոտու սահմանները և Գերմանիային քաղաքական և տնտեսական օգուտներ բերել: Շատ մարդկանց, այդ թվում՝ արևմտյան Բալկաններում և արևելյան Եվրոպայում ապրողների համար Եվրամիությունը դարձել է բաց հասարակության, ժողովուրդների խաղաղ գոյակցության իդեալ՝ քաղաքական և տնտեսական հեռանկարների հույս ներշնչելով վերջիններիս: Եվրամիությունը պետք է ընդառաջ գնա այս եվրոպական տարածաշրջանների ժողովուրդների հանդեպ որդեգրած իր պատասխանատվությանը:

Լիարժեք անդամակցությունը Եվրամիությանը չի կարող միակ պատասխանը լինել բոլոր դեպքերի համար: Նոր անդամների ընդունման դեպքում որոշիչ է ոչ միայն անդամակցության չափանիշների կատարումը, այլ՝ նրանց ընդունելու Եվրամիության կարողության հանգամանքն ինքնին: Մենք Թուրքիայի հետ Եվրամիության արտոնյալ գործընկերությունը համարում ենք ճիշտ լուծում:

329. Եվրամիության հետագա ամրացումից ու հզորացումից է մեծապես կախված նրա հետագա ընդլայնումը: Պետք է բարելավել առկա համերաշխությունն ու գործունակությունը, պետք է առաջ տանել ինտեգրացիոն գործընթացը: Եվրոպայի ընդլայնման գործընթացը պետք է նպաստի համաեվրոպական ինքնության խորացմանը: Միավորումների վերաբերյալ/ասոցիացիոն/պայմանագրերը և հատուկ գործընկերությունները, ինչպես նաև բազմակողմ համագործակցության մոդելները, ինչպես, օրինակ՝ Եվրոպական տնտեսական տարածքը, կարող են կնքվել որպես միջանկյալ քայլեր կամ երկարատև լուծումներ: Եվրամիությանը կարող են անդամակցել միայն եվրոպական պետություններ:

330. Եվրամիության և նրա անդամ երկրների անվտանգության և բարեկեցության համար կենտրոնական նշանակություն ունեն նրանց անմիջական հարևան պետությունների կայունությունն ու բարեկեցությունը: Այդ պատճառով Եվրամիությանն անհրաժեշտ է իր հարևանների հետ ունենալ համապատասխան համաձայնագրեր և լավ հարաբերություններ:

331. Համաեվրոպական արժույթը խթանում է անդամ-պետությունների միջև հաստատված համերաշխությունն ու նրանց տնտեսական կարողությունները: Նրա միջոցով քաղաքական միացումը փաստորեն դարձավ անշրջելի: Միասնական մաքսային համակարգը, ներքին շուկան և եվրոն մեծապես նպաստեցին Եվրոպայի բարեկեցությանն ու համաշխարհային հարթության մեջ նրա մրցունակությանը: Եվրոպան համաշխարհայնացման հարցին մեր պատասխանի մի կարևոր մասն է, քանի որ այն մեզ մրցունակ է դարձնում միջազգային ասպարեզում:

Միասնական ներքին շուկայի կազմավորումն ու հետագա զարգացումը մեր տնական խնդիրներից մեկն է մնում: Միասնական շուկայի օգտագործումը չպետք է խաթարվի չափից դուրս ինտենսիվ կարգավորմամբ: Եվրամիությունը պետք է մեծ ջանքեր ներդնի տնտեսական աճի խթանման, համաշխարհային շուկայում իր տեղը հաստատելու և իր մրցակցային հնարավորություն-

ները բարելավելու ուղղությամբ: Այդ քայլերից մեկը պետք է լինի Եվրոպական կենտրոնական բանկին անսահմանափակ անկախություն տրամադրելը, մյուսը՝ Եվրոպական կայունության և տնտեսական զարգացման պակտին խստիվ հետևելը: Բացի այդ՝ պետք է մեծապես խթանել գիտահետազոտության, գիտական առաջընթացի և մասնագիտական որակավորման ոլորտները:

332. Տեխնիկական առաջընթացը բարձր արտադրողականության և տնտեսական աճի կարևորագույն գործոնն է: Եվրամիությանը նույնպես անհրաժեշտ է ունենալ բարձր տեխնոլոգիաների վերաբերյալ ռազմավարություն, որպեսզի Եվրոպայում տնականորեն պահպանվեն լավ վարձատրվող և մրցակցություն ապահովող աշխատատեղեր:

333. Մենք ցանկանում ենք, որ Եվրոպան շարունակի մնալ բարեկեցիկ տարածաշրջան: Մենք ներկայացնում ենք սոցիալ-շուկայական տնտեսակարգը որպես եվրոպական տնտեսական և սոցիալական մոդել: Սոցիալական և շրջակա միջավայրի պաշտպանության կարևորագույն ոլորտներում պետք է խարսխվեն համաեվրոպական միասնական նվազագույն չափանիշներ, որոնք ազնիվ մրցակցության հնարավորություն կստեղծեն, Եվրամիության ներսում կնվազեցնեն մրցակցային մեծ տարբերությունները և չեն պահանջի որևէ անդամ պետությունից անել ավելին, քան այդ պետությունն ի վիճակի է: Միայն միասնաբար՝ որպես Եվրամիություն, մենք կարող ենք աշխարհում ներդնել և իրականություն դարձնել նաև մեր արժեքներով սահմանված չափանիշները: Այս հարցում մենք մեծ առաջնայնություն ենք տալիս անդրատլանտյան տնտեսական գործակցությանը:

334. Մեր կարևոր նպատակներից է քաղաքացիների և ձեռնարկությունների տեղաշարժման հնարավորությունների ընդլայնումը օրենսդրական նորմերի և վարչական ծախսերի կրճատման միջոցով: Նորմերի վերահսկման անկախ եվրոպական խորհուրդն այս հարցում մեծ դեր կարող է խաղալ: Գերմանական օրենսդրության մեջ եվրոպական իրավունքի ներդրման ժամանակ նույնպես հարկավոր է խուսափել գերկարգավորման հասնելուց:

335. Պետք է պարզեցվի **Եվրամիության օրենսդրությունը** և խստացվեն համաեվրոպական օրենսդրական նախաձեռնությունների հետևանքների ուսումնասիրումն ու գնահատումը: Եվրամիության ներսում նույնպես պետք է լինի քննության փուլում գտնվող օրենսդրական նախաձեռնությունների կանոնավոր քննություն, ինչը հաջողությամբ գործում է Գերմանիայում՝ ընդհատելիության սկզբունքի հիման վրա: Մեր նպատակը ժամանակակից Եվրոպան է, որտեղ գոյություն ունենան զարգացման բարենպաստ նախապայմաններ:

336. Ներքին անվտանգության ապահովումը ազգային և եվրոպական քաղաքականության առանցքային խնդիրներից է: Ազատության, անվտանգության և իրավունքի միասնական տարածքի քայլ առ քայլ ստեղծման շնորհիվ Եվրամիությունն իր քաղաքացիներին երաշխավորում է է՛լ ավելի մեծ ազատություն և անկախություն: Միաժամանակ նա հնարավորություն է տալիս առավել արդյունավետ պայքար ծավալել ահաբեկչության և միջազգային հանցավորության այլ դրսևորումների դեմ:

337. Մեր միասնական արժեքների պահպանման համար մղվող վճռական և ակտիվ պայքարի մեջ մեզ հատկապես անհրաժեշտ է բարելավել և ընդլայնել անդամ պետությունների ոստիկանական և անվտանգության մարմինների միջև տեղեկատվական փոխանակությունը: Առկա տեղեկատվական համակարգերը պետք է ընդլայնվեն և նորագույն տեխնիկայի կիրառմամբ համապատասխանեցվեն հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի մարտահրավերներին: Այս հարցում մեզ անհրաժեշտ է հզորացնել մեր միասնական հաստատությունները, ինչպես օրինակ՝ ԵՎՐՈՊՈԼ-ը կամ ԵՎՐՈՅՈՒՍՏ-ը, ինչպես նաև պետությունների ոստիկանությունների միջև անմիջական սերտ գործակցությունը: Անօրինական միգրացիայի դեմ արդյունավետ պայքարը, ներգաղթյալներին ապաստան տրամադրելու վերա-

բերյալ համաեվրոպական քաղաքականության աստիճանական զարգացումը և ինտեգրացիոն հարցերի շուրջ առավել սերտ փորձի փոխանակումը հաջորդ կարևոր խնդիրներն են, որոնք դրված են մեր առջև եվրոպական հարթության վրա:

338. Մենք ցանկանում ենք ունենալ միասնական արտաքին և անվտանգության քաղաքականություն՝ խարսխված միասնական անվտանգության ռազմավարության վրա, որը կներառի նաև էներգետիկ և ռեսուրսային անվտանգությունը: Սա բխում է մեր երկրի շահերից: Եվրամիությունը, ելնելով իր շահերից և արժեքներից, պետք է իր բնակչության թվին և տնտեսական ներուժին համապատասխան վճռորոշ մասնակցություն ունենա համաշխարհայնացման գործընթացին: Դրա համար անհրաժեշտ է, որ ստեղծվեն նաև քաղաքական և ինստիտուցիոնալ նախապայմաններ, որպեսզի Եվրամիությունը հանդես գա միասնական ճակատով և գործունակ լինի: Այդժամ նա, համակեցության սկզբունքով տարածաշրջանային խաղաղության հաստատման և ներքին շուկայի ձևավորման իր հարուստ փորձով համոզիչ կերպով հանդես կգա որպես գրավիչ գործընկեր աշխարհի այլ տարածաշրջանների համար:

339. Մեր պատկերացումներում ընդլայնված անվտանգության այլևս անխուսափելի բաղադրիչ է այլ երկրների հետ տարվող զարգացման համագործակցությունը: Եվրամիությունը ամենամեծ դոնոր հանրությունն է: Այդ հարցում իր բնակչության անհրաժեշտ համաձայնությունն ստանալու համար սակայն չափազանց կարևոր է, որ միջոցների տրամադրումը և օգտագործումը կազմակերպվի թափանցիկ, ինչպես նաև խստիվ համաձայնեցվի համագործակցության կողմ հանդիսացող պետությունների քաղաքականության հետ: Այն պետք է համապատասխանի «օգնել ինքն իրեն օգնողին» սկզբունքին, որը հենց տեղում օգուտ է բերում մարդկանց, և հատկապես աջակցություն ցուցաբերում կառավարությունների արդյունավետ գործունեությանը, երկրի արդյունավետ կառավարմանը՝ ներառյալ կաշառակերության դեմ պայքարը:

340. Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականությունը (ԵԱՊՔ) պետք է ընդլայնվի որպես Եվրամիության պաշտպանական քաղաքականության բաղադրիչ: Մենք կոմպլեմենտարության սկզբունքով կողմնակից ենք համաեվրոպական պաշտպանությանը, նաև մեր՝ ՆԱՏՕ-ի հանդեպ ստանձնած քաղաքական և ռազմական պարտավորությանը: Այդ պատճառով Եվրամիությունը պետք է սեփական ռազմական հնարավորություններ տնօրինելու ունակություն ունենա: Գերմանիայի Բունդեսվերն իր վճռորոշ ավանդն է ներդնում Եվրոպայի անվտանգության և պաշտպանության քաղաքականության զարգացման գործում: Մենք շարունակում ենք հանդես գալ հօգուտ եվրոպական կառուցվածքներում ազգային ռազմական միավորների ինտեգրման՝ համաեվրոպական բանակ ստեղծելու հեռահար նպատակ հետապնդելով:

341. Անդրատլանտյան հարաբերությունները մշտապես խաղաղության, ազատության և բարեկեցության հիմք են հանդիսացել Գերմանիայում և Եվրոպայում: Նրանք կշարունակեն բացառիկ նշանակություն ունենալ նաև ապագայում: Այդ պատճառով ՔԴՄ-ն ջանում է ԱՄՆ-ի հետ ունեցած իր գործընկերության մեջ մշտապես նորանոր միասնական ելակետներ որոնել: Այս ճանապարհին ավելի ու ավելի կարևոր է դառնում մեր տնտեսական համագործակցությունը: Մենք մեր անդրատլանտյան գործընկերներ ԱՄՆ-ի և Կանադայի հետ միասնաբար ցանկանում ենք հզորացնել մեզ միավորող միասնական արևմտյան միևնույն արժեհամակարգի կշիռն աշխարհում:

342. Եվրամիությունը և ԱՄՆ-ը առևտրի և ներդրումների միջոցով աշխարհում իրար հետ ամենափոխկապակցված տնտեսական տարածքներն են: Հաշվի առնելով անդրատլանտյան տնտեսական հարաբերությունների խորացող փոխկապակցվածությունը՝ մենք ջանում ենք հաղթահարել առևտրային խոչընդոտները և հետագայում հասնել անդրատլանտյան միասնական շուկայի ստեղծմանը: Մենք ձգտում ենք, որ անդրատլանտյան հարաբերություններում Եվրոպան հանդես գա ինքնավստահորեն՝ իրեն ընկալելով ոչ որպես հակակշիռ ԱՄՆ-ին, այլ որպես ԱՄՆ-ի գործընկեր:

2. Հանուն ազատության և խաղաղության. Գերմանիայի դերն աշխարհում

343. Ազատությունը, համերաշխությունը և արդարությունը մեր արտաքին, անվտանգության և զարգացման քաղաքականության ուղենիշներն են: Սա համապատասխանում է մեր պարտավորությանը, որով մենք ազատություն և անվտանգություն ենք երաշխավորում մարդկանց Գերմանիայում: Մենք ցանկանում ենք կանխել մեր երկրի առջև ծառացող վտանգները՝ միաժամանակ հանդես գալով հանուն աշխարհում խաղաղության և ազատության, ինչպես նաև օրենքի իշխանության և մարդու իրավունքների համընդհանուր հաստատման: Այսպես մենք կստեղծենք և կպահպանենք նախապայմաններ, որոնցով մեր երկիրը կարողանա մյուս երկրների հետ խաղաղության մեջ հարաբերվել հասարակական, մշակութային և տնտեսական ոլորտներում, բարձրացնել իր բարեկեցության մակարդակը և զարգացնել իր հասարակությունը:

344. «Սառը պատերազմի» ավարտից հետո մեր արտաքին և անվտանգության քաղաքականության պայմանները հիմնավորապես փոփոխվեցին: Երկբևեռ աշխարհակարգն այլևս անցյալ է: Առնվազն 2001 թվականի սեպտեմբերի 11-ից սկսած՝ ազատ աշխարհը հասկացավ, որ մենք այսօր ենթարկվում ենք ասիմետրիկ սպառնալիքների, որոնք կարող են առաջանալ մեր սահմաններից դուրս՝ շատ ու շատ հեռվում: Մենք ցանկանում ենք խորացնել միջազգային հարաբերությունները՝ շահերի բախումներից առաջացող թնջուկներին հնարավորինս միասնաբար և առանց ուժի կիրառման լուծումներ գտնելու համար:

345. Համաշխարհայնացման դարաշրջանում յուրաքանչյուր երկիր մեր հարևանն է: Փլուզվող պետությունները շատ հաճախ իրենցից անդրազգային ահաբեկչության և միջազգային հանցավորության նահանջային տարածքներ են ներկայացնում: Իրավական պետության և ժողովրդավարության զարգացումն ու իրականացումը հեռավոր տարածաշրջաններում անմիջականորեն ծառայում է մեր շահերին և անվտանգության ապահովման ակտիվ կանխարգելիչ նշանակություն ունի: Ժողովրդավարությունն ու իրավական պետականությունը ստեղծում են կայունություն, որի կարիքը մենք ունենք հատկապես՝ լինելով արտահանումից կախված ժողովրդական տնտեսություն: Մենք պետք է պատրաստ լինենք միջազգային կազմակերպությունների շրջանակում այլ ժողովրդավարական պետությունների հետ միասին ստանձնել ոչ միայն տարածաշրջանային, այլև համաշխարհային պատասխանատվություն: Այստեղ մենք հետևում ենք փոխկապակցված անվտանգության սկզբունքին, ըստ որի՝ չկա զարգացում առանց անվտանգության, չկա անվտանգություն առանց զարգացման:

346. Մեր միջազգային պատասխանատվությունն իրացնելու համար մենք պետք է ապահովենք արտաքին, անվտանգության և զարգացման քաղաքականության խնդիրների և պարտավորությունների կատարման միջոցներ և գործիքներ: Հաջող արտաքին քաղաքականությունը պետք է հաշվի առնի մեր երկրի ազգային շահերը: Դրա հետ մեկտեղ՝ եթե մենք համերաշխություն դրսևորենք աշխարհում, մենք նույնպես կվայելենք այլ պետությունների համերաշխությունը: Այդ պատճառով մեր շահերից է բխում, որ մենք մեր քաղաքականությունը չսեղմենք ազգայինի սահմաններում, այլ այն ուղղենք աշխարհում շահերի արդարացի հավասարակշռությանը:

347. Հաջող արտաքին քաղաքականություն վարելու համար մեզանից պահանջվում է հանդես բերել տնտեսական գործունակություն, ինչպես նաև ունենալ հասարակական կարգի և մշակութային գրավչություն: Արտաքին քաղաքականությունը պետք է վստահելի լինի, պահպանի մեր հանդեպ մեր գործընկերների և դաշնակիցների ունեցած վստահությունը՝ ոչ ասելով ազգային առանձին ինքնուրույն ճանապարհներին: Այն նաև պետք է առաջնորդվի մեր արժեքները, համոզմունքները և շահերն այլ մշակույթների հետ երկխոսության մեջ ներկայացնելու կամքով, վճռականությամբ և կարողությամբ: Մենք ցանկանում ենք մեր

երկրում և Եվրամիությունում խորացնել արտաքին և անվտանգության քաղաքականության շուրջ քննարկումները:

348. Ապագայի արտաքին քաղաքական մարտահրավերներին դիմակայելու համար մենք ցանկանում ենք շարունակել զարգացնել Եվրամիությունը, խնամել և ընդլայնել անդրատլանտյան գործընկերությունը, ինչպես նաև խթանել օրինականությունն աշխարհում: Մեր տնտեսության մրցունակության խթանման նպատակով մենք ցանկանում ենք խորացնել անդրատլանտյան տնտեսական ինտեգրացիան:

349. ՆԱՏՕ-ն Գերմանիայի և Եվրոպայի անվտանգության համար շարունակում է անփոխարինելի մնալ և հանդիսանում է մեր անվտանգության և պաշտպանության քաղաքականության առաջնային գործիքը: ՆԱՏՕ-ն պետք է մշտապես երկխոսության հարթակ ծառայի անդրատլանտյան անվտանգության քաղաքականության համար:

350. Անդրատլանտյան հանրությունը հիմնված է միասնական արժեքների՝ աշխարհում իր տեսակի մեջ եզակի ամբողջության վրա: ԱՄՆ-ի և Կանադայի հետ մեզ կապում է տարիների փորձված գործընկերությունը և բարեկամությունը, որոնք մենք ցանկանում ենք ընդլայնել: Երկու պետություններն էլ եվրոպացիներն են հիմնել: Ամերիկայի անկախության հռչակագրի սկզբունքները 18-րդ դարի վերջին օրինակ ծառայեցին եվրոպական երկրների համար, նախ Ֆրանսիայում՝ 1789-ին, ապա՝ նաև Գերմանիայում:

Մենք հատկապես շնորհապարտ ենք ԱՄՆ-ին, որ Գերմանիան և Եվրոպան ազատվեցին նացիոնալ-սոցիալիզմից և կոմունիզմից: Առանց ԱՄՆ-ի աջակցության հնարավոր չէին լինի Գերմանիայի և Եվրոպայի վերամիավորումները: Մեր անդրատլանտյան գործընկերներ ԱՄՆ-ի և Կանադայի հետ շարունակ միասնական ելակետներ փնտրելը և դրանք ներկայացնելը գնալով ավելի ու ավելի է կարևորվում: Մենք ցանկանում ենք մեր արժեքային միասնական համակարգի հիման վրա խորացնել արևմտյան արժեքային հանրության կշիռն աշխարհում:

351. Մենք հետամուտ ենք Գերմանիայի առանձնահատուկ պատմական պատասխանատվությանը Իսրայելի հանդեպ: Մենք հանդես ենք գալիս ի պաշտպանություն ապահով սահմաններում Իսրայելի՝ որպես հրեական պետության գոյության իրավունքի: Գերմանիան և Եվրոպան պետք է նպաստեն Մերձավոր և Միջին Արևելքում տարածաշրջանային երկրների միջև գործընկերային համագործակցության միջոցով ճգնաժամերի հաղթահարմանը և Մերձավոր Արևելքի հակամարտության լուծմանը: Դա ենթադրում է նաև պաղեստինյան պետության ապահով գոյություն:

352. Մենք հանդես ենք գալիս հօգուտ արևմտյան ժողովրդավարական պետությունների՝ իսլամական պետությունների հետ խաղաղ գոյակցության: Մենք հարգում և գնահատում ենք իսլամական աշխարհի հարուստ մշակութային ավանդույթները: Իրավական պետություն և ժողովրդավարություն կառուցելու մուսուլմանական հասարակությունների հավասարակշիռ ջանքերին աջակցություն ցուցաբերելը բխում է մեր շահերից: Իսլամական արմատականությունը և իսլամական շարժառիթներով գործող ահաբեկչությունն առաջին հերթին սպառնալիքներ են հենց իսլամական հասարակություններին, բայց նաև մեզ: Մենք պետք է պատրաստ և ունակ լինենք մուսուլմանների գերակշիռ մեծամասնության հետ համատեղ պայքարելու իսլամական ահաբեկչության և արմատականության դեմ՝ արմատախիլ անելով նրանց իրենց սնուցող հողից:

353. Գերմանիան, Եվրոպան և, ընդհանրապես, Արևմուտքը, մեծապես շահագրգռված են Ռուսաստանի հետ լավ հարաբերություններ ունենալ: Մենք ձգտում ենք ռազմավարական այնպիսի գործընկերություն հաստատել Եվրամիության և Ռուսաստանի միջև, որը հիմնված կլինի Եվրախորհրդի ընդհանրական արժեքների վրա: Այդ հարցում հարկ է հաշվի առնել նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շահերը: Մենք ցանկանում ենք Ռուսաստանի հետ խորացնել մեր տնտեսական, քաղաքական և հասարակական համագործակցությունը: Բաց և համապարփակ երկխոսության միջոցով մենք ցանկանում ենք Ռուսաս-

տանում խթանել ժողովրդավարական զարգացումը, իրավական պետության կառուցումը, լրատվամիջոցների բազմազանության և քաղաքացիական հասարակության հաստատումը։

354. Մեր հարևան Աֆրիկա մայրցամաքին ցանկանում ենք աջակցություն ցուցաբերել կայուն զարգացմանը, կայունությանը և արդյունավետ կառավարմանն ուղղված նրա ջանքերում, որպեսզի մարդիկ այնտեղ ավելի լավ կյանքի հեռանկարներ ունենան։ Մենք սերտ համագործակցության ենք ձգտում Աֆրիկյան Միության հետ։ Աֆրիկայում առանձնապես մեծ խնդիրներ են լայն տարածում գտած աղքատությունը, սովը, կրթական հնարավորությունների պակասը և վարակների ու հիվանդությունների տարածումը։ Աֆրիկայում տիրող ուժային հակամարտությունները, անկայունությունը և պետական-հասարակական կարգուկանոնի բացակայությունը մեզ՝ եվրոպացիներիս չեն կարող անտարբեր թողնել, քանի որ մենք անմիջապես կրում ենք դրանց բացասական ազդեցությունը, ընդ որում՝ ոչ միայն միգրացիոն աճող հոսքերի տեսքով։

355. Մենք շատ մեծ կարևորություն ենք տալիս գործընկերությանը Լատինական Ամերիկայի հետ, որի հետ Եվրոպան սերտորեն կապված է պատմությամբ և արժեքներով։ Մենք խրախուսում ենք նաև զարգացող երկրներին, ինչպիսիք Բրազիլիան և Մեքսիկան են՝ պատասխանատվություն ստանձնելու համաշխարհային նշանակության խնդիրների լուծման գործում։ Մեր գործընկեր կուսակցությունների հետ համագործակցության միջոցով մենք շատ երկրներում նպաստում ենք ժողովրդավարության ամրապնդմանը։

356. Ասիայում ընթացող փոփոխությունների հետ երևան եկող բազմազան մարտահրավերներին առավել արդյունավետորեն դիմակայելու և մեր շահերը պաշտպանելու համար մենք պետք է խորացնենք համագործակցությունը Եվրոպայի և Ասիայի երկրների միջև՝ գործակցությունների և գործընկերությունների միջոցով։ Հաշվի առնելով Չինաստանի և Հնդկաստանի աճող կարևորությունը՝ մենք ցանկանում ենք աջակցել նրանց դառնալ միջազգային գոյակարգի պատասխանատու մասնակից և կերտող։

357. Մենք հանդես ենք գալիս աշխարհում սպառազինությունների շարունակական կրճատման, սպառազինությունների վերահսկումն ուժեղացնելու և սպառազինությունների արտահանման եվրոպական համակարգված մոտեցման օգտին։ Մասսայական ոչնչացման զենքերի և նրանց արտադրական տեխնոլոգիաների տարածման կանխումը իր նպաստն է բերում աշխարհում խաղաղությանը և մեր անվտանգությանը։ Մենք կջանանք այնպես անել, որ միջազգային հանրությունը վճռականորեն և միահամուռ կերպով ազդի այս ուժերի վրա, ուժեր, որոնք ոտնահարում են միջազգային նորմերն ու համաձայնագրերը։

358. Մենք կողմնակից ենք համապարփակ և փոխկապակցված մոտեցման, որը հաշվի կառնի ողջ անվտանգության քաղաքականության գործիքաշարը և այն կամփոփի մեկ միասնական հայեցակարգի մեջ։ Մեզ անհրաժեշտ է սերտ և մասնագիտական իրավասությունների և կարողությունների սահմաններից դուրս ծավալվող համագործակցություն. մենք ցանկանում ենք ճգնաժամերի հաղթահարման հանձնառությունների ժամանակ միմյանց հետ արդյունավետորեն համակարգել ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի քաղաքացիական և ռազմական գործիքները։

359. Բունդեսվերի հանձնառությունների շրջանակը չի կարող այլևս սահմանափակվել դասական՝ դաշինքային և սեփական երկրի տարածքում պաշտպանության իրականացմամբ։ Փոխկապակցված անվտանգության հայեցակարգում Բունդեսվերն անփոխարինելի գործիք է ինչպես երկրի և դաշինքի (ՆԱՏՕ)՝ նոր պայմաններին համապատասխան պաշտպանության, այնպես էլ ամբողջական հանձնառությունների սպեկտրով միջազգային ճգնաժամերի կանխարգելման և հաղթահարման գործում։ Դրան զուգահեռ՝ Բունդեսվերը պետք է ի պաշտպանություն հայրենիքի իր մասնակցությունն ունենա նաև երկրի ներսում տեղի ունեցող աղետների և այլ անհրաժեշտ իրավիճակների հաղթահարման գործին։

360. Բունդեսվերն ապագայում ևս պետք է կարողանա միջազգային խաղաղապահ առաքելություն իրականացնող միավորներ կազմել և կատարել Գերմանիայի միջազգային պարտավորությունները: Այդ պատճառով պետք է հետևողականորեն իրականացնել մեր զինված ուժերի բարեփոխումները և ապահովել Բունդեսվերի պատշաճ ֆինանսավորումը: Միայն այսպես Բունդեսվերը կարող է իրագործել իր առջև դրված բարձր պարտավորությունները, և միայն այսպես Գերմանիան կարող է վաղվա աշխարհում անվտանգության քաղաքականության մեջ գործունակ մնալ՝ պատրաստ անդամակցելու հնարավոր դաշինքների և որոշիչ դերակատարումներ ստանձնելու:

361. Բունդեսվերը ժողովրդավարության մեջ գործող արդյունավետ զինված ուժերի կողմնակից է: Նա անցել է սարսափազդու բանակից միասնության բանակ և ապա՝ խաղաղապահ բանակ ճանապարհը և հաստատվել այդ ճանապարհին: Մեզ համար Բունդեսվերը շարունակում է հանդիսանալ սահմանադրությամբ և միջազգային իրավունքում ամրագրված քաղաքականության գործիք:

Բունդեսվերի զինվորները հիանալի աշխատանք են կատարում և արտերկրում իրենց առաքելությամբ բարձրացրել են մեր երկրի հեղինակությունը ողջ աշխարհում: Մենք պարտադիր զինծառայության կողմնակից ենք: Այն արդարացրել է իրեն անվտանգության քաղաքականության շարունակ փոփոխվող հիմնական պայմաններում, և պետք է հարմարեցվի անվտանգության քաղաքականության ոլորտի մարտահրավերներին և համապատասխան զարգացում ապրի: Առաքելություններ իրականացնելու Բունդեսվերի պատրաստակամությունը և դիմակայման կարողությունը կարող է ապահովվել միայն որակավորված պահեստազորի բավարար քանակությամբ: Սրա համար համընդհանուր պարտադիր զինվորական ծառայությունը նախապայման է: Մենք ցանկանում ենք քաղաքացիական ծառայությունը պահպանել որպես այլընտրանքային ծառայություն: Այն մեծ նշանակություն ունի ինչպես սոցիալական, այնպես էլ երիտասարդների հարցերով վարվող քաղաքականության առումով:

362. Միավորված ազգերի կազմակերպությունն ամենամեծ լեգիտիմության կրողն է գլոբալ խնդիրների լուծման գործում: Միավորված ազգերը պետք է ավելի գործունակ և հետևողական լինեն աշխարհով մեկ մարդու իրավունքների, ազատության, ժողովրդավարության և իրավական պետականության հաստատման անշրջելի գործընթացն ապահովելու, արարչագործության պահպանման ու միջազգային իրավունքի զարգացման գործում:

363. Անվտանգության խորհրդի բարեփոխումների համատեքստում մենք հանդես ենք գալիս հիշյալ խորհրդում Եվրամիության մշտական անդամության օգտին: Այս նպատակի իրագործման ճանապարհին Գերմանիան պատրաստ է ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել՝ անվտանգության խորհրդի մշտական անդամի կարգավիճակ ստանալով:

364. Մենք հանդես ենք գալիս հօգուտ ավելի ու ավելի ընդլայնվող ինտեգրված համաշխարհային տնտեսության, ազնիվ և արդար համաշխարհային առևտրի և այդ պատճառով ցանկանում ենք հզորացնել այնպիսի հաստատություններ, ինչպիսին է օրինակ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը: Գերմանիայի համար միջազգային առևտրական ճանապարհների անվտանգությունը կենսական շահ է: Դրա միջոցով մեր երկիրն ավելի լավ կարող է մասնակցել աշխարհում բարեկեցության տարածմանը: Միաժամանակ ազնիվ և արդար առևտուրն օգնում է հաղթահարել աղքատությունը՝ նպաստելով այնպիսի պետությունների տնտեսական և քաղաքական կայունացմանը, որոնց այլապես անհաջողություն է սպառնում:

365. Գերմանիայի մասնակցությունը և ազդեցությունը շատ երկրներում զարգացման խնդիրների՝ աղքատության, թերզարգացվածության, մարդու իրավունքների ոտնահարման, վարակների, շրջակա միջավայրի խաթարման, պատերազմների, ահաբեկչության և պետությունների փլուզման հաղթահարմանը, բխում է մեր երկրի շահերից: Մեր վարած գործընկերային համագործակցության զարգացման քաղաքականությունը հիմնված է

երեք սյուների վրա. առաջինը աղքատության մեջ տառապողների և արարչագործության հանդեպ պատասխանատվությունն է՝ հիմնված մարդու մասին քրիստոնեական պատկերացումների վրա, երկրորդը տնտեսական ռիսկերի կանխումն է, երրորդը՝ մեր քաղաքական, տնտեսական և գիտական գործընկերությունների ամրապնդումը: Զարգացման քաղաքականության ասպարեզում գործընկերություն ծավալել մեզ համար նշանակում է՝ խթանել զարգացող երկրների սեփական բարեփոխումային նախաձեռնությունները՝ ակնկալելով համատեղ պատասխանատվություն:

366. Զարգացման քաղաքականությունը արժեքային որոշակի պատկանելություն է ենթադրում: Այն համաշխարհային կարգուկանոնի հաստատմանն ուղղված քաղաքականության մասն է կազմում: Աղքատ երկրներում զարգացումը խթանելու լավագույն ճանապարհը մենք տեսնում ենք ազատական ժողովրդավարության, իրավական պետականության, արդյունավետ պետական կառավարման և սոցիալական պարտավորություններով շուկայական տնտեսակարգի մեջ, որոնք միաժամանակ պաշտպանում և պահպանում են բնական կենսապայմանները: Այս նպատակները մեր զարգացման քաղաքականության հիմնային բաղադրիչներն են: Զարգացման համագործակցության երկարատև ազդեցությունն ու արդյունավետությունը պահանջում են հատկապես զարգացող երկրների քաղաքական դերակատարների և ընտրախավի հետևողական ջանքերը:Մենք օգնում ենք ինքն իրեն օգնել ցանկացողին:

367. Մենք բարձր ենք գնահատում զարգացման համագործակցության բնագավառում գործող մարդկանց առաքելությունը: Եկեղեցիներն ու ոչ կառավարական կազմակերպությունները զարգացող երկրներում մարդկանց անմիջական օգնություն են ցուցաբերում: Քաղաքական հիմնադրամները մեծ դեր են խաղում զարգացող երկրներում պետության կառուցվածքային բարեփոխումների, իրավական պետականության խթանման, խորհրդարանական և կուսակցական խորհրդատվությունների, ժողովրդավարական սկզբունքների հաստատման, ինչպես նաև մարդու իրավունքների

հաստատման գործընթացներում: Տնտեսական բարեփոխումների համար անհրաժեշտ նախադրյալների բարելավման միջոցով կարելի է մասնավոր տնտեսությանը ներգրավել զարգացման քաղաքականության նպատակների իրագործման մեջ՝ շահելով նրան որպես գործընկեր: Մասնավոր տնտեսության հետ համագործակցելը նույնքան կարևորություն ունի, որքան և քաղաքացիական-ռազմական համագործակցությունը:

368. Մասնավոր նվիրատվությունների բարձր ցուցանիշը խոսում է մարդկանց՝ մյուսներին իրենց ունեցածից բաժին հանելու պատրաստակամության մասին: Պետության խնդիրն է խրախուսել մասնավոր նախաձեռնությունները: Մենք միջազգային պարտավորություն ունենք՝ պետության կողմից վարվող զարգացման համագործակցության համար միջոցներն ավելացնել՝ հասցնելով համախառն ազգային եկամուտի 0,7 %-ի:

369. Անվտանգությունը, զարգացումը և մարդու իրավունքները շաղկապված են միմյանց: Մարդու իրավունքներն անքակտելի են: ՔԴՄ-ն մշտապես իր ձայնը կբարձրացնի, երբ վտանգվեն ժողովրդավարությունը, ազատությունը, իրավական պետականությունը և փոքրամասնությունների իրավունքները: Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պետք է ողջ աշխարհում առաջնայնություն ունենան պետական իշխանության սկզբունքի նկատմամբ: Մենք մեր ավանդն ենք ներդնում ազատ, խաղաղ և արդար աշխարհի կերտման գործում:

ՔԴՄ-Ի հիմնարար ծրագրի հասկացությունների ցանկ

Այստեղ հղվում է նաև այն դրույթները, որտեղ հանդիպում են իմաստային նմանություններ և տվյալ հասկացության բառային այլ տարբերակներ:

Հասկացություն	Դրույթ
Ազատություն /անձի ազատ զարգացում/	2, 9-17, 23, 24, 26, 27, 28, 29, 34, 38, 42, 49, 55, 56, 58, 68, 91, 99, 117, 127, 136, 137, 138, 140, 141, 143, 144, 149, 154, 155, 165, 167, 187, 233, 265, 266, 271-276, 278, 283, 284, 285, 291, 299, 307, 315, 316, 336, 341, 343, 362, 369
Ազգ, ժողովուրդ	32, 33, 34, 125, 129, 255, 282, 311, 313, 318, 321, 326
Ահաբեկչություն	49, 50, 291, 292, 293, 336, 337, 345, 352, 365
ԱՄՆ	341, 342, 350
Ամուսնություն	29, 70, 71, 73, 80, 85, 180, 267
- Հարկային արտոնություն՝ ամուսնական զույգին	83
Անդրատլանտյան գործընկերություն	315, 333, 341, 342, 348, 349, 350
Անձնական պատասխանատվություն	14, 29, 74, 93, 100, 110, 124, 181, 186, 196, 214, 216, 258, 265, 274
Անվտանգություն	20, 45, 50, 55, 57, 58, 93, 137, 161, 180, 181, 182, 187, 204, 248, 263, 284, 285, 286, 290, 294, 313, 326, 332, 333, 334, 335, 339, 340, 343, 345, 346, 349, 357, 359, 364, 369
Աշխատանք	29, 82, 170, 175
Աշխատանք, աշխատունակություն	4, 5, 13, 14, 15, 16, 19, 29, 33, 34, 42, 55, 69, 76, 79, 84, 88, 91, 96, 103, 106, 107, 108, 112, 119, 127, 129, 142, 144, 147, 150, 162, 163, 165, 169, 177, 187, 192, 193, 197, 199, 208, 216, 217, 219, 220, 224, 225, 227, 249, 258, 259, 273, 277, 295, 296, 298, 304, 306, 336, 338, 347, 367
Աշխատանքային գործունեություն	30, 45, 60, 61, 77, 78, 81, 83, 111, 112, 163
- Պաշտպանվածություն՝ կամայական ազատումից	տես՝ Աշխատաշուկա
Աշխատաշուկա	112, 171, 172, 177, 201, 203, 225
Աշխատավարձի հետ կապված այլ վճարում-ներ/ծախսեր	179, 212

Ապահովագրություն՝ դժբախտ պատահարներից — տես՝ Սոցիալական ապահովություն/ապահովագրություն

Առողջապահական ապահովագրություն — տես՝ Սոցիալական ապահովություն/ապահովագրություն

Առողջություն — 63, 184, 186, 187, 188, 204, 251, 272

Արդարադատություն — 290, 291, 296, 297

Արդարություն — 10, 13, 23, 24, 25, 55, 58, 68, 74, 92, 138, 141, 150, 153, 161, 170, 172, 174, 177, 217, 236, 298, 343

– հնարավորությունների արդարություն/հավասար, արդար հնարավորություններ — 24, 55, 92, 150

– ընտանեկան արդարություն — 84, 85, 86

– սերունդների միջև արդարություն, համերաշխություն սերունդների միջև — 22, 53, 190, 209

– աշխատանքային արդարություն — 177, 183

Արժանապատվություն — տես՝ Մարդու արժանապատվություն

Արհեստագործություն — 163, 169, 257

Արհմիություններ — 173, 309

Բարեկեցություն — 16, 47, 49, 55, 71, 90, 94, 115, 116, 119, 136, 137, 141, 142, 147, 149, 158, 161, 170, 175, 182, 209, 234, 251, 316, 317, 330, 331, 333, 341, 343, 364

Բարձրագույն ուսումնական հաստատություններ — 109, 110, 111, 118, 119, 122

Բյուջե — 109, 161, 168, 188, 197, 203, 208, 210, 211, 215

Բյուրոկրատիայի կրճատում — 163, 221, 259, 295

Բնապահպանություն — 238, 253, 258

Բունդեսվեր (ԳԴՀ զինված ուժեր) — 293, 340, 359, 360, 361

Գիտություն — 116, 117, 118, 120, 121, 122, 123, 124, 129, 132, 221, 226, 248, 365

Գյուղատնտեսություն — 257, 259, 260, 262, 264

Գործազրկություն. ապահովագրություն գործազրկությունից — տես՝ Սոցիալական ապահովություն/ ապահովագրություն

Գործառու — 45, 147, 150, 152, 172, 173, 174, 177, 195

Գործատու — 82, 113, 175, 177, 195

Դաշնային կառավարում /դաշնային/ — 36, 213, 219, 279, 299-302

Դաստիարակություն — 29, 57, 81, 83, 86, 87, 88, 97, 193, 197, 206

Դպրոցական համակարգ — 96, 98, 99, 100, 104, 108, 112, 115

Եկեղեցի — 4, 36, 146, 180, 267, 279, 281, 309, 367

Եվրամիություն — 151, 166, 168, 223, 227, 243, 254, 292, 299, 309, 314-322, 324, 325-336, 338, 339, 340, 342, 344, 348, 349, 359, 363

Եվրոպա — 33, 34, 36, 37, 114, 123, 125, 129, 151, 220, 250, 300, 310, 311, 312, 323, 331, 333, 335, 337, 340, 341, 342, 349, 350, 351, 353-356

Երեխաներ — 22, 29, 34, 35, 52, 60, 61, 62, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 78, 79, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 93, 96, 97, 105, 108, 152, 188, 191, 193, 206, 209, 234, 303

Երիտասարդություն — 56, 59, 60, 61, 62, 69, 87, 101, 102, 106, 112, 113, 130, 134, 289, 303

Զարգացման քաղաքականություն — 236, 239, 241, 253, 335, 339, 343, 345, 346, 361, 362, 364-369

Էներգիա — 41, 49, 243, 245, 257, 313, 338

– էներգետիկ արդյունավետություն — 242, 244

– էներգետիկ հետազոտություններ — 249, 263

– էներգիայի ապահովում, էներգամատակարարում — 116, 168, 243, 245, 249, 250, 313, 314

– միջուկային էներգիա — 248

– վերականգնվող էներգիա — 244, 246, 247, 257, 260, 262

Ընտանիք — 29, 57, 60, 61, 63, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 87, 130, 134, 145, 180, 191, 206, 267, 289, 311

- ընտանեկան հարկային արտոնություն 85

Թելադրող, առաջնային մշակույթ /որևէ պետության ներսում/ 37, 57

Ժողովրդագրություն /դեմոգրաֆիա/ 38, 51, 185, 208, 224, 225, 230

Ժողովրդական կուսակցություն 1, 3, 38, 150, 285, 323

Ժողովրդավարություն /ժողովրդավարական/ 9, 10, 17, 29, 32, 33, 43, 50, 101, 129, 130, 132, 140, 162, 219, 220, 225, 266, 282, 283, 284, 290, 307, 315, 318, 322, 345, 352, 353, 355, 362, 366, 367, 369

Ինտեգրացիա 34, 35, 57, 66, 108, 129, 133, 289, 302, 303, 304, 307-311, 325, 337

Ինքնություն 4, 28, 33, 57, 125, 144, 151, 299, 313, 314, 326, 329

Իրավական պետություն 13, 17, 23, 29, 33, 101, 225, 282, 287, 296, 315, 345, 352, 353, 362, 367, 369

Լիարժեք զբաղվածություն 29, 161, 170

Լրատվամիջոցներ 133, 134, 274, 283, 286, 289, 309, 349, 353

Խաղաղություն 20, 26, 33, 49, 129, 142, 276, 316, 317, 338, 341, 343, 357, 361

Խնամք 63, 81, 186, 193, 206

Խնամքի ապահովագրություն տես՝ Սոցիալական ապահովություն/ ապահովագրություն

Ծերության ապահովագրություն տես՝ Սոցիալական ապահովություն/ ապահովագրություն

Ծնողներ 62, 63, 68, 69, 71, 78, 81, 85, 86, 87, 88, 97, 108, 197, 286

Կանխարգելում 63, 185, 186, 198, 204, 272

Կենդանիների պաշտպանություն 254, 260

Կենսաբժշկություն 40, 233

Կենսաթոշակային ապահովագրություն տես՝ Սոցիալական ապահովություն/ ապահովագրություն

Կլիմայի պաշտպանություն 57, 235, 237, 239, 241, 242, 244, 246, 248, 249, 252

Կյանքի պաշտպանություն 5, 26, 231, 232, 234

Կրթական համակարգ 96, 99, 103, 106, 115

Կրթություն 29, 48, 87, 90, 92, 94, 95, 96, 97, 99, 101, 102, 103, 106, 107, 108, 115, 130, 132, 171, 206, 221, 235, 309, 311, 354

Կրթություն. միջնակարգ մասնագիտական կրթություն 61, 92, 95, 100, 102, 103, 108, 112, 113, 114, 124, 163, 331

Համալսարաններ տես՝ Բարձրագույն ուսումնական հաստատություններ

Համայնքային քաղաքականություն 14, 127, 165, 211, 216, 228, 238, 267, 299, 300, 301, 309, 318, 325

Համաշխարհայնացում 38, 42, 43, 45, 135, 136, 139, 150, 159, 160, 166, 223, 299, 302, 314, 315, 316, 331, 338, 345

Համերաշխություն 18, 19, 20, 21, 22, 33, 55, 57, 58, 60, 67, 68, 74, 93, 138, 141, 142, 180, 181, 183, 217, 220, 232, 343, 346

Համերաշխության պակտ 213, 228

Հայրենասիրություն 33

Հայրենիք 4, 33, 129, 255, 295, 299, 304, 326, 327, 359

Հաշմանդամներ 105, 206, 207, 232

Հասարակական աշխատանք 63, 64, 104, 180, 266, 268, 272, 269

Հարկեր 61, 85, 121, 163, 208, 212, 214, 216, 217, 218, 237, 251, 270

Հետազոտություն 40, 109, 110, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 156, 218, 226, 233, 235, 237, 238, 249, 263, 331

Հիմնարար արժեքներ 10, 58, 217, 307

Հնարավորություններ (շանսեր) 13, 24, 28, 29, 30, 38, 43, 45, 47, 48, 55, 56, 57, 58, 81, 90, 92, 112, 115, 117, 150, 161, 163, 171, 172, 177, 180, 181, 199, 223, 225, 233, 235, 246, 249, 262, 303, 312, 331

Հնարավորությունների հասարակություն 24, 28, 48, 55, 58

Ձայնի, որոշում կայացնելու իրավունք 146, 173, 299

Ձեռնարկատերեր 122, 144, 145, 147, 148, 150, 157, 208, 226, 259, 270

Մարդու արժանապատվություն 2, 5, 6, 9, 13, 16, 23, 34, 40, 68, 91, 117, 139, 140, 146, 231, 233, 275, 287

Մարդու իդեալը/ մարդն ըստ ՔԴՄ-ի պատկերացման 5-9, 55, 306, 320, 365

Մարդու իրավունքներ 10, 26, 43, 132, 150, 152, 307, 343, 362, 367

Միջին ձեռնարկատիրություն 123, 163, 226, 235

Մշակույթ 34, 35, 36, 37, 50, 56, 56, 57, 75, 125-134, 219, 226, 255, 280, 306, 307, 309, 313, 323, 326, 343, 347

Մրցակցություն 29, 42, 44, 45, 47, 99, 110, 112, 116, 124, 133, 141, 143, 149, 151, 153, 154, 155, 158, 163, 165, 166, 167, 178, 183, 187, 213, 223, 225, 226, 227, 233, 250, 260, 331, 333, 348

ՆԱՏՕ 340, 349, 358

Ներգաղթ 304, 309

Նոր հողեր /նախկին դեմոկրատական հողեր/ 4, 219, 220, 221, 222, 224-228, 230

Նոր պարտքերի գոյացման արգելք 210

Շարժունակություն, տեղից տեղ տեղափոխման հնարավորություններ 42, 99, 195, 251

Շրջակա միջավայր 38, 49, 57, 145, 234, 235, 236, 237, 238, 243, 245, 246, 251, 252, 253, 254, 257, 258, 260, 262, 333, 365

Շրջակա միջավայրի պաշտպանություն 235, 236, 237, 254

Շուկա 42, 44, 45, 47, 116, 119, 122, 138, 143, 150, 151, 153, 154, 155, 157, 158, 159, 163, 165, 166, 169, 250, 259, 260, 331, 338, 342

Ոստիկանություն 290, 293, 337

Պարտքեր տես՝ Բյուջե

Պետական հոգածության խնդիրներ 14, 273

Սահմանադրություն 3, 34, 70, 210, 279, 282, 361

Սեռային իրավահավասարություն 30, 307

Սերունդներ 8, 22, 29, 41, 57, 59, 60, 61, 69, 71, 76, 145, 170, 191, 234, 239, 255, 273, 300

Սեփականություն 13, 143, 156, 174, 258, 289

Սոցիալական 4, 13, 18, 20, 25, 26, 33, 43, 45, 53, 55, 57, 59, 60, 63, 66, 67, 71, 75, 76, 87, 92, 93, 101, 104, 106, 108, 135, 139, 144, 146, 147, 148, 151, 152, 159, 161, 179, 180, 181, 182, 183, 188, 197, 208, 209, 234, 279, 298

Սոցիալական ապահովություն/ապահովագրություն 20, 141, 188, 194

– գործազրկության 200, 201, 202, 203

– դժբախտ պատահարների 204

– խնամքի 196, 197, 198, 199

– կենսաթոշակային 86, 189, 190, 192

Սոցիալական պետություն 3, 13, 20, 33, 38, 182, 298

Սոցիալ-շուկայական տնտեսակարգ 3, 29, 33, 55, 57, 135, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 160, 162, 170, 225, 237, 294, 333

Սպորտ 104, 272, 273, 274, 309

Սուբսիդիարություն 14, 21, 31, 67, 161, 183, 297, 315, 319

Վերամիավորում 4, 33, 129, 219, 350

Տարեցներ 52, 59, 61, 62, 63, 64, 65, 171, 176, 190, 194, 195

Տարիֆային անկախություն 146, 173

Տարիֆային կողմեր /աշխատանքային հարաբերության կողմեր/ տես՝ Գործատուներ և Արհմիություններ

Տեղեկացված հանրություն/հասարա-կություն 38, 46, 57, 95, 109

Տնտեսական խոշոր կենտրոն 109, 148, 163, 164, 168, 208

Տնտեսա- և հասարակարգային քաղաքականություն 143, 366

Քաղաքացի /քաղաքացիական/ 14, 15, 21, 26, 29, 31, 34, 78, 128, 167, 181, 225, 276, 285, 291, 293, 296, 307, 314, 320

Քաղաքացիական ծառայություն 225, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 353

Քաղաքացիական հասարակություն 225, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 353

Քաղաքացիների իրավունքներ տես՝ Մարդու իրավունքներ

Քրիստոնեական 1, 2, 3, 4, 5, 6, 9, 10, 27, 28, 39, 55, 61, 68, 101, 125, 146, 150, 232, 234, 279, 281, 306, 314, 365

Ֆինանսներ 87, 121, 163, 164, 168, 183, 185, 187, 188, 199, 203, 208, 209, 210, 212, 213, 214, 216, 228, 319

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հիմնարար սկզբունքներ Գերմանիայի համար

Հիմնարար սկզբունքների ծրագիր՝
հաստատված
21-րդ կուսակցական համագումարի կողմից
Հաննովեր, 2007 թ., դեկտեմբեր, 3 – 4

ՔԴՄ

Չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 11 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչության տպարանում